Մասիս ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

35ՐԴ. ՏԱՐԻ ԹԻՒ 32 (1732) ՇԱԲԱԹ, ՍԵՊՏԵՄԲԵՐ 5, 2015
VOLUME 35, NO. 32 (1732) SATURDAY, SEPTEMBER 5, 2015

Պաշտօնաթերթ՝
Ս. Դ. Հնչակեան Կուսակցութեան
Արեւմտեան Ամերիկայի

MASSIS Weekly
1060 N. Allen Ave. Suite 101
Pasadena, California 91104

Էդուարդ Նալբանդեան. «Հայոց Ցեղասպանութեան Ճանաչման Անշրջելի Գործընթացն Առաջ է Ընթանում»

Հայաստանի արտաքին գործոց նախարար Էդուարդ Նալբանդեան Սեպտեմբերի 1-ին այցելեց Երեւանի պետական համալսարան, ուր աւանդոյթի համաձայն առաջին դասախօսութիւնը կարդաց ԵՊՀ միջազգային յարաբերութիւններու ֆակուլտետէն ներս:

Էդուարդ Նալբանդեան ներկաներուն շնորհաւորեց ուսումնական տարուայ մեկնարկին առթիւ ու յայտարարեց, որ այսօր հայ դիւանագէտներու զգալի մասը Միջազգային Յարաբերութիւններու ֆակուլտետի շրջանաւարտներ են, որոնք ՀՀ ԱԳՆ դիւանագիտական դպրոցի միջոցով կը համալրեն Հայաստանի դիւանագիտական ծառայութեան շարքերը:

Իր ելոյթին մէջ ու հարց ու պատասխանի ընթացքին Էդուարդ Նալբանդեան ներկայացուց միջազգային եւ տարածաշրջանային շարք մը հիմնախնդիրները եւ անոնց լուծումներուն վերաբերեալ Հայաստանի մօտեցումները:

Անդրադառնալով այս տարի նշուող Հայոց Ցեղասպանութեան 100-րդ տարելիցին՝ Էդուարդ Նալբանտեան ըսաւ.- «Այս տարին առանձնայատուկ է մեզ համար, քանի որ ողջ աշխարհում յիշատակւում է 20-րդ դարի առաջին ցեղասպանութեան՝ Հայոց ցեղասպանութեան 100-րդ տարելիցը: Այդ կապակցութեամբ Հանրապետութեան Նախագահի յանձնարարականների կատարման նպատակով արտաքին գործերի նախարարութիւնը, մեր դիւանագէտները տարել են հետեւողական աշխատանք:

«Մենք կարեւորում ենք Հայոց ցեղասպանութեան ճանաչումը եւ դատապարտումը աշխարհատարածում հայութեան համար պատմական արդարութեան վերականգնման, ապագայ ցեղասպանութիւնների կանխարգելման ու ժխտողականութեան դէմ պայքարի տեսանկիւնից, ինչպէս նաեւ մեր տարածաշրջանում խաղաղութեան եւ կայունութեան հաստատման, փոխադարձ վստահութեան, բարիդրացիական յարաբերութիւնների կառուցման մթնոլորտի ձեւաւորման

Շար.ը էջ 4

ԼՂՀ Հռչակման 24-րդ Տարեդարձին Նուիրուած միջոցառումներ Ստեփանակերտի եւ Շուշիի Մէջ

Հայաստանի եւ Արցախի նախագահները ծաղկեպսակ զետեղելու արարողութեան ընթացքին

Արցախի անկախութեան 24-րդ տարեդարձին առթիւ Հայաստանի եւ Արցախի հանրապետութիւններու նախագահները Սեպտեմբեր 2-ին այցելեցին Ստեփանակերտի «Եղբայրական» գերեզման՝ յարգելով յիշատակը Արցախի անկախութեան ճանապարհին ինկած նահատակներուն:

ՀՀ նախագահ Սերժ Սարգսեան եւ ԼՂՀ նախագահ Բակօ Սահակեան, ընկերակցութեամբ Արցախի եւ Հայաստանի պատուիրակութիւններուն, «Վերածնունդ» հրապարակէն ուղղուեցան «Եղբայրական» գերեզման: Նախագահները ծաղկեպսակ զետեղեցին նահատակներու յիշատակին:

Արարողութեան մասնակից եղաւ ԼՂՀ նախկին նախագահ Արկադի Ղուկասեան, ԼՂՀ վարչապետ Արայիկ Յարութիւնեան, Արցախի թեմի առաջնորդ Պարգեւ Արք. Մարտիրոսեան եւ քաղաքական գործիչներ Հայաստանէն ու Արցախէն:

Ապա, զոյգ նախագահները իրենց շքախումբերով մեկնեցան Շուշի, ուր բացումը կատարուեցաւ Արցախի գիւղատնտեսական համալսարանի եւ «Եզնիկ Մոզեան» արհեստագիտական հիմնարկին:

Հայաստանի Վարչապետի եւ Կառավարութեան Անդամի Միջեւ Հակասութիւններ՝ Տնտեսական Աճի Տուեալներուն Շուրջ

«Վարչապետի ըսածներուն կառավարութեան ոեւէ անդամ չի կրնար հակադրուիլ», ըսած է Հայաստանի վարչապետ Յովիկ Աբրահամեան, արձագանգելով երկրի տնտեսական վիճակի վերաբերեալ իր եւ ֆինանսներու նախարարի վերջին օրերու յայտարարութիւնների միջեւ եղող հակասութիւններուն:

Կառավարութեան վերջին նիստի ընթացքին, Յովիկ Աբրահամեան յայտարարած էր, որ առաջին կիսամեակին Հայաստանի տնտեսութիւնը արձանագրած է 4.4 տոկոսի տնտեսական աճ:

Մինչդեռ Ֆինանսներու նախարար Գագիկ Խաչատրեան, որ ներկայ էր կառավարութեան այդ նիստին, յաջորդ օրն իսկ Ազգային Ժողովի ֆինանսավարկային եւ բիւջետային հարցերու մշտական յանձնաժողովի նիստին յայտարարեց, որ տնտեսութեան գրեթէ բոլոր ճիւղերուն մէջ ծաւալներու անկում կայ:

«Բիւջէի կատարողականի տեսանկիւնից եւ առկայ իրողութիւններից պոզիտիւ (դրական Մ.) սիգնալներ (նշաններ Մ.) մեզ չեն գալիս: Անկախ վիճակագրական տուեալներից, տնտեսութեան ճիւղերի զարգացումները մտահոգիչ են: Գրեթէ բոլոր ճիւղերում ծաւալների անկում ունենք: Անորոշութիւնները շատ-շատ են, չգիտենք՝ ո՞ր ուղղութեամբ կը զարգանայ տնտեսութիւնը: Կառավարութիւնում հարց ենք բարձրացրել, թէ ի՞նչ ուղղութեամբ պէտք է գնանք՝ խնայողութի՞ւն, պահանջակի աւելացո՞ւմ... ամէն օր քննարկումներ են կատարւում»,- ըսած է Խաչատրեան:

Մէկ կողմէ վարչապետը կը խօսի տնտեսական աճի մասին, իսկ միւս կողմէ նոյն կառավարութենէն ներս տնտեսական ոլորտի պատասխանատուներէն մէկը կը յայտարարէ, թէ տնտեսութեան գրեթէ բոլոր ճիւղերուն մէջ անկում է: Այս կապակցութեամբ «Ազատութիւն» ռատիոկայանի տուած հարցին Վարչապետը ըսած է.- «Ոչ մի հակասութիւն չկայ, վարչապետի ասածին կառավարութեան որեւէ անդամ չի կարող հակադրուել»:

Միւս կողմէ սակայն, անկախ տնտեսագէտներ եւս զգուշաւորութեամբ կը մօտենան Յովիկ Աբրահամեանի ներկայացուցած պաշտօնական թիւերուն, քանի որ տնտեսութեան վիճակը բնութագրող շարք մը առանցքային ցուցանիշներ այլ բան կը վկայեն:

«Հայկական ժամանակ» թերթի տնտեսական մեկնաբան Հայկ Գէորգեանը հարց կը բարձրացնէ, թէ ինչպէ՞ս կրնայ երկրի ներքին ու արտաքին առեւտուրը կրճատուիլ, հարկերը աւելի քիչ հաւաքուին, գործազրկութիւնը աճի, բայց տնտեսութիւնը աճ արձանագրէ եւ օտար գործարարներն ալ խուսափին ներդրում կատարել աճող տնտեսութեան մէջ:

«Տնտեսական աճը էնպէս չէ, որ ուղղակի մի ցուցանիշ հրապարակւում է եւ դրանով ամէն ինչ պարզ է լինում: Դրանք համեմւում են բազմաթիւ այլ ցուցանիշներով, որոնցից կարելի է հասկանալ մօտաւորապէս ներկայացուած տնտեսական աճը որքանով է հաւաստի: Իմ կարծիքով՝ Ազգային Վիճակագրութեան Ծառայութեան ներկայացուցած վերջին ցուցանիշները չափազանց անհաւաստի են եւ որեւէ վստահութիւն չեն ներշնչում»,- կ'ըսէ տնտեսական մեկնաբան Հայկ Գէորգեան:

ՍԴՀԿ Պատուիրակութեան Հանդիպումը ՀՀ Պաշտպանութեան Նախարար Սէյրան Օհանեանի Հետ

Սեպտեմբեր 15-ին, Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութեան Կեդրոնական Վարչութեան եւ Հայաստանի շրջանի վարչութեան միատեղ պատուիրակութիւնը, Կենտրոնական Վարչութեան ատենապետ Յակոբ Տիգրանեանի գլխաւորութեամբ, հանդիպում ունեցաւ Հայաստանի Հանրապետութեան պաշտպանութեան նախարար Սէյրան Օհանեանի հետ: Հանդիպման ներկայ էր նաեւ ՀՀ Պաշտպանութեան Նախարարի առաջին տեղակալ Դաւիթ Տոնոեանը:

Հանդիպման ընթացքին նախարար Սէյրան Օհանեան հաստատեց Եռաբլուրի պանթէոնէն ներս Հնչակեան Կուսակցութեան նահատակներու յիշատակը յաւերժացնող կոթողի տեղադրման համար տարածքի տրամադրումը:

Իր հերթին, Հնչակեան Կուսակցութեան պատուիրակութիւնը շնորհակալութիւն յայտնեց պաշտպանութեան նախարար Սէյրան Օհանեանին, Եռաբլուրի մէջ հողյատկացնելու իրենց դիմումին ընդառաջելուն համար:

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՄԱՄՈՒԼ

Հրմշտոց նախագահականի շէմին

ՀԱՅԿԱԶՆ ՂԱՀՐԻՑԵԱՆ

Սերժ Սարգսեանի հանդիպումները կուսակցութիւնների հետ ներկայիս քննարկուող թեմաներից է: Դրանց առիթը Սահմանադրութեան փոփոխութիւններն են, սակայն շատերն են իրաւամբ նկատել, որ դա ընդամէնը նախընտրական առեւտուր է:

Սերժ Սարգսեանը փորձում է փոխել կառավարման ձեւը եւ համակարգը բերել նոր՝ «սահմանադրական» պայմանաւորուածութեան, ինչը ենթադրում է քաղաքական ու տնտեսական քվոտաների վերաբաշխում:

Սահմանադրական գործընթացին զուգահեռ այդ վերաբաշխումն արդէն սկսուել է: Մէկը միւսի ետեւից սնանկանում են գործարար-պաշտօնեաներ: Հաշուի առնելով, որ Հայաստանում չկայ բիզնես որպէս այդպիսին, այն սերտաճած է քաղաքական իշխանութեանը եւ կարգաւորւում է անօրինական քվոտաների ու արտօնութիւնների միջոցով, սահմանադրական գործընթացը ստանում է լիովին այլ բնոյթ:

Կուսակցութիւնները Հայաստանում վաղուց վեր են ածուել այս համակարգի քաղաքական ցուցանակների եւ օգտագործուել են համակարգի անօրինական գործունէութիւնը «լեգիտիմացնելու» համար:

Կուսակցութիւնների այս դերն օգտագործւում է նաեւ ներկայում, սահմանադրական գործընթացը, այսինքն՝ համակարգի նոր պայմանաւորուածութիւնների հաստատումը «լեգիտիմացնելու» համար:

Հայկական կուսակցութիւնները պատկանում են կամ օլիգարխներին, կամ իրենցից ներկայացնում են «կոլեկտիւ օլիգարխ», որոնց մոտիվացիան տնտեսական ու քաղաքական քվոտաներ ստանալն է: Դրանք նաեւ ծառայում են այդ անօրինական քվոտաներն ու սեփականութիւնը պաշտպանելու միջոց: Այսինքն, կուսակցութիւնն ի սպաս է դրւում համակարգին, որի դիմաց ստացւում են քվոտաներ:

Սերժ Սարգսեանի հանդիպումները կուսակցութիւնների հետ այլ բովանդակութիւն չունեն: Սերժ Սարգսեանին չեն հետաքրքրում ոչ կուսակցութիւնները, ոչ էլ նրանց տեսակէտները: Աւելին, ասում են նա խորն արգահատանքով է վերաբերւում նրանց:

«Թրանսփարենսի ինթերնեյշնլ» հակակոռուպցիոն կենտրոնի փոխտնօրէն Սոնա Այվազեանը Lragir.am-ին տուած հարցազրոյցում ասում է, որ կուսակցութիւնը ստեղծւում է նրա համար, որ գայ իշխանութեան, ինչ-որ բան փոխի:

«Եթէ կուսակցութիւնն իր՝ ապագայ իշխանութեան գալու հնարաւորութիւնը զիջում է ՀՀԿ-ի միակուսակցական համակարգին, նշանակում է՝ ինքը պարզապէս կամ գործարքի է գնում, կամ կեղծ կուսակցութիւն է, կամ իրեն շանտաժ են արել: Այս դէպքում ստացւում է, որ նրանք բաւարարուելու են իրենց ոչ իշխանական կարգավիճակով՝ փոխարէնն ի՞նչ ստանալով: Մի քանի աթոռ, կամ տնտեսական ապահովուածութիւն»:

Հայաստանում ներկայում փող աշխատելու միակ ձեւը մնացել է «քաղաքականութիւնը», քանի որ միւս բոլոր հնարաւորութիւնները ենթարկել են դրան:

Կուսակցութիւնները երկու ճանապարհ ունեն՝ առաջինը՝ ձգտեն իշխանութեան կամ առնուազն որոշումների կայացմանը լիարժէք մասնակցութեան, ինչը ենթադրում է պատասխանատուութեան ստանձնում: Երկրորդ ճանապարհը նախագահականի առաջ իրար հրմշտելն է քվոտաներ ստանալու համար՝ սեփական իրաւունքներն ու պատասխանատուութիւնը համակարգին զիջելու դիմաց: Ընդ որում, այստեղ խնդիրն ամենեւին էլ այոն կամ ոչ-ը չէն, այլ քաղաքականութեան բովանդակութիւնը:

Ի՞նչն են ընտրում հայկական կուսակցութիւնները:

«ԼՐԱԳԻՐ»

Բաժանիր, որ խլես

ՑՈՎՀԱՆ ՄԱՆԴԱԿՈՒՆԻ

Եթէ նախքան սահմանադրական փոփոխութիւնները իշխանութեան ներսում հարցն այն էր, թէ ինչպէս են որոշելու նախագահի յաջորդ թեկնածուին, ապա սահմանադրական փոփոխութիւններից յետոյ հարցն այլ կը լինի, կամ արդէն հարց չի լինի, այլ հարցեր, որովհետեւ ինչպէս պէտք է որոշեն վարչապետի թեկնածուին, Աժ նախագահի թեկնածուին, նաեւ, իհարկէ, նախագահի թեկնածուին՝ թէկուզ աւելի նշանակովի նախագահի, սակայն այնուհանդերձ բաւական լիազօրութիւններով, ինչպէս են որոշելու առնուազն խաղաղ պայմաններում բանակի ղեկավար պաշտպանութեան նախարարի թեկնածուին:

Եւ ինչքան էլ հաւասարապէս բաժանուեն իշխանական լիազօրութիւնները, ինչքան էլ, պատկերաւոր ասած, մէկ նախագահի պաշտօնը բաժանեն մի քանի տեղ, միեւնոյն է, շահերը չեն կանգնում, յատկապէս փոթորկուող աշխարհում, այն էլ՝ փոթորկուող տնտեսական ճգնաժամի պայմաններում

Այս բոլոր հարցերը կան նաեւ հիմա, այսինքն՝ գործող սահմանադրութեան դէպքում, եւ նախագահի թեկնածուին որոշելուց յետոյ, միեւնոյն է, պէտք է նաեւ մնացեալ բոլոր թուարկած թեկնածուներին էլ որոշէին: Սակայն նոր նախագծով, փոփոխութիւնների դէպքում, այդ պաշտօնների կշիռը, լիազօրութիւնները, քաղաքական ազդեցութիւնը էականօրէն մեծանում է, եւ ուրեմն արդէն պայքարը դրա համար շատ աւելի կոշտ կը լինի իշխանութեան տարբեր բեւեռների միջեւ:

Միւս կողմից, սակայն, շատ հաւանական է, որ շատ բեւեռներն աւելի հեշտ բաժանեն, այսինքն՝ «սա՝ ինձ, սա՝ քեզ, սա՝ Օստապ Իբրահիմովիչին» տարբերակով, եւ բոլորը գոհ կը լինեն, կամ մեծ մասը գոհ կը լինի: Սակայն իշխանութիւնն ինքնին այնպիսի բան է, որ տեղում չի մնում եւ պահանջում է կա՛մ անընդհատ աւելացում, կամ էլ աւելանում են այն կորցնելու ռիսկերը: Եւ ինչքան էլ հաւասարապէս բաժանուեն իշխանական լիազօրութիւնները, ինչքան էլ, պատկերաւոր ասած, մէկ նախագահի պաշտօնը բաժանեն մի քանի տեղ, միեւնոյն է, շահերը չեն կանգնում, յատկապէս փոթորկուող աշխարհում, այն էլ՝ փոթորկուող տնտեսութեան, տնտեսական ճգնաժամի պայմաններում, եւ սա նշանակում է, որ իշխանական բեւեռների պայքարը բաժանման արդիւնքում ոչ թէ կը դադարի, այլ ըստ էութեան կը տեղափոխուի արդէն կառավարման համակարգ:

Այսինքն՝ եթէ մինչեւ այսօր այդ պայքարը ստուերային էր՝ կառավարման հիերարխիայում մի իրավիճակ էր, իսկ իշխանական համակարգի ներքին յարաբերութիւններում՝ բոլորովին այլ, ապա նոր Սահմանադրութեան ընդունման դէպքում ներքին յարաբերութիւնների բովանդակութիւնը արդէն կ՛արտացոլուի նաեւ կառավարման համակարգում: Իսկ դատելով Հայաստանի իշխանական «էլիտայի» բնոյթից եւ որակներից, որոնցում առաջնային նշանակութեան արժէքը սեփական անձը, ընտանիքն ու կլանն է, մեր պետական կառավարման համակարգում, այսպէս ասած, սահմանադրական կարգով է այլեւս տեղի ունենալու միջկլանային «ռազբորկան», որի պատճառները, կրկնում ենք, շատ խորն են եւ ըստ էութեան նոյնիսկ այսօր արդէն կախուած չեն այլեւս իշխանական համակարգից, այսինքն՝ ենթակայ չեն իշխանական համակարգին:

Սրանում է իրավիճակի պարադոքսը, որը նաեւ ակնյայտ է համակարգի աւելի ու աւելի շատ շրջանակների համար: Նրանք պէտք է խորքային խնդիրները լուծեն կա՛մ միմեանց զոհաբերելով, կա՛մ զոհաբերելով ողջ համակարգը եւ հեռանալով:

Բնական է, որ հեռանալ ոչ ոք չի ուզում, իսկ քանի որ առկայ խնդիրները խորքային առումով ներկայիս «էլիտայի» համար ուրիշ որեւէ լուծում չունեն եւ այդ կամ-կամ-ի շրջանակում են, ակնյայտ է դառնում, որ Հայաստանում նոր Սահմանադրութեամբ սկսուելու է ներիշխանական «ռազբորկաների» նոր փուլը, եւ բաժանելով այսօր լծակները տարբեր բեւեռների միջեւ՝ համակարգը անմիջապէս յետոյ ձեռնամուխ է լինելու այդ լծակները դէ ֆակտո մէկ ձեռքում կենտրոնացնելու մրցավազքին:

«ԺԱՄԱՆԱԿ ԵՐԵՒԱՆ»

Եւ Ոչ Մի Սկզբունք

ԱՐՄԻՆԷ ՕՀԱՆԵԱՆ

Անշուշտ, Լիւդմիլա Սարգսեանը «ՀԱԿ-ի հետ պայմանագիր չի կնքել, որ միշտ պէտք է համակարծիք լինի նրա հետ», ոչ էլ նաիրա Զոհրաբեանն է երդուել, որ պէտք է հաւատարիմ մնալ նախկին բոցաշունչ ելոյթներին: Առաւել եւս Արարատ Զուրաբեանն ու Ալիկ Արզումանեանն էլ Սերժ Սարգսեանի նստավայր չայցելելու խոստումներ չեն տուել, ինչպէս Գագիկ Ծառուկեանը յաւերժ բարեգործութիւն անելու եւ քաղաքականութեան մէջ մնալու երդում չի տուել:

Մարդիկ, այո, կարող են տեսակէտ ու գործընկերներ փոխել, նոր ֆորմատներ ու համագործակցութեան ձեւաչափեր գտնել: Բայց մարդկութեան պատմութեան վաղեմի շրջանից մինչ օրս կան, գործում են որոշ չափանիշներ, որոնք ժամանակի ու տարածութեան մէջ փոփոխութեան չեն ենթարկւում եւ յարգւում են բոլոր հասարակութիւններում: Եթէ մեր քաղաքական գործիչները չեն լսել դրանց մասին կամ մոռացել են՝ յիշեցնենք: Դրանք սկզբունքներին, գաղափարներին հաւատարմութեան: Ընկերութեանը, մերձաւորներին չդաւաճանելու: Ընտրողներին, համակիրներին չխաբելու, չմոլորեցնելու: Իշխանական խայծերը կուլ չտալու, չկաշառուելու, չծախուելու չափանիշներն են, որոնք պարտադիր են քաղաքականութեամբ զբաղուողների, իրենց քաղաքական գործիչ հռչակածների համար:

Երբ քաղաքական ուժը մի օր յեղափոխութեան է կոչում, յայտարարում, որ «այս իշխանութեան հետ մատաղ ուտելու էլ չի գնայ», իսկ յաջորդ օրը նախագահականում շարք է կազմում եւ երջանկութիւնից հալուող դէմքով սեղմում «բռնակալի, երկիրը կործանողի» ձեռքը, հասկանում ես, որ քաղաքական դաշտն աչքիդ առաջ ամայանում է: Հասկանում ես, որ հաւատն ես կորցնում քաղաքականութեան եւ քաղաքական կոչուող ամէն ինչի հանդէպ: Հասկանում ես, որ ելքը յաջորդ ընտրութիւններին չմասնակցելն է, քանզի, որպէս ընտրող, զրկուել ես ընտրութեան իրաւունքից:

«ՀՐԱՊԱՐԱԿ»

ՄԱՍԻՍ
ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ՀՆՉԱԿԵԱՆ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի

ԽՄԲԱԳԻՐ՝
ՏՕՔԹ. ԱՐՇԱԿ ԳԱԶԱՆՃԵԱՆ

MASSIS Weekly
Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
E:Mail: massis2@earthlink.net
http://www.massisweekly.com

(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August

ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA $50.00, $100.00 (First Class)
Canada $125.00 (Air Mail)
Overseas $250.00 (Air Mail).
All payments must be made in US funds & Drawn on US banks.

Periodicals Postage Paid at Pasadena CA.
Please Send Address Change To
MASSIS WEEKLY

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

«Բարգաւաճ Հայաստանը» Չի Միանայ «Ոչ»-ի Արշաւին

Նախագահին առընթէր յանձնաժողովի անդամների հետ շուրջ երեք ժամ փակ դռների հետեւում բանակցութիւններից յետոյ «Բարգաւաճ Հայաստանի» առաջնորդ Նաիրա Զոհրաբեանը տպաւորութիւն էր ստացել, թէ իշխանութիւնները մտադիր են խորհրդարանական ընտրութիւնների երկրորդ փուլի մասին աղմկայարոյց դրոյթը հանել նախագծից՝ ամրագրելով այն Ընտրական օրէնսգրքում, ինչպէս Վենետիկի յանձնաժողովն էր առաջարկել:

«Համենայնդէպս, նախնական տպաւորութիւնը այնպիսին է, որ երկրորդ փուլ, կայուն մեծամասնութիւն ձեւակերպումը կը հանուի եւ կը բերուի Ընտրական օրէնսգիրք: Թէ ընտրական օրէնսգրքում ինչ մոդիֆիկացիա կ՚ընտրուի այդ ձեւակերպման համար, մենք նաեւ կ՚աշխատենք Ընտրական օրէնսգրքի քննարկումների ժամանակ, որը, կարծում եմ, կը լինի դարնանը»,- ասաց ԲՀԿ-ի ղեկավարը:

ԲՀԿ-ն դէմ է երկրորդ փուլով կայուն մեծամասնութիւն ապահովող յօդուածին, բայց նախկինի պէս Սերժ Սարգսեանի այս նախաձեռնութիւնն այլեւս չի համարում վերարտադրութեան, իշխանութիւնը յաւերժացնելու փորձ: Հաւատում են Սարգսեանի հաւաստիացումներին, թէ չի յաւակնում նախագահի, վարչապետի ու խորհրդարանի խօսնակի աթոռների:

«Անձի խնդիրը կարծես թէ դուրս է գալիս օրակարգից: Երբ խօսում էինք կուսակցութեան վերարտադրութեան մասին, մենք խօսում էինք այն մեթոդներով վերարտադրութեան մասին, ինչ մեթոդներով բոլոր ժամանակների բոլոր իշխանական կուսակցութիւնները Հայաստանում վերարտադրուել են: Մենք ասում ենք՝ մի պայքարի այն անմաքուր մեթոդներով, ինչով մինթէ հիմա պայքարել ես: Սա է խնդիրը: Ինչպէս մենք պտտւում են, գալիս, կանգնում ենք քաղաքական կամքի խնդրին»:

«Բարգաւաճ Հայաստանի» առաջնորդ Նաիրա Զոհրաբեան

Ընդամէնը ամիսներ առաջ բովանդակային քննարկումները կտրականապէս մերժող «Բարգաւաճ Հայաստանը» երեք ժամերի ընթացքում չի հասցրել ներկայացնել բոլոր առաջարկները, դիտողութիւնները, առաջիկայում էլի հանդիպումներ են ակնկալում: Արդէն սակայն կարող են ասել՝ «ոչ»-ի արշաւին չեն միանալու:

«Այն ձեւակերպումներով, այն մեսիջներով, ինչը յայտարարում են «ոչի» կարծես թէ դեռեւս միակ հաւակնորդ ՀԱԿ-ի մեր յարգարժան գործընկերները... այո, մենք յայտարարել ենք, որ ո՛չ, բայց քուէարկութեան ինչ կերպ կ՚ընտրի ԲՀԿ-ն եւ ինչ դաշտում կը լինի այս պահին, ես կը դժուարանամ ասել: Կարծում եմ՝ կուսակցութիւնում որդեգրել են շատ ճիշդ աշխատաոճ՝ առաջնորդուել բացառապէս եւ միայն մեծամասնութեան որոշմամբ»,- ասաց Զոհրաբեանը:

«Գագիկ Ծառուկեանը Իշխանութիւններին Չի Խանգարել». Գալուստ Սահակեան

ԲՀԿ-ն եւ Գագիկ Ծառուկեանը իշխանութիւններին չեն խանգարել: Այս մասին ասաց լրագրողների հետ զրոյցող ԱԺ նախագահ Գալուստ Սահակեանը՝ պատասխանելով լրագրողի հարցին, թէ արդեօք ԲՀԿ նախկին առաջնորդ Գագիկ Ծառուկեանին քաղաքականութիւնից հեռացրին, որովհետեւ նա խանգարում էր իշխանութիւններին:

«Բարգաւաճ Հայաստանը, Գագիկ Ծառուկեանը, իհարկէ, մեզ չէին խանգարում, ուղղակի քաղաքական նոր իրավիճակ է այժմ ստեղծուել: Քաղաքականութիւնն էլ է ժամանակի ընթացքում փոխւում»,-ասաց Գալուստ Սահակեանը:

ԱԺ նախագահը նշեց, որ դեռեւս չգիտի, թէ «Բարգաւաճ Հայաստան» կուսակցութիւնն ինչ տեսակէտ ունի Սահմանադրական բարեփոխումների վերաբերեալ. «Հնարաւոր է, որ մի մասը կողմ լինի բարեփոխումներին, միւսը մասը՝ դէմ, կ՚երեւայ քուէարկութեան ժամանակ, իմ կարծիքով կը լինեն կողմեր, դէմեր, նաեւ չմասնակցողներ»:

ԱԺ նախագահ Գալուստ Սահակեան

Յովիկ Աբրահամեանը Չի Բացառում Բարձր Պաշտօն Զբաղեցնելը՝ Սահմանադրական Բարեփոխումներից Յետոյ

Վարչապետ Յովիկ Աբրահամեանը չի բացառում, որ սահմանադրական բարեփոխումներից յետոյ կարող է զբաղեցնել վարչապետի պաշտօնը: Այս մասին Սեպտեմբերի 1-ին, լրագրողների հետ զրոյցում ասաց վարչապետը:

Ժողովուրդը պէտք է որոշի, եթէ խորհրդարանական մեծամասնութիւն ունենամ, ինչո՞ւ ոչ: Ինձ համար կարեւոր չի պաշտօնը, կարեւոր է, որ երկրի առջեւ ծառացած խնդիրներին տանք լուծում»,- ասաց վարչապետը՝ նշելով, որ սահմանադրական փոփոխութիւններից յետոյ ակնկալում է զբաղեցնել միայն բարձր պաշտօններ:

Յովիկ Աբրահամեանը նշեց, որ սահմանադրական փոփոխութիւնների վերաբերեալ ինքը ոչ մի մտահոգութիւն չունի:

«Քննարկել ենք, բազմաթիւ առաջարկութիւններ կան, որոնք քննարկելու ենք Ազգային ժողովի համապատասխան յանձնաժողովի հետ, փորձելու ենք գտնել լաւագոյն տարբերակը»,- ասաց վարչապետը՝ նշելով, որ իրենք այժմ փորձում են այս հարցի շուրջ քաղաքական լայն կոնսոլիդացիա ստեղծել:

«Հայկական Վերածնունդ» Միաւորումը Դէմ է Սահմանադրութեան Նախագծի Այս Տեսքին

«Հայկական Վերածնունդ» հասարակական-քաղաքական միաւորումը անընդունելի է համարում Սահմանադրական բարեփոխումների հրապարակուած նախագիծի ներկայիս տեքստը:

Նախօրէին տեղի է ունեցել «Հայկական Վերածնունդ» հասարակական-քաղաքական միաւորման կառավարման խորհրդի նիստը: Նիստում քննարկուել է ՀՀ-ում մեկնարկած Սահմանադրական բարեփոխումներին առնչուող հարցերի լայն շրջանակ: Կառավարման խորհրդի անդամները եւս մէկ անգամ վերահաստատել են «Հայկական Վերածնունդ» հասարակական-քաղաքական միաւորման մօտեցումները Սահմանադրական բարեփոխումների առնչութեամբ, որոնք հինգ սկզբունքային առաջարկութիւնների տեսքով պաշտօնապէս հրապարկուել է մամուլում:

«Հայկական Վերածնունդ» հասարակական քաղաքական միաւորումն իրեն մաս կազմող 110 քաղաքական կուսակցութիւնների եւ հասարակական կազմակերպութիւնների անունից յայտարարում է, որ Սահմանադրական բարեփոխումների հրապարակուած նախագիծը ներկայ տեսքով անընդունելի է եւ ենթակայ է լուրջ փոփոխութիւնների: Կարեւորելով ՀՀ նախագահի եւ Սահմանադրական բարեփոխումների մասնագիտական յանձնաժողովի պատրաստակամութիւնն ընդունելու միաւորման առաջարկները, եւս մէկ անգամ վերահաստատում են առաջարկութիւնների սկզբունքային բովանդակութիւնը:

«Հայկական Վերածնունդ» հասարակական-քաղաքական միաւորումն անընդունելի է համարում խորհրդարանական կառավարման մոդելի ներդրման քողի ներքոյ ամբողջ իշխանութիւնը մէկ անձին՝ վարչապետին տրամադրելու փորձերը, որոնք ենթադրում են ոչ թէ խորհրդարանական, այլ վարչապետական կառավարում, ինչն աւելի նման է ոչ թէ խորհրդարանական, այլ նախագահական կառավարմանը: Փաստօրէն «նախագահ» բառը փոխարինւում է «վարչապետ» բառով՝ առանց հակակշիռների եւ հաւասարակշռութեան մեխանիզմների սահմանման: Ահազանգելով իշխանութեան բալանաւորման համար անկատար մեխանիզմների առկայութեան առնչութեամբ՝ միաժամանակ մտահոգութիւն ենք յայտնում, որ 100 տոկոս համամասնական ընտրակարգ հռչակելով փորձ է արւում «Ընտրական օրէնսգրքում» ներառել մեծամասնական ընտրական համակարգի բաղադրիչները՝ դրանով իսկ վտանգելով այս փաստաթղթի կարեւորագոյն ձեռքբերումը՝ 100 տոկոս համամասնական ընտրակարգի ընդունումը:

«Երկփուլ Ընտրութիւնների Մասին Դրոյթն Արհեստական է». ՍԴ անդամ

Խորհրդարանական երկփուլ ընտրութիւնների մասին դրոյթն արհեստական է: Օգոստոսի 31-ին, լրագրողների հետ հանդիպմանը նման կարծիք յայտնեց Սահմանադրական դատարանի անդամ Կիմ Բալայեանը:

ՍԴ անդամի խօսքով՝ երկրորդ փուլի անցկացման անհրաժեշտութիւն այսօր չկայ:

«Բերում են օրինակներ, որոնք համոզիչ չեն: Իհարկէ, կայուն մեծամասնութիւն ստեղծելը շատ կարեւոր է, որ պետութիւնը ցնցումների մէջ չընկնի, բայց այսքան ժամանակ մենք ցնցումներ չենք ունեցել: Այնպէս որ, երկրորդ փուլն արհեստական է »,- ասաց նա:

«Եթէ մենք կառավարման խորհրդարանական համակարգի ենք անցնում, ապա Զինուած ուժերի հրամանատարը պէտք է լինի ԱԺ նախագահը, մինչդեռ նոր նախագծով ԶՈՒ հրամանատարութիւնն անցնում է գործադիր մարմնին: Խորը հետազօտութիւններ պէտք է կատարուեն, պէտք է մշակել աւելի ճկուն մեխանիզմ, քան ներկայացուած է այս տարբերակում»,- ասաց Կիմ Բալայեանը:

Յիշեցնենք, որ նախագծով՝ պատերազմական իրավիճակում ԶՈՒ գլխաւոր հրամանատար է դառնում Հանրապետութեան վարչապետը:

Արփինէ Յովհաննիսեանը արդարադատութեան նախարարի թեկնածուներից մէկն է

Վարչապետ Յովիկ Աբրահանեանը հաստատեց, որ հանրապետական պատգամաւոր Արփինէ Յովհաննիսեանը արդարադատութեան նախարարի թեկնածուներից մէկն է:

«Այո, Արփինէ Յովհաննիսեանը թեկնածուների մէջ է: Նախարարի պաշտօնակատար կայ՝ Արսէն Մկրտիչեանը, շատ գրագէտ, շատ պատրաստուած պաշտօնեայ է, եւ ես համոզուած եմ, որ առաջիկայ 10-15 օրուայ մէջ այդ հարցը կը լուծենք, եւ ընդհանուր առմամբ նախարարութեան աշխատանքը չի խաթարուի»:

Նախարարի նշանակման ձգձգումը վարչապետը բացատրեց իր եւ նախագահի արձակուրդով.- «Հիմա վերադարձել ենք, կը լուծենք այդ հարցը»:

Յատկանշական է, որ Արփինէ Յովհաննիսեանը մինչ այժմ հրապարակաւ չի խօսել իր՝ նախարարի թեկնածու լինելու մասին: Դեռ աւելին այսօր էլ պնդեց՝ իրեն նման առաջարկ չի արուել եւ կոռեկտ չի համարում մեկնաբանել վարչապետի մեկնաբանութիւնները:

ԼՈՒՐԵՐ

Չենգիզ Աքթար. «Էրդողանի Թուրքիան Դէպի Քաոս է Գնում»

Թուրքիայում խորհրդարանական ընտրութիւններից երեք ամիս անց երկիրը Էրդողանի ղեկավարութեամբ անկանխատեսելի իրավիճակում է յայտնուել, իսկ նրա առաջնորդին քննադատում են այն բանի համար, որ նա անում է ամէն բան միայն թէ մնայ իշխանութեան գլխին: Այս մասին «Էրդողանի Թուրքիան գնում է դէպի քաոս» վերնագրով յօդուածում գրում է վերլուծաբան Չենգիզ Աքթարը:

Վերլուծաբանի կարծիքով՝ Թուրքիայի նախագահի վերջին քայլերից շատերը հակասում են սահմանադրութեանը:

«Նրա վերջին հակասահմանադրական արարքը արտահերթ ընտրութիւններ նշանակելու յայտարարութիւնն էր, ինչը գերագոյն ընտրական խորհրդի առանձնաշնորհն է»,- գրում է Աքթարը՝ նշելով, որ նախագահը բազմիցս հասկացնել է տուել, որ չի ամաչում իր արարքից:

Ինչպէս ընդգծում է վերլուծաբանը, Թուրքիան շարժւում է դէպի անվերջանալի ընտրական գործընթացներ, մինչեւ որ հզօր առաջնորդի կուսակցութիւնը յաղթանակ չտանի կամ էլ արտահերթ ընտրութիւնները չլուծարուեն պատերազմական իրավիճակ յայտարարելու պատճառով:

Այսպիսով, այսպէս թէ այնպէս Էրդողանը փորձում է իշխանութեան գլխին մնալ՝ իր քաղաքական եւ անձնական ապագան ապահովելու համար:

«Այդ նպատակին հասնելու համար նա չի խուսափի ոչ մի միջոցից, այդ թւում՝ ամենամահացու եւ դէպի քաոս տանող միջոցներից»,- գրում է Աքթարը:

Քանի որ Էրդողանը չի կարող պատերազմ սկսել օտարերկրեայ պետութեան դէմ, նա ուղղակի կոնֆլիկտ է բորբոքում քրդերի հետ: Աքթամի կարծիքով՝ Էրդողանի վարչակազմը գնաց քրդերի դէմ պատերազմի, որպէսզի հաւաքի ազգայնականների ձայները եւ խորհրդարանում մեծամասնութիւն ձեւաւորի:

Սակայն նախքան Էրդողանի երազանքները կը փլուզուեն, Թուրքիան բախւում է աւելի լուրջ մարտահրաւէրների հետ՝ ակտիւների անկում, Մերձաւոր Արեւելքում, մասնաւորապէս Սիրիայում, քաղաքականութեան ձախողում, ինչպէս նաեւ ԻՊ-ի եւ Թուրքիայի միջեւ ոչ ֆորմալ կապերի առկայութեան մասին միջազգային հանրութեան շրջանում աճող կասկածներ:

Աքթարն ընդգծում է, որ Էրդողանը գնալով աւելի է հեռանում իրականութիւնից: Նա դարձել է «անձեռնմխելի եւ անպատասխանատու» մարդ, ով այնպիսի որոշումներ է կայացնում, որոնք երկիրը եւ տարածաշրջանը վտանգաւոր իրավիճակի մէջ են դնում: «Դա ոչ ոքի համար լաւ չէ: Դա նշանակում է քաոս Թուրքիայի համար եւ մեծ անկայութիւն՝ արդէն անպաշտպան տարածաշրջանի համար: Ընդհանուր առմամբ ներկայումս Էրդողանը խնդրի եւ ոչ մի դէպքում դրա լուծման մասն է»,- եզրափակում է հեղինակը:

Լաւրովը Յոյս Ունի, Որ Ղարաբաղեան Կարգաւորման Հարցում Առաջընթաց Կ'արձանագրուի

Պաշտօնական Մոսկուան յոյս ունի, որ առաջիկայում հնարաւոր կը լինի որոշակի առաջընթաց ապահովել Լեռնային Ղարաբաղի կարգաւորման գործում: Այս մասին Բաքւում յայտարարել է Ռուսաստանի արտաքին գործերի նախարար Սերգէյ Լաւրովը՝ Ատրպէյճանի նախագահ Իլհամ Ալիեւի հետ հանդիպման սկզբում:



Ռուսաստանի արտաքին գործերու նախարար Սերգէյ Լաւրով

«Ես շատ բարձր եմ գնահատում ձեզ հանդիպելու եւ երկկողմ յարաբերութիւնները, տարածաշրջանային խնդիրները, իհարկէ նաեւ Լեռնային Ղարաբաղի խնդիրը քննարկելու այս հնարաւորութիւնը: Ղարաբաղեան կարգաւորումն այն թեման է, որում մենք՝ ձեր ղեկավարութեամբ, Հայաստանի եւ Ռուսաստանի Դաշնութեան նախագահների, համանախագահ պետութիւնների ղեկավարութեամբ, փորձում ենք հանգել ընդհանուր յայտարարի: Յուսով եմ, որ այդ հարցում առաջընթաց կ'արձանագրուի»,- ասել է Լաւրովը՝ յատուկ ընդգծելով նաեւ, որ վերջին տարիներին Ատրպէյճանի եւ Ռուսաստանի թէ՛ քաղաքական, թէ՛ տնտեսական յարաբերութիւնները գնալով խորանում են:

«Մենք Անդրկովկասում եւ Կասպիական աւազանում ռազմավարական գործընկերներ ենք: Ընդհանուր առմամբ միջազգային յարաբերութիւններում առկայ սուր հարցերի մեծամասնութեան շուրջ մեր տեսակէտները համընկնում են: Իմ ատրպէյճանցի գործընկեր Էլմար Մամեդեարովի հետ մենք սերտօրէն քննարկում ենք ՄԱԿ-ում, ԵԱՀԿ-ում, Եւրոպայի Խորհրդում, մի շարք այլ միջազգային հարթակներում մեր համագործակցութեան թեման: Բարձր ենք գնահատում նաեւ միջխորհրդարանական համագործակցութեան զարգացումը: Մենք երախտապարտ ենք ատրպէյճանական կողմին Կասպիական նաւատորմիղի երեք ռազմանաւերի՝ Բաքու կատարած օգոստոսեան այցը հիանալի մակարդակով կազմակերպելու համար»,- նշել է Լաւրովը:

ՀՀ-ում Միջազգային Զբօսաշրջութիւնն Աճել է, Նուազել՝ Ներքին Զբօսաշրջութիւնը

2015թ. երկրորդ եռամսեակում հանրապետութիւն են ժամանել 256 հազ. 917 զբօսաշրջիկներ, կամ 2014թ.-ի նոյն ժամանակաշրջանի նկատմամբ ցուցանիշն աճել է 1.8%-ով: Միջազգային զբօսաշրջութեան այս ցուցանիշն հրապարակել է Ազգային վիճակագրական ծառայութիւնը:

Նոյն վիճակագրութեան համապատասխան՝ 2015թ. երկրորդ եռամսեակում զբօսաշրջութեան նպատակով հանրապետութիւնից մեկնել է 250 հազ. 326 մարդ կամ 2014թ. համապատասխան ժամանակաշրջանի նկատմամբ ցուցանիշն աճել է 0.3%-ով:

Ըստ հիւրանոցային տնտեսութեան օբիեկտներից ստացուած հաշուետուութիւնների տուեալների՝ 2015թ. երկրորդ եռամսեակում ՀՀmայցելած զբօսաշրջիկների 29.4%-ը բաժին է ընկել ԱՊՀ երկրներին, 29.5%-ը՝ ԵՄ երկրներին եւ 41.1%-ը՝ այլ երկրներին:

ԱՎԾ-ն հրապարակել է նաեւ ներքին զբօսաշրջութեան ցուցանիշները. ըստ այդմ 2015թ. Յունուարի-Յունիսին հանրապետութեան տարածքում հիւրանոցային տնտեսութեան օբիեկտներում տեղաբաշխուած զբօսաշրջիկների թուաքանակը կազմել է 92 հազ. 716 մարդ, ինչը 2014թ. նոյն ժամանակաշրջանի նկատմամբ նուազել է 3.0%-ով:

Ներքին զբօսաշրջիկներից 55 հազ. 965-ը մեկնել է հանգստի ու ժամանցի նպատակով, 24 հազ. 647-ը՝ գործնական,՝ 4 հազ. 668-ը՝ բուժման եւ 7 հազ. 436-ը՝ այլ նպատակով:

«Չե՛ք Անցկացնի»-ն Սահմանադրական Փոփոխութիւնների Դէմ Պայքարում Համախոհներ է Փնտռում

«Չե՛ք Անցկացնի» նախաձեռնութիւնը սահմանադրական փոփոխութիւնների դէմ պայքարում համախոհներ է փնտռում: Նախաձեռնութեան անդամ Արշակ Մուսախանեանն «Ազատութեանը» փոխանցեց, որ պատրաստւում են այս ամիս ծրագրուող «Ոչ»-ի ճակատի համաժողովին: Հրաւիրուելու են ինչպէս հասարակական կազմակերպութիւնների ու քաղաքացիական նախաձեռնութիւնների, այնպէս էլ քաղաքական ուժերի ներկայացուցիչները:

«Նախնական համաձայնութիւնը տուել են Հայ ազգային կոնգրէսը, Ստեփան Դեմիրճեանի գլխաւորած ՀԺԿ-ն, եւ այսօր էլ, մօտակայ օրերին էլ հանդիպումներ ունենք, սպասում ենք միւսներին պատասխաններին: Հիմնականում համագործակցութիւնը պէտք է լինի նաեւ «Ժառանգութեան» հետ, յուսով ենք նաեւ «Հիմնադիր Խորհրդարանի» հետ»,- ասաց Մուսախանեանը:

Քաղաքական ուժերի հետ հանդիպումներից Արշակ Մուսախանեանի համար պարզ է դարձել՝ Սերժ Սարգսեանին մերժած եւ սահմանադրական բարեփոխումնե-ի հարցով հանդիպման չգնացած ուժերը հասկանում են վտանգը.- «Եւ քանի որ հասկանում են վտանգը, բոլորը միասնական պայքարելու են, ես համոզուած եմ: Անկախ նրանից՝ միասնական հարթակ, ֆորմատ կը լինի, թէ ամէն մէկը առանձին իր ծրագրով կը գնայ, բայց որ ամէն ինչ համակարգուած կը լինի եւ բոլորը լցուած են ուժով, որպէսզի պայքարեն աւելի տոտալիտար ռեժիմի անցնող այս փորձը տապալելու համար, համոզուած եմ»:

Հասարակական լուրջ աջակցութիւն ունենք, համոզուած է «Չե՛ք Անցկացնի» նախաձեռնութեան անդամը: Երբ վերջնականապէս պարզեն համախոհների շրջանակը, հաշուարկեն ռեսուրսները, նաեւ հրապարակային գործողութիւնների են անցնելու:

«Միգուցէ եւ Ազգային ժողովի մօտ ակցիաներ իրականացնենք, երբ նախագիծը քննարկուի ԱԺ-ում եւ նաեւ այլեր մարզեր, ակցիաներ, պիկետներ... հնարաւորութեան դէպքում, եթէ ամէն ինչ յաջող ընթանայ, հանրահաւաք»,- յայտնեց Մուսախանեանը:

Յեղասպանութեան Ճանաչման Գործընթացը

Շարունակուած էջ 1-էն

առումով»:

«100-րդ տարելիցը կարելի է նոր սկիզբ համարել Հայոց ցեղասպանութեան ճանաչման եւ դատապարտման առումով», ըսաւ նախարարը ու շեշտեց, որ Հայոց ցեղասպանութեան ճանաչման անշրջելի գործընթացը առաջ կ'ընթանայ տարբեր մակարդակներով եւ ուղղութիւններով:

Այս կապակցութեամբ նախարար Նալբանդեան յատուկ առանձնացուց, Ապրիլի 12-ին Սուրբ Պետրոսի տաճարէն ներս Հռոմի պապ Ֆրանցիսկոս Ա-ի՝ Հայոց ցեղասպանութեան 100-րդ տարելիցի կապակցութեամբ մատուցուած պատարագը եւ արտասանած կարեւոր ուղերձը: Ապրիլի 24-ին Երեւանի մէջ Ֆրանսիայի, Ռուսաստանի, Սերբիայի, Կիպրոսի նախագահներու ելոյթները, Գերմանիոյ Դաշնային Հանրապետութեան Նախագահի յայտարարութիւնը, Մեծ Եղեռնը դատապարտող բանաձեւեր, որոնք ընդունուեցան տարբեր պետութիւններու օրէնսդիր մարմիններուն կողմէ:

Նախարար Նալբանդեան ըսաւ, որ հեղինակաւոր միջազգային լրատուամիջոցներու կողմէ հրապարակուել են եւ եթեր հեռարձակուած՝ հարիւրաւոր յօդուածներ եւ հաղորդումներ Հայոց ցեղասպանութեան մասին:

Միջազգային քաղաքագիտական ամենահեղինակաւոր հանդէսներէն մէկը՝ Փարիզ հրատարակուող «Politique Internationale» հանդէսը՝ 330 էջանոց, անգլերէն եւ ֆրանսերէն լեզուներով, յատուկ թիւ նուիրած է Հայոց ցեղասպանութեան 100-րդ տարելիցին, որուն մէջ, ի շարս այլ յօդուածներու, տեղ գտած են ՀՀ Նախագահի, Ֆրանսիայի ներկայիս եւ նախկին նախագահներու հրապարակումները եւ բազմաթիւ հեղինակաւոր ցեղասպանագէտներու յօդուածները:

ՄԱՀԱՑԵԼ Է ԲԱՐԵՐԱՐ ՎԱՀԱԳՆ ՅՈՎՆԱՆԵԱՆԸ

Երեւանում Օգոստոսի 31-ին, մահացել է սփիւռքահայ գործարար, հասարակական գործիչ, բարերար Վահագն Յովնանեանը:

Յովնանեանը ծնուել է 1932թ. Փետրուարի 16 Իրաքում: Հայ ճարտարագէտ-ձեռնարկատէր, հասարակական գործիչ, բարերար Հրայր Յովնանեանի եղբայրն է:

1952 թուականին աւարտել է Պաղտատի քոլէջը, 1956 թուականին՝ Ֆիլադելֆիայի Ս. Ջոզեֆի համալսարանը, (Փենսիլվանիա նահանգ)՝ ստանալով ֆիզիքոս բակալաւրի աստիճան:

Աշխատանքային գործունէութիւնը՝

1959 թուականին հիմնել է (եղբայրների հետ) «Յովնանեան եղբայրներ» կորպորացիան (եղել է փոխնախագահ), 1969 թուականին՝ սեփական անշարժ գոյքի շինարարութեան («Hovhit») ընկերութիւնը: Գործունէութեան ծաւալների աճելուն պէս, ընկերութիւնը ճիւղաւորուեց եւ ստեղծուեցին մի քանի դուստր ընկերութիւններ՝ «V.S. Hovnanian Group», «Adelfia Water Company», «Adelfia Sewer Company», «Hovnanian Realty», «Clear Title Agency» եւ «Grandview Cable»: 1985 թուականին Յովնանեանը որդուլ Շանթի հետ նախաձեռնեցին յաճախականութեան լայն ընդգրկումով հեռահաղորդակցութեան ընկերութիւն, հիմնելով «Cellular Vision» կորպորացիան, որը յետագայում վերանուանուեց «SpeedUS» կորպորացիայի:

1960-ականներին Յովնանեանը 4 տարի շարունակ եղել է Նիւ Ճըրզի նահանգի Ռիճֆիլտ քաղաքի Սուրբ Վարդանանց Հայ Առաքելական եկեղեցու հոգաբարձուների խորհրդի նախագահ:

«Յովնանեան Ինթերնեյշնլ» (1998 թուականից) եւ «Յովնանեան Գրուպ» ընկերութիւնների նախագահ:

Վահագն Յովնանեանի բարեգործական ծրագրերը նպատակաուղղուած են հայ մշակոյթի զարգացմանն ու պահպանմանը, նաեւ Հայաստանում տուրիզմի զարգացմանը: Կնոջ՝ Յասմիկ Յովնանեանի հետ 1976 թուականին Նիւ Միլֆորտ քաղաքում (Նիւ Ճըրզի նահանգ) հիմնել է հայկական դպրոց, նպաստել է ԱՄՆ-ի հիւսիս-արեւելեան հայ համայնքի կրթական, կրօնական եւ մշակութային խնդիրների լուծմանը:

2000 թուականին ՀՀ-ում հիմնել են Սայեաթ-Նովայի անուան, 2002 թուականին՝ «Վահագն» մրցանակաբաշխութիւնները: 2001 թուականի Մայիսին ստեղծել է Հայկական տուրիզմի զարգացման գործակալութիւնը (ՀՏԶԳ):

Ռիճֆիլտ քաղաքի (Նիւ Ճըրզի նահանգ) Սուրբ Վարդանանց եկեղեցու հոգաբարձուների խորհրդի նախագահ, Ամերիկա-Իսրայէլ բարեկամութեան խորհրդի անդամ:

1998 թուականին Երեւանում կառուցել է Վահագնի թաղամասը:

«ՀԱՅԵՐԻ ԳԱՐՈՒՆԸ». FRANCE 3-Ը ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆԸ ՆՈՒԻՐՈՒԱԾ ՎԱՒԵՐԱԳՐԱԿԱՆ ՖԻԼՄ Է ՊԱՏՐԱՍՏԵԼ

Ֆրանսական France 3 հեռուստաընկերութիւնը 55 րոպէ տեւողութեամբ վաւերագրական ֆիլմ է պատրաստել հայերի եւ հայոց պատմութեան մասին՝ այն վերնագրելով «Հայերի գարունը»:

Ինչպէս փոխանցում է «Արմենպրես»-ը՝ Nouvelles d'Armenie-ին յղումով, վաւերագրական ֆիլմի մուտքի հատուածում նշւում է, որ մէկ միլիոնից աւելի հայերի կեանք խլած եւ հարիւր հազարներին բռնագաղթի ենթարկած Հայոց ցեղասպանութիւնից արդէն անցել է հարիւր տարի:

«Տարիների ընթացքում իրենց հայրենիքից հայերին արմատախիլ անելը յանգեցրեց տարատեսակ հայկական «սփիւռքերի» ձեւաւորմանը: Թուրքիան պաշտօնապէս ժխտում է Հայոց ցեղասպանութիւնը՝ այն աստիճան հասնելով, որ նոյնիսկ փորձում է արհեստականօրէն «մաքրել» հայերի ներկայութեան հետքերն այդ տարածաշրջանում»,- պատմւում է ֆիլմում:

Ֆիլմում այնուհետեւ ներկայացւում է ֆրանսահայ Վարուժան Արթինը, որը ժամանակին երդուել էր երբեք Թուրքիա ոտք չդնել, սակայն յետագայում որոշեց իր համար բացայայտել իր նախնիների հողը: «Նրա համար ցնցող յայտնագործութիւն էին այն մեծաթիւ ծպտեալ հայերը, ովքեր կարողացել են վերապրել այս դարի առաջին մեծ ցեղասպանութիւնը եւ երբեք չեն լքել Թուրքիան»,- ասւում է ֆիլմում:

«Հայերի գարունը» ֆիլմը հեռարձակուեցաւ Օգոստոսի 31-ին Փարիզի ժամանակով 23:25-ին:

ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆԸ ԶՈՀ ԴԱՐՁԱԾ ԵՊԻՍԿՈՊՈՍԸ ԴԱՍՈՒԵԼ Է ԵՐԵՒԵԼԻՆԵՐԻ ՇԱՐՔԸ

Եպիսկոպոս Միքայէլ Մելքին, ով նահատակուել է 1915-ի Ցեղասպանութեան ժամանակ մահեմդականութիւն չընդունելու համար, դասուել է երեւելիների շարքը, փոխանցում է Catholic Herald կայքը:

Հոգեւորականին գլխատել են օսմանցիները 1915թ. ցեղասպանութեան տարիներին, որի ընթացքում զոհուել են 1,5 միլիոն հայեր, 250.000 ասորիներ եւ այլ էթնիկ փոքրամասնութիւնների ներկայացուցիչներ:

Մելքի եպիսկոպոսը դասուել է երեւելիների կարգը Օգոստոսի 29-ին Լիբանանի վանքերից մէկում իր նահատակման 100-ամեայ տարելիցին: Կիրակի օրը Սուրբ Պետրոսի հրապարակում Ֆրանցիսկոս պապն ասել է, որ «քրիստոնեաների սարսափելի հալածանքների համատեքստում Մելքին իր ժողովրդի իրաւունքների նուիրուած պաշտպանն էր, ով բոլորին կոչ էր անում հաւատարիմ մնալ իրենց հաւատքին»:

ՎԱՐՁՈՒ ՍՐԱՀ
ՓԱՍԱԴԻՆԱՅԻ ՄԷՋ (200 ՀՈԳԻԻ ՀԱՄԱՐ)
ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԱՌԻԹՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ
1060 N. ALLEN AVE. PASADENA CA 91104
ՄԱՆՐԱՄԱՍՆՈՒԹԻՒՆՆԵՐ՝
ՀԵՌԱՁԱՅՆԵԼ (626) 797-7680

ՊՈԼԻՍ. 171 ՏԱՐԻ ԱՌԱՋ ՀԻՄՆՈՒԱԾ ՅՈՎՀԱՆՆԷՍ ՏԱՏԵԱՆԻ ԱՆՈՒԱՆ ԴՊՐՈՑԸ ՊԻՏԻ ՎԵՐԱԲԱՑՈՒԻ

Պոլսոյ Պաքըրքէօյ շրջանին մէջ 171 տարի առաջ Տատեաններու հիմնադրած հայկական դպրոցը պիտի վերաբացուի:Այս մասին «Անատոլու»ին պատմած է Պոլսոյ Սուրբ Աստուածածին եկեղեցւոյ հիմնադրամի նախագահը: Մէսութ Օզտէմիր նաեւ ըսած է, որ հայկական նոր դպրոցին բացումը եղած է իր կեանքի երազանքը: Անիր խորին շնորհակալութիւնները յայտնած է տեղի մարմիններուն, քաղաքապետարանին եւ համայնքի բարերարներուն: Ըստ Օզտէմիր դպրոցը կարողութիւնը պիտի ունենայ ընդունելու մինչեւ 500 աշակերտներ: Գործակալութիւնը նաեւ կը նշէ, որ սա առաջին դպրոցն է որ կը կառուցուի հանրապետական Թուրքիոյ հիմնումէն ի վեր: Ըստ գործակալութեան մինչեւ այս վարժարանին բացուիլը Պոլսոյ մէջ բացուած են հայկական դպրոցներ բայց անոնք չեն ունեցած իրաւական հիմք մինչ այս դպրոցը կառուցելու իրաւական որոշումը տրուած է վարչապետարանին կողմէ: Ըստ աղբիւրին

Պոլսոյ մէջ այսօր կը գործեն փոքրամասնութիւններու յատկացուած 22 վարժարաններ որոնց 5-ը յոյներուն, 1-ը հրեաներուն եւ 16-ը հայերուն կը պատկանի: Վերջին տուեալներուն համաձայն այսօր Պոլիսը ունի 3000 հայ աշակերտներ: Օզտէմիր նաեւ նշած է, որ դպրոցը ունի արդիական յարմարանքներ ինչպիսին են հանդիսութիւններու դահլիճ եւ մարզասրահ: Կը հաղորդուի, որ Տատեան նորակառոյց վարժարանի բացումը պիտի կատարուի յառաջիկայ 28 Սեպտեմբերին:

ԱՆԴՐԱՆԻԿԸ ՊԻՏԻ ՅԻՇԵՆՔ ԴԱՐԷ ԴԱՐ

(ԶՕՐ. ԱՆԴՐԱՆԻԿԻ ՄԱՀՈՒԱՆ 88-ՐԴ ԱՄԵԱԿԻՆ ԱՌԻԹՈՎ)

ԱԻԵՏԻՍ ՌԱԶՄԻԿ

31 Օգոստոս 1927-ին, ԱՄՆ-ի Ֆրեզնօ քաղաքին մէջ աչքերը յաւիտենապէս կը փակէր ոչ սո- վորական անհատականութիւն մը: Առերեւոյթ, խաղաղութեամբ կը ննջէր այնպիսի հերոս մը, որուն փոթորկայոյզ կեանքը անքակտելիօրէն միահիւսուած էր իր ժողովուրդի ժամանակակից պատմութեան հետ:

Հաւաքականութիւններ առանց հերոսներու չեն կրնար ապրիլ.եթէ չունին իսկ՝ կը ստեղծեն զոնէ արհեստականօրէն: Ժողովուրդներու համար հերոսները անհրաժեշտութիւններ են՝ ոչ միայն անոնցմէ ոգեշնչուելու համար, այլ՝ սերունդներ թրծելու եւ կոփելու ի խնդիր: Հերոսները արտաժամանակային տիպարներ են՝ բերնէ բերան դառնալու համար խորհրդանիշներ եւ դաստիարակութեան վա՛ռ օրինակներ: Սասունցի Դաւիթէն մինչեւ Առիւծ Մհեր ու շղթայակիր Արտաւազդ, Վարդան Մամիկոնեանէն մինչեւ Սամուէլ ու Դաւիթ Բէկ հայ սերունդներու միտքին մէջ դրոշմուած են ոչ թէ իրենց իսկական եւ առարկայական յատկանիշներով, այլ՝ առասպելատիպ հերոսականութեամբ եւ ներշնչման առաքելութեամբ:

Զօրավար Անդրանիկ մերօրեայ հերոսն է: Իր կենդանութեան իսկ ժողովրդային հերոսի յարգանք ու պատիւ վայելած. իր անունով եւ արարքներով իսկ առասպել դարձած յաչս իր ժողովուրդին, իսկ սարսափազդու վրիժառու՝ թշնամիներուն դիմաց: Հայ ազատագրական պայքարի գրեթէ բոլոր թէժ կէտերուն վրայ յայտնուած, հայ յեղափոխական շարժման համարեա ոլոր ֆետայիներուն հետ մարտնչած, հակաթրքական կռիւներուն գրեթէ ամէն ճակատներուն փութացած Զօրավար Անդրանիկ իր մարտական կենսապատումով անմահութեան դափնեպսակը նուաճեց ոչ թէ երգի ու անահիւսութեան համար լոկ, այլ՝ ընդմիշտ որպէս արծիւ սաւառնելու Հայաստանի երկնահուպ լեռներուն եւ անամպ երկինքին միջով: Արդարեւ, Սասնոյ Արծիւը հոն է՝ ուր որ հայու սիրտը կը տրոփէ. անոր թեւածող թռիչքը հոն է՝ ուր որ հայու ոգին կը բաբախէ: Այսօր, մայրաքաղաք Երեւանի տարբեր վայրերու մէջ կան ձիու վրայ նստած հինգ տպաւորիչ արձաններ.- Սասունցի Դաւիթ, Հայկ Բժշկեան (Գայ), Վարդան Մամիկոնեան, մարաջախտ Յովհաննէս Բաղրամեան եւ Զօրավար Անդրանիկ: Միայն Անդրանիկին վերապահուած է միաժամանակ երկու երիվարներ աշտանակելու գերմարդկային ուժն ու կարողութիւնը՝ որպէս ազգին երկու հատուածներուն սէրն ու վստահութիւնը վաստկած եզակի անձնաւորութիւն: Այս ացառիկ պատիւին ան արժանացաւ ոչ թէ պարտադրելով կամ մարդկանց համոզելով, այլ՝ ժողովուրդին բոլոր խաւերուն ինքնաբուխ ու անշպար արտայայտութեամբ, անկեղծ եւ անշահախնդիր զգացումներով:

Ան ռազմական բնատուր ձիրք ու շնորհք ունեցող լիտըր էր. մարտընկերներու կողմէ անվերապահօրէն ընդունուած առաջնորդ: Հայաստանի ամէն անկիւնն ու շրջանը իւրացուցած տեսանող աչքը եւ հակառակորդը դիպուկ կերպով պատժելու հնարամիտ մարտավարը: Զէնքի, քաջութեան եւ խիզախութեան համար էր ծնած Անդրանիկ, որուն համար ալ սաստող ու խիստ էր «օձերու պէս իրենց բոյնը սողացող» քիւրտ եւ թուրք խաժամուժին համար:

Քաղաքական հոտառութիւնն ու թշնամին ճանչնալու բնազդը զինք մղեցին որդեգրելու այնպիսի անշեղ ճանապարհ մը՝ որ կը բնորոշուի հետեւողականօրէն հակթրքական: Ոսոխին խոստումներն ու մեղրածորան կարգախօսները չսայ- թաքեցուցին զինք (ինչպէս շատերու). սուտ կենացներ եւ լոզունգներ չգայթակղեցուցին զինք բնաւ. ան եղաւ յստակ եւ վճռական իր դիրքորոշումներուն եւ գործողութեանց մէջ: Կեանքի մինչեւ վերջին րոպէն մնաց այդպիսին:

Շար.ը էջ 19

ԱՌԱՋ ԴԷՊԻ ՍՄԿԿ՝ ՀՅԿ-ի ՊԱՏՄՈՒՃԱՆՈՎ

ՍՈՒՐԷՆ ԽՈՒՏԱՆԵԱՆ

Աներեւակայելի արագ կողմնորոշում ունի մեր հայրենի ղեկավարութիւնը: Իշխանական իրենց հարազատ համակարգը յաւերժական դարձնելու համար, անձի իշխանութիւնը պէտք է փոխարինել խմբային կամ թայֆայական իշխանութեամբ:

Կարեւոր չէ թէ այդ թաֆուն կուսակցութիւն կ՚անուանես՝ դաշինք կամ էլ մի այլ բան: Սա «առաջադիմական» է համարւում իր բոլոր քայքայիչ կողմերով հանդերձ:

Էս նեղ մաջալին որ ընտրական համակարգի տկարութեան եւ նրա անկատար մեխանիզմների հասցրած վէրքերը ոչ միայն չի բուժուել, այլ ժողովուրդի մէջ հաւատքի եւ վստահութեան մեծ կորուստ է արձանագրել, եկել ենք մայր օրէնք ենք փոխում: Մէկը հարցնի ախր ո՞ր ընտրական մեխանիզմներով օրէնք ես փոխում: Միթէ կատարուած փոփոխութիւնը հանրաքուէի չպէ՞տք է դրուի: Անշուշտ պէտք է դրուի: Իսկ եթէ ընտրութիւնների անցկացման եւ արդիւնքների վրայ այդքան անվստահութիւն կայ, ապա ո՞րն է երաշխիքը, որ Մայր Օրէնքի փոփոխութիւնը արտայայտելու է ժողովրդի կամքը:

Զին կառքի առջեւի փոխարէն, հետեւից են կապում: Սա ի՞նչ տրամաբանութիւն է: Եթէ համակարգային փոփոխութեան ջատագովն էք, բերէք վստահութիւն ներշնչող ընտրական համակարգ ձեւաւորենք: Գործող մայր օրէնքը վստահօրէն ունի այդ կարողութիւնը:

Սահմանադրական փոփոխութիւնների հետ կապուած հսկայական ռեսուրսների մի մասը թող ուղղուի ընտրական համակարգի կատարելագործման վրայ: Ժողովրդի մէջ վստահութիւնը կ՚ամրապնդուի եւ աւելի ամուր հիմք կը ստեղծուի ժողովրդավարական բաղձալի հայրենիք կառուցելու համար: Այնուհետեւ՝ կառքը տեղից կը շարժուի, ժողովրդավարական կանոններով կը ձեւաւորուին իշխանական թեւերը, լիազօրութիւնների ճիշտ բաշխում տեղի կ՚ունենայ: Վերջապէս, անկախ արդարադատութեան համակարգ կը ձեւաւորուի եւ Ժողովրդի մէջ անվստահութեան մթնոլորտը կը վերանայ:

Այս գուշակութիւնների եւ բարի ցանկութիւնների իրականացման երաշխիքը դա այն է որ արհեստավարժ եւ սրտացաւ մարդը կը զբաղեցնի իրեն հասանելիք ճիշտ տեղը: Ընտրովի պաշտօնը վերից վար չի դառնայ նշանակովի: Պատգամաւորը կոճակ սեղմող կամակատարի կարգավիճակից կ՚անցնի ժողովուրդին ծառայող եւ նրա կամքը արտայայտող պատուաւոր բարձունքի, որտեղ զոնէ կոճակ սեղմելուց առաջ ինքնուրոյն մտածելու կարողութիւն կ՚ունենայ:

Քաղաքական «Գարունը» կը սկսի բերկրալի մաքուր, ազատութեան թարմ օդով, «տնկիների» առատութեամբ: Այն տնկիները, որոնց իւրաքանչիւրը կը ներկայացնի ներդրումային հսկայ փաթեթներ՝ կեանքի տարբեր բնագաւառներում:

Ներդրումային ակտիվների ներգրաւումը լոկ հայրենասէր սփիւռքահայերով պայմանաւորուած չի լինի, այլեւ՝ յուսալի եւ բարենպաստ միջավայրով պայմանաւորուած միջազգային ակտիվների ներգրաւմամբ:

Վերջինս կը խթանի տնտեսական նոր յարաբերութիւնների եւ աշխատանքի ձեւաւորմանը: Միջազգային կապիտալի կենսունակ օրէնքներով տնտեսութիւնը շունչ կ՚առնի, չնայած ազգային արժէքի տրոհման վտանգի առկայութիւնը:

Թւում է թէ, ռեալ չէ ասուածը: Իշխանութեան հետ միահիւսուած օլիգարխիկ համակարգը երբեք թոյլ չի տայ իրեն հարազատ բուրգը կազմաքանդուի: Հեշտ չէ ազատուել այս բուրգից, սակայն անհնարին չէ: Արդար եւ թափանցիկ ընտրահամակարգով ժողովրդավարական հասարակարգի հիմքեր է դրւում, որտեղ հասարակութեան բնականոն զարգացմանը մշտական բնոյթ է տալիս եւ օլիգարխիկ բռնապետական բուրգը սկսում է քայքայուել եւ ինքնուրոյն կազմաքանդուել:

Ի՞նչ է կատարւում այսօր:

Ընտրական ներկայ մեխանիզմով տանում են Սահմանադրութեան փոփոխմանը, որ իշխող կուսակցութեան յաղթանակը ապահովուած է լինում հենց առաջին փուլում, իսկ եթէ երկրորդ փուլի հարց առաջանայ, կոսմետիկ միջամտութիւններով ապահովւում է նրա վերջնական յաղթանակը եւ այսպիսով ՀՀԿ (Հայաստանի Հանրապետական Կուսակցութիւնը), դառնում է մենիշխան բռնապետը, նրան հետ շաղախուած ու շաղկապուած է մնում օլիգարխիկ միաւորները: Այս պարագայում կարիք կ՚այ արդեօք ծանրանալ անձի

Շար.ը էջ 19



ՀԱՅԵՐԷՆ ԼԵԶՈՒՈՎ ԳՐՈՒԱԾ ՅՕԴՈՒԱԾԸ

ՄԵԹՐ ՊԱՐԳԵԻ ԴԱՒԻԹԵԱՆ

Սփիւռքահայ մեր կեանքին մէջ լեցուն են օտարութեան յաղթանակները եւ համացանցային (Internet) հաղորդակցական միջոցները, որոնց պատճառաւ մեր երիտասարդութիւնը եւ նոյնիսկ միջին տարիքի մարդիկ կը նախընտրեն կարդալ անգլերէն լեզուով յօդուածներ: Շատ քիչ թիւ կը կազմեն անոնք, որոնք տակաւին կը փնտռեն հայերէնով գրուած լուր կամ յօդուած:

Յաճախ ինծի կը հարցուի թէ ինչո՞ւ անգլերէնով չեմ գրեր յօդուածներս եւ կը բաւականանամ միայն հայերէն լեզուով գրելով: Երբեք նենգամտութեամբ չէ որ ինծի կ՚ուղղուի այդ հարցումը, որովհետեւ գիտեմ բարիկամեցողութիւնը հարցնողներուն եւ իրենք ալ գիտեն իմ անգլերէնի քաջածանօթ ըլլալը: Արդարեւ, անգլերէն լեզուով տեղական դատարաններու առջեւ յաճախ մեծ ընկերութեան մը դատը կամ դատերը պաշտպանելու տարիներու փորձառութիւնս դժուար պիտի չդարձնէր ինծի այդ լեզուով գրելը:

Որպէս պատասխան ըսած եմ, թէ անգլերէնով հայ գրող շատ կայ եւ իմ գրութիւնները կ՚ուզեմ խորհիլ թէ կը ծառայեն մեր երէց սերունդին, որ կը նախընտրէ հայերէն կարդալ:

Կան նաեւ ուրիշ պատճառներ զորս պիտի փորձեմ հոս բացատրել, յուսալով որ նշանակութիւն եւ իմաստ (sense) կ՚ունենան ըսածներս:

Նախ եւ առաջ պիտի խնդրէի որ ոչ ոք իմ կողմէ եղած մեծամտութիւն չնկատէ կամ մեծերու հետ չափուելու եւ կամ «հովեր» առնելու չվերագրէ հետեւեալ մէջբերումը որ պիտի ընեմ, ձեւով մը արդարացնելու համար հայերէնով գրելս:

Մեծանուն բանաստեղծ ու գրագէտ Կոստան Զարեան (1885-1969), որ սկսած էր իր գրական յաջող երթը գրելով ռուսերէն ու ֆրանսերէն լեզուներով, քսանհինգ տարեկանին սորվեցաւ հայերէն լեզուն Վենետիկի Ս. Ղազար կղզիին մէջ՝ Մխիթարեաններու շունչին տակ՝ 1910-1912 թուականներուն: Նախքան անոր հայերէն լեզուով գրելը, ան արդէն հռչակաւոր գրող էր ռուսերէն եւ ֆրանսերէն լեզուներով: Պատճառը որ ան հայերէն սորվեցաւ եւ ուզեց հայերէնով գրել՝ եղաւ խրատն ու յորդորը իրեն բարեկամ պելճիքացի մեծահռչակ բանաստեղծ եւ գրող Էմիլ Վէրհաէրէնի (Emile Verhaeren), որ իրեն խորհուրդ տուաւ սորվիլ իր մայրենի լեզուն՝ հայերէնը, եւ գրել իր նախահայրերու լեզուով՝ եթէ կ՚ուզէր ԵՐԵԻԱՆ ՀԱՆԵԼ ԻՐ ՀԱՐԱԶԱՏ ԱՆՁԸ (reveal his true self): Այսինքն, պարզ լեզուով ըսուած, գրել ու խօսիլ հարազատ ընտանիքի եւ տան մէջ նստած:

Եւ իսկապէս ալ այդպէս, ամէն անգամ որ կը նստիմ յօդուած մը գրելու հայերէն լեզուով, կը զգամ ջերմութիւնը յիշատակներով լեցուն կեանքիս, որուն մէջ հարազատներ հայերէնով կը խօսէին ինծի եւ որուն մէջ ընկերներ ու բարեկամներ հայերէնով կը բարեւէին հեռուէն ու մօտէն: Կը զգամ թէ մտքիս եւ հոգիիս անկաշկանդ ալիքները դուրս կը ժայթքեն ներ-աշխարհէս՝ յառաջացնելով հարազատ եւ անարատ նկարագրականներով ու բացատրութիւններով լեցուն գրաւոր պատկերներ, որոնց ետին եւ առջեւ միշտ կանգնած են սիրելիներս՝ անվերադարձ մեկնած շնորհալի ու պաշտելի կիներս, աննման հայրս ու մայրս, համբուրելի խիզախ Վահան եղբայրս ու անգերազանցելի ընկերներ Հրայրն ու Բիւզանդը:

Հայերէնով գրուած յօդուածը վարձատրութիւն կը նկատեմ նաեւ մեր երէց եւ ալեհեր սերունդին, որ տակաւին կը փնտռէ հայերէնով գրուած թերթ ու գիրք: Անոր կը պարտինք Սփիւռքի ազգային անապահով պայմաններու մէջ մեզի ընծայուած եւ տրուած, ապահով ձեռքերու մէջ խնամուած ու մշակուած մեր հայկական պատկանելիութիւնը: Հաճոյքով կ՚ընկալեմ ժպիտը եւ բարի խօսքն ու գնահատականը այդ երէց սերունդի բոլոր ընթերցողներուն, որոնք ամէն անգամ որ ինծի հանդիպին՝ շնորհակալութեամբ կ՚արտայայտուին, եւ այդ ընելով՝ զիս կը քաջալերեն որ գրեմ յաջորդ յօդուածս:

Ինչպէս վերի տողերուն մէջ յիշեցի, անգլերէնով յօդուածներ գրողներ շատ կան մեր սփիւռքահայ ուսեալ եւ զարգացած անհատներուն մէջ եւ բոլորն ալ արժանի են յարգանքի ու գնահատանքի, որովհետեւ մեր խօսքը լսելի կը դարձնեն օտարին եւ օտարախօս մեր նոր սերունդին: Հայերէն լեզուով յօդուած գրելը, գէթ ինծի համար, խառնուրդն է շատ մը ներքին զգացումներու, որոնց մէջ յատկանշական տեղ կը գրաւեն ինքնագոհացումը եւ երէցներու հանդէպ իմ ունեցած մեծ սէրն ու յարգանքը:

ՄՏԱԾՈՒԱԾ ԿԵԱՆՔԸ

Ռ. ԿՈՐԻՒՆ

Այս նիւթը մասամբ ընտանեկան յարաբերական կեանքի մասին է, չեմ կարծում այնքան էլ նոր մտքեր արծարծուած լինեն, նկատելով մարդիկ զանազան տեղեկատուական միջոցներով տեղեկացւում են, քաջ գիտակցում են կեանքի արժէքը եւ իրենց ապրելակերպ-ընտանեկան երջանիկ կեանքի հնարքների մասին, բայց այդուհանդերձ կրկնողութիւնը վնաս չէ, յիշեցումը առաւել սաղմնաւորում է իմացութիւնը:

Մեր ընկերների եւ բարեկամների հետ տարբեր առիթներով շփւում ենք, տեղեկանում եւ տեսնում ենք ոմանց ընտանեկան ներքին կեանքը, նիստ ու կացը, ջերմ սիրոյ եւ յարգանքի ու խնդիրների շուրջ խորհրդակցական հոգեբանութեան առկայութիւնը, ի տես այս գեղեցիկ ապրելակերպը մարդ ուրախանում եւ բարի նախանձով է լցւում, օրինակելի եւ խրախուսելի, որը երջանիկ ապրելու եւ յաջող կեանք ունենալու գրաւականն է: Այո՛, քաղցրութիւնը, փոխադարձ սէրն ու յարգանքը, համեստութիւնն ու համբերատարութիւնը, զաւակների լաղութիւնը ծնողներից, մանաւանդ՝ յարգանքն ու պատիւը հօր, մօր, պապիկի եւ տատիկի նկատմամբ ընտանիքի առողջ կայունութեան, շառաւիղի շարունակութեան երաշխիքն է, այդ նման կենցաղավարքը յաջողութեան բարի ճանապարհների առհաւատչեան է:

Այդ շփումների եւ հանդիպումների շարանում մեր ընկերներից մէկը իրենց ընտանեկան հաւաքում տեղի ունեցած խորհրդակցական ժողովից հետեւեալ պատմութիւնն արաւ.

-Գիշերուան, ընտանեկան կազմով՝ կիներս, երկու տղաներս կանանցով, աղջիկս ամուսինով եւ վեց թոռներիս ներկայութեամբ մեր ժողովի օրակարգ էինք դարձրել իմ եւ կնոջս յետագայի՝ Աստծոյ օրից մէկը, կեանքից հեռանալու առումով յուղարկաւորութեան համար նախապատրաստութիւն տեսնել: Ինչպէս գիտես սիրելի՛ ընկեր, մահը անխուսափելի է, այս մոլորակի վրայ ֆիզիքական յաւերժական կեանք գոյութիւն չունի, լաւ է մարդ իր ապագայի համար մտածի, որ յետոյ զաւակները անել վիճակի չմատնուեն, ի՞նչ կ՚ասես սրա մասին:

Մեր ընկերը մեծահասակի սեմին հասած, բարձրահասակ ու վայելուչ, Իրանում համալսարանական ուսում ստացած, շինարար ճարտարապետ, հայերէն եւ պարսկերէն լեզուներին շատ լաւ իմաց, կեանքի դառն ու քաղցր ճաշակած եւ գրականութիւն սիրող ու գրելով զբաղւող մի պատուական հայ մարդ է:

Անակնկալի եկայ, չէի իմանում այո՛ ասել, թէ՝ ո՛չ, քանի որ սա առաջին անգամն էր, ինձ հետ, էսպիսի մի նիւթի մասին խօսակցութիւն էր գնում, միշտ խուսափել եմ նոյնիսկ մտքիցս անցնելու դժխեմ մահի ստուերը՝ վախի զգացումով, այդուհանդերձ որ երիտասարդ չեմ, քանի որ երիտասարդները երբեւիցէ մահուան մասին չեն մտածում, լաւ է, որ այդպէս է, մահի մասին մտածելով կեանքի առաջ ճգտումը փակում ենք: Յետոյ շարունակ ցանկութիւնս է եղել հայրենիքում ապրել եւ թաղուել, որպէսզի յիշատակս պապենական հողում մնայ, մի բուռ հող լինեմ մեր քարքարոտ աշխարհին, ցաւօք այսպէս է ստացուել եւ ներկայումս ապրում եմ հայրենիքից հեռու, ինչ արած, թերեւս իմ փափագը չկատարուի, բայց սա յար իմ մտորումների մէջ առկայ մտածում է, իսկապէս զարմանում եմ, թէ ինչո՞ւ հայաստանցի հայերը իրենց տուն ու տեղը, հայրենի գեղեցիկ բնութիւնը անմտածուած թողնում եւ գաղթականի ցուպ են առնում ձեռքերում, գաղթական կեանքը դժնդակ կեանք է՝ միշտ հլու եւ հնազանդ օտարներին, մարդ էլ իր ծննդավայր-հայրենիքը կը լքի՞:

-Սիրելի՛ ընկեր, ինչ ասեմ, երբ արդէն ընտանիքով որոշել էք, սխալ կը լինի մտքերը շփոթեցնել, լաւ է կանխատեսումը, շատ պարզ է, շուտ թէ ուշ մարդս գնալու է, բայց մարդ ինչո՞ւ է գալիս եւ ինչո՞ւ է գնում:

- Ոչ գալն է մեր կամքով, ոչ էլ գնալը, բայց ամէն մի մարդ առաքելութեամբ է աշխարհ գալիս, նայած ենթական ինչ տեսակ դաստիարակութիւն է տեսել իրեն բաշխուած կեանքը արժեւորելու, ծառայութեամբ փոխարինելու Աստուծոյ պարգեւի դիմաց:

- Ընկեր ջան կարծես շեղւում ենք նիւթից, ի՞նչ որոշում արեցիք.

- Կնոջս համար նկատի առնուեց Forest Lown-ում, իսկ ես մերժեցի խոշոր գումար ծախսել, նախընտրեցի՝ արժան գնով վառեն մարմինս: Մարմնիս մոխիրը սրուակում մնայ յիշատակ ձեռքէ-ձեռք փոխանցուելով սերնդակիցներիս, իսկ մնացած գումարը նուիրեն բարեսիրական որեւէ մի միութեան, այսպիսով հոգիս խաղաղ կը լինի, որ անտեղի մեծ գումար ծախսած չեմ լինի յուղարկաւորութեանս համար, ախր այստեղ յուղարկաւորութեան ծախսերը շատ թանկ է վերջանում:

- Անշուշտ դա քո գիտենալիքն ու ցանկութիւնն է, բայց մի կարեւոր բան նկատի չես առել, այն էլ մեր եկեղեցւոյ կանոնակարգը, բոլոր քրիստոնեայ եկեղեցիները առաջնորդւում են Աւետարանի ցուցմունքով ննջեցեալին հողին յանձնելով, որի մէջ խորհուրդ կայ՝ հնադարեան աւանդուած սովորութիւն:

- Այս իմ որոշումով չեմ հեռանում մեր եկեղեցուց, մնում եմ նոյն հարազատ զաւակը մեր եկեղեցւոյ՝ քաջ գիտակցելով մեր հայոց եկեղեցւոյ սրբազան առաքելութեան եւ դերակատարութեան մասին:

Մեր ընկերը խօսում էր համոզուած եւ վճռական, վերջապէս ամէն մի որոշում իր ետին կայ տրամաբանուած մտածելակերպ, որը կարելի է սխալ լինի կամ ընդունելի: Մի առած կայ ասում է՝ եթէ... ժողովրդի նման եղի՛ր...:

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՕՆ

Yes, I wish to subscribe to Massis Weekly
Enclosed a check for (one year)

*** $50,00 * $100,00 (first class) for USA**
$ 125,00 (Air Mail) for Canada.
$ 250,00 (Air Mail) Overseas.

Name: ----------
Address: ----------
City: --------- **State:**--------- **Zip Code:**------
Country: ----------
Tel :---------- **Email:** ----------

SEROP'S CAFE
GREEK & LEBANESE FOOD
SERVING BATON ROUGE SINCE 1979

ԼՈՍ ԱՆՃԵԼՈՍԻ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԱՐՈՒԵՍՏԻ ԳԵՐԱՐԴԻԱԿԱՆ ՆՈՐ ԹԱՆԳԱՐԱՆԸ՝ THE BROAD («ՏԸ ՊՐՕՏ»)

Սեպտեմբերի 20ին, 2015, Լոս Անճելոս Կրանտ պողոտայի վրայ, բացումը պիտի կատարուի ճարտարապետական ապագայապաշտական ոճով կառուցուած (մեղուի փեթակի նմանող) ժամանակակից արուեստի գերարդիական նոր թանգարանին:

Այս նոր կառոյցն իր մէջ պիտի պարփակէ 1950 թուականէն ասդին ստեղծագործուած արուեստի հաւաքածոները, որոնք յետագային կրնան պարբերաբար տրամադրուիլ աշխարհի այլ թանգարաններուն:

120,000 ոտք ունեցող այս հաստատութեան կառուցումն արժած է 140 միլիոն տոլար: Երկյարկանի շէնքին մէջ պիտի ցուցադրուին շուրջ 2000 արուեստի գործեր, որոնք կը ներկայացնեն յետ-պատերազմեան շրջանէն մինչեւ օրերս ստեղծագործուած համաշխարհային արժէք ներկայացնող գործեր:

Թանգարանը կառուցուած է Էլի եւ Էտիթ Պրօտ բարերարներու ծախսով: Անոնք հիմնադիրներն են «Պրօտ Արուեստի հիմնադրամ»ին, որուն դրամագլուխն է 2.6 միլիառ տոլար:

«Տը Պրօտ»ի գեղարուեստական յղացումը կը պատկանի «Տիլլը Սգոֆիտօ, Ռէն Ֆօ» ճարտարապետական հիմնարկին, համագործակցաբար Gensler հաստատութեան հետ: Երկյարկանի այս շէնքին արտաքին տեսքը մեղուի փեթակի նման է: Արդարեւ, իր տեսակին մէջ ճարտարպետական գերարդիական ոճ մըն է: Ան իր ինքնատպութեամբ Լոս Անճելոսի եզակի կառոյցներէն մին կը համարուի:

Թանգարան մուտքը ձրի է: Իսկ ինքնաշարժերու կանգառը կը գտնուի շէնքի ստորերկրեայ յարկերուն մէջ եւ վճարովի է: Կը թելադրուի նախապէս ձեր այցելութեան մասին տեղ վերապահէք հեռաձայնելով կամ էլեկտրոնային ձեւով: 13 տարեկանէն վար երեխաներու մուտքը պիտի ըլլայ չափահասի մը ընկերակցութեամբ:

Հասցէն 221 S. Grand Street Los Angeles

Գալով հիմնադիրներուն Էլի եւ Էտիթ Պրօտ ամուլը նշանաւոր է իր բարեգործութիւններով: Անոնք մեծապէս սատարած են կրթական, գիտական, բժշկական, արուեստի եւ քաղաքացիական տարբեր ոլորտներուն ծրագիրներուն: Էլի Պրօտը անցնող հինգ տասնամեակներու ընթացքին հիմնած եւ շահագործման յանձնած է 500 ընկերութիւններ:

Ներկայիս անոնք կը զբաղին իրենց իսկ հիմնած հիմնարկի առաջադրութիւններու իրագործումներով: 1984 թուականէն ի վեր իրենց արուեստի գործերը համալրած են շուրջ 2000 հաւաքածոներով, որոնք ստեղծագործութիւններն են աւելի քան 200 արուեստագէտներու: Անոնք հիմնած են նաեւ փոխանակութեանց գրադարան մը:

Նշենք նաեւ որ Սեպտեմբեր 20ին բացման օրուան մուտքի բոլոր տոմսերը սպառած են: Մինչ այդ դիտել տանք որ այս նոր թանգարանը գեղեցիկ յաւելում մըն է Կրանտ պողոտայի վրայ արդէն իսկ գործող գեղարուեստական այլ հաստատութիւններուն առընթեր: Ուստի առեւտրական կեդրոնին կողքին Լոս Անճելոս քաղաքն ունեցաւ նաեւ մշակութային հարուստ համալիր մը:

ՃԻՒԱՆ ԱՒԵՏԻՍԵԱՆԻ «ՎԵՐՋԻՆ ԲՆԱԿԻՉԸ» ՖԻԼՄԻՆ ՆԿԱՐԱՀԱՆՈՒՄՆԵՐԸ ՄԵԾ ԹԱՓՈՎ ԿԸ ՇԱՐՈՒՆԱԿՈՒԻՆ

Ճիւան Աւետիսեանի նոր Ֆիլմին նկարահանումները մեծ թափով կը շարունակուին: Այս մասին կը հաղորդէ «Արեւելք»ի թղթակիցը, որ Արցախ գտնուելով մասնակցած է «Խաչ Մաչ» գիւղին մէջ ընթացող նկարահանումներուն: Նշենք, որ սոյն ֆիլմին իրենց մասնակցութիւնը կը բերեն այս առիթով Յունաստանէն, ԱՄՆ-էն եւ Երեւանէն Արցախ ժամանած յայտնի դերասաններ: Ֆիլմը կը կրէ «Վերջին Բնակիչը» խորագիրը: Մեր լրագրողին համաձայն Ֆիլմի պատրաստութեան համար Աւետիսեանին կ՚օժանդակեն լիբանանահայ (հայ եւ արաբ) եւ երեւանցի ձայնի, լոյսի եւ բեմադրութեան աշխատանքներուն հսկող երիտասարդ ուժեր: Աւետիսեան իր այս աշխատանքային խումբով յաջողած է տարբեր ափեր ապրող եւ ստեղծագործող դերասաններ եւ մասնագէտներ աշխատանքի հրաւիրել: Դարձեալ մեր տեղեկութիւններով եւ ըստ բեմադրիչ Աւետիսեանի «Վերջին Բնակիչը» ֆիլմը մեծ պաստառ պիտի բարձրանայ յառաջիկայ 2016 տարուան գարնան: Յիշեցընենք, որ բեմադրիչին նախորդ ֆիլմը կը կոչուէր՝ «Թեւանիկ», որ մեծ յաջողութիւն գտաւ Սփիւռքի տարբեր հայագաղութներուն մէջ:

ՖՐԱՆՍԱՀԱՅ ՆՇԱՆԱՒՈՐ ԽՈՀԱՐԱՐ ԱԼԷՆ ԱԼԵՔՍԱՆԵԱՆԸ

Ֆրանսայի Լիոն քաղաքի յայտնի ռեստորաններից մէկը՝ L'Alexandrin-ը, (www.lalexandrin.fr) պատկանում է հայ ձեռնարկատէր, խոհարար Ալէն Ալեքսանեանին, ով այն հիմնել է 1986-ին, եւ որն այժմ ոչ միայն Լիոնի, այլեւ Ֆրանսայի նշանաւոր ռեստորաններից մէկն է:

Ալէն Ալեքսանեանն անցեալ շաբաթ մասնակցել է Բերդի Մեղրի եւ հատապտուղների փառատօնին, որտեղ վարպետութեան դաս է անցկացրել փառատօնի մասնակիցների համար: Ինչպէս «Արեւելք»-ին յայտնեց յայտնի խոհարարը՝ Հայաստանի ուտելիքներն ու մթերքներն անկրկնելի են, բայց նրանց պակասում է ինչ-որ մի համ, եւ ինքը այդ համն է, որ փորձում է ներմուծել հայկական մթերքներով պատրաստուած ուտելիքների, յատկապէս հիւթերի, թէյերի եւ մուրաբաների մէջ: Ալէն Ալեքսանեանն աշխատում է յատկապէս Լոռու մարզի գիւղաբնակ կանանց եւ ձեռնարկատէրերի հետ՝ սովորեցնելով ինչպէս իրենց արտադրանքն ու ուտելիքները դարձնել շուկայի համար աւելի գրաւիչ: Ինչպէս յայտնեց նա, իր խորհուրդներով պատրաստուած որոշ հիւթեր արդէն Հայաստանից արտահանւում են Ֆրանսա: Խոհարարը նախապատրաստական աշխատանքներ է տարել նաեւ Սեպտեմբերին կայանալիք «Օձունի գանձերը» փառատօնի մասնակիցների հետ:

ARMENIAN AMERICAN ORPHANS CHRISTMAS FUND, INC.

և «Քաջ Նապար» հանդէսն ու հեռուստաժամը ներկայացնում է

16-րդ ամեակի ԹԵԼԵԹՈՆ

Ի ՆՊԱՍՏ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴԻ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ԾՆՈՂԱՋՈՒՐԿ ԵՒ ՀԱՇՄԱՆԴԱՄ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՄԱՆԿԱՏՆԵՐԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒԹԵԱՆ

Կիրակի, Սեպտեմբեր 27, 2015, ժամը 3-12:00

ARMENIAN AMERICAN ORPHANS CHRISTMAS FUND, INC.

and "KACH NAZAR" Magazine and TV Show

Presents

Our 2015-2016 Project is to restore and renovate a Kindergarten in Gyumri, Armenia. Upon completion of our project, the kindergarten will be named "7 Agnels" in memory of the Avetisyan family whose members were brutally massacred back in January, 2015.

16th ANNIVERSARY

TELETHON

ON SUNDAY, SEPTEMBER 27, 2015

FOR DISABLED CHILDREN AND FOR THE RESTORATION OF CHILDREN'S HOMES

Mail your check Please to, (A.A.O.C. FUND,) P.O.BOX 250038, GLENDALE, CA 91225

Tel: 818-246-0125 • 818-239-6880 818-292-9619

E-mail:forourkids99@gmail.com • www.forourkids99.com

Non-Profit Organization. a Tax Exempt 501 (c) 3 Charity.

Massis Weekly

Volume 35, No. 32 **Saturday, September 5, 2015**

Artsakh Celebrates 24 Years of Independence

Congratulatory address of President Bako Sahakyan in connection withthe Day of the Artsakh Republic

On September 2, the Nagorno-Karabakh Republic marked the 24th anniversary of its hard-won independence. President of the Republic of Armenia Serzh Sarkisian Accompanied by Nagorno-Karabakh President Bako Sahakyan, an official Armenian delegation, as well as by local residents and diaspora Armenians marched from Stepanakert's Revival Square to the city memorial complex.

On this occasion President Sahakyan delivered the following congratulatory message

"Dear compatriots,

On behalf of the authorities and personally myself I cordially congratulate you on the Day of the Artsakh Republic, a holiday of special significance in the life of our nation.

With the birth of the Artsakh Republic on September 2, 1991 the Armenian people had two free and independent states, the cherished for centuries vision, which had faced numerous challenges before reaching the current time, became reality.

It was a common human aspiration to live on the own land with the right of mastering our own destiny that is intrinsic to every nation.

Consolidating and joining our efforts we defended our national dignity and future in the battlefield, and have been building a democratic with unshakable eagerness to become a full member of the international community.

It is a challenging and honorable path which we pass hand in hand with our sisters and brothers from Armenia and the Diaspora. Together we will implement numerous projects and definitely attain the realization of national goals.

Dear compatriots,

I congratulate you once again on this significant public holiday and wish peace and prosperity to your families and our precious and cherished Artsakh Republic."

Turkey EU Minister: Armenians were Massacred

ISTANBUL (News.am) -- Kurdish MP Haydar Konca from Turkey's pro-Kurdish "Peoples' Democratic Party" (HDP), and who had recently been appointed Minister of European Union (EU) Affairs and Chief Negotiator in the country's interim government, said it is very clear that the Armenians were massacred in 1915.

Konca, speaking with reporters, responded to a journalist's query as to what will his reaction be when the Armenian Genocide issue is put on the agenda of the European Parliament, reported Agos Armenian bilingual weekly of Istanbul.

"There is no difference that you say 'so called' genocide," said the minister. "It's very simple and clear that there was a massacre against the Armenians; everyone accepts that."

"The fact that genocide happened is explicit and clear and everybody accepts that. Right now, the issue is what it should be called. We will make a decision in our party about that," Konca told the press.

HDP is Turkey's sole parliamentary party that has recognized the Armenian Genocide, and called upon the country's government to confront its history.

'Electric Yerevan' Leaders Issue New Ultimatum to Government

YEREVAN (RFE/RL) -- Armenian youth activists campaigning against a controversial electricity price hike on Wednesday gave the Armenian government until September 11 to formally scrap the unpopular measure or face fresh nonstop demonstrations in Yerevan.

"On September 11 we will take to the streets and stay there because if we don't stay they [the authorities] won't give a damn," said Artush Chibukhchian, one of the leaders of the No To Plunder pressure group.

"Deceiving people is a normal thing for them," he told RFE/RL's Armenian service (Azatutyun.am). "The person occupying the post of the president can easily fool the people."

"We have had a chance to see that they say one thing and do another," said another leader of the group, Artur Kocharian.

Kocharian pointed to the government's decision to keep the energy prices unchanged for households and only some small businesses using up to 500 kilowatts of electricity a month. No To Plunder wants the government to subsidize the tariffs for all individual and corporate consumers.

The youth movement issued the ultimatum one day after about 100 of its members and supporters clashed with riot police at a section of Yerevan's Marshal Bagramian Avenue adjacent to President Serzh Sarkisian's offices. Six protesters were briefly detained by the police.

The number of the protesters paled in comparison with thousands of mostly young people who blocked another section of the avenue for two weeks in late June and early July. Sarkisian promised to temporarily subsidize the tariffs in response to those

Continued on page 2

Levon Aronian Wins Prestigious Sinquefield Cup Chess Tournament in St Louis

ST LOUIS -- Armenian grandmaster Levon Aronian has won prestigious Sinquefield Cup held in St Louis, USA, a 10-man tournament that has brought together leading chess players of the world.

The Sinquefield Cup, the second leg of the three-tournament 2015 Grand Chess Tour, boasts a strong lineup — half of the field is rated above 2800, and Aronian, at 2765, is the second lowest rated entrant in the 10-grandmaster field.

With six points out of possible nine Aronian placed ahead of reigning world champion Magnus Carlsen (Norway) and FIDE's current number four Hikaru Nakamura (USA).

Other grandmaster participating in the tournament were: World #2 Viswanathan Anand (India), #3 Veselin Topalov (Bulgaria), last-year's winner and World #5 Fabiano Caruana (USA), #6 Anish Giri (the Netherlands), #8 Wesley So (USA), #9 Alexander Grischuk (Russia) and #26 Maxime Vachier-Lagrave (France).

Aronian will leave for Baku, Azerbaijan next week to participate in the World Chess Cup 2015, that will be held from 10 September to 4 October 2015.

It will be a 128-player knockout chess tournament. The finalists will qualify for the 2016 Candidates Tournament.

Charles Aznavour Calls for Help for Migrants Arriving in Europe

PARIS -- In an interview with the AFP news agency, Charles Aznavour called for help for migrants who arrive in Europe.

"I experience real suffering when I see these people and their children wandering around. Luckily I escaped a similar fate, but I am sure my immigrant parents passed through such hardships," the legendary French-Armenian singer said stressing the need for measures to improve the condition of migrants.

The singer urged for efforts towards aiding the migrants, reiterating his earlier statement that many French villages and towns, forlorn by their residents, are enough for giving shelter to those people. There are doctors, motor mechanics, bakers and other specialists among them, which will enable to open schools and post offices in those small towns.



Aznavour said he believes that France will regain its one-time reputation of an exemplary country in case the idea is translated into action.

Aznavour did not rule out the possibility of a collaborative effort by different singers and composers to create a new song dedicated to the topic, like the song composed in 1989 to help Armenia in the aftermath of the devastating earthquake.

UN Forecasts Armenia Population to Drop Sharply by 2100

YEREVAN (Armradio.am) -- The population of Armenia will plunge to 1.8 million by 2100, the 2015 Revision of World Population Prospects by UN projects.

UNFPA Armenia Assistant Representative Garik Hayrapetyan and demographer Ruben Yeganyan shared insights on the results of the latest UN report.

According to a press release from the Media Center, the forecasts of demographic rates, Garik Hayrapetyan said, are made through average projections.

"Actually, projections are made by optimistic, medium variant and pessimistic scenarios. In 2100 Armenia will have 1.8 million population. The pessimistic variant projection states the population will decrease to less than one million in 2100," Hayrapetyan stated at a press conference.

The world population is projected to reach 11.2 billion from current 7.3 billion by 2100. Asia will see a likely contraction of the total population size. Europe will suffer a decrease, with 646 million people in 2100. The fastest-growing area is Africa where population is projected to reach 4.4 billion. Population growth in Turkey and Iran will remain high but they will also see a decrease.

"A major concern for Armenia is the number of workers per retiree. Currently the ratio in the country is 5.4 workers per retiree whereas the medium variant projection defines the number will be 2.4 per one retiree in 2100 and the pessimistic projection sets the one per one variant. It will evolve into a huge social-economic burden for workers and put an end to the principle of generations' solidarity," Hayrapetyan said.

With respect to the sex ratio in Armenia, Hayrapetyan said, "Now the sex ratio is 86 males to 100 females but this covers the whole population of Armenia. Meanwhile, among 0-19 olds males exceed females by 11.4," Hayrapetyan said.

Ruben Yeganyan prioritized migration as a main factor determining these rates. "Now 30 thousand people annually emigrate from Armenia." In the coming years Armenia's population is expected to decrease by 12 thousand per year.

Yeganyan added, however, that the UN projection could turn non-realistic. Yeganyan, though, does not consider the presented rates unexpected and believes the country should work to address the issue, develop mechanisms to influence the situation so that the projections do not eventually come true.

According to UN forecasts, in 2100 in Georgia the population could reach 2.4 million people; in Azerbaijan - 9.5 million; in Iran - 69 million; and in Turkey - 87 million.

U.S. Ambassador Promoting Turkish-Armenian Cross-Border Tourism

YEREVAN -- Highlighting the economic importance of the tourism sector and the value of cross-border cooperation, U.S. Ambassador Richard M. Mills, Jr. joined members of the Turkish-Armenian Tour Operators Network (TATON) during a meeting in Yerevan on Wednesday, August 26, 2015.

TATON developed as a result of USAID's "Bridges" project, an effort to develop economic activity on the cross-border region through tourism. The network's membership includes the most active travel companies and tour operators in the region.

"The Turkish-Armenian Tour Operators Network and its members are working together to tackle the difficult task of cross-border cooperation," Ambassador Mills said. "One of the most effective drivers of cooperation is common business interests. This association's goal of promoting business and the business interests of the local Armenian and Turkish communities is very laudable."

Armenian and Turkish tourism operators already offer cross-border tours. Turkish tour operators are part of an established tourism sector seeking to add extensions to traditional Turkish tour packages. Armenian operators seek to expand their offerings to include multi-country tours. TATON facilitates collaboration on such cross-border trips. Though TATON routinely operates through an online social network, occasional in-person gatherings allow tour operators from both sides to meet, share concerns, and formalize agreements on joint tours.

"Tourism plays an important role in economic development, and when

local communities cooperate economically, they broaden their horizons and share the benefits," Ambassador Mills said. "Cross-border tourism highlights the commonality of communities as much as it celebrates diversity. Armenia and Turkey share more than they sometimes realize: environment, history, and many aspects of culture."

USAID has been working with the Armenian tourism sector since the early 2000s. Primarily, it has focused on improving service quality and building the capacity of Armenia's tourism sector.

For the on-going "Bridges" project in Armenia, USAID partners with the AMAP (Armenian Monuments Awareness Project) Human Development NGO, best known for installing educational signage at some of Armenia's most unique historic and cultural tourist spots.

Prior to the creation of TATON, the "Bridges" project helped local partners to develop the Black Sea Silk Road Corridor through Greece, Turkey, Georgia, and Armenia.

10,000-Year-Old Bison Bone Found at Bottom of Armenia's Lake Sevan

YEREVAN. – The bone of a millennia-old bison (European forest buffalo) was discovered in Armenia's Lake Sevan, about six to seven meters below the water surface.

The bone discovered by "AYAS" Nautical Research Club at the intersection of Large and Small Sevans could be part of a backbone of a prehistoric animal.

"During research [at the Sevan Basin] we have discovered many archaeological findings in the form of remnants of household items," stated Rafayel Mkrtchyan, head of Nautical Research Club. "But this bone is unique."

Nina Manaseryan, PhD in Biology, told reporters on Sept 2, bones of ancient bison have already been found

in Sevan earlier, which means that there were forests around the lake, as bison inhabited in forests only. This time, the backbone of the Caucasian bison has been found.

To confirm the preliminary estimations concerning the age of the found bones, a DNA test will be done.

'Electric Yerevan' Leaders Issue New Ultimatum

Continued from page 1

protests dubbed "Electric Yerevan" in social media.

"The September 11 rally will be much more powerful," said Kocharian. Chibukhchian, for his part, did not exclude that No To Plunder will again try to occupy Marshal Bagramian Avenue.

The activists spoke to RFE/RL's Armenian service as they visited kiosks and other small businesses in downtown Yerevan, urging them to boycott the higher fees which the Electric Networks of Armenia (ENA) will start collecting this month. Legal entities not covered by the government subsidy will have to sign new power supply contracts with the ENA.

"We'll rip up those contracts," one female entrepreneur told the No To Plunder activists. "We'll kick them out."

New Book by Taner Akcam and Umit Kurt on Plunder of Armenian Properties

NEW YORK -- Turkish historians Taner Akcam and Umit Kurt have released a new English language book, titled "The Spirit of the Laws: the Plunder of Wealth in the Armenian Genocide" that examines the confiscation of Armenian properties during the genocide and subsequent attempts to retain seized Armenian wealth.

Pertinent to contemporary demands for reparations from Turkey is the relationship between law and property in connection with the Armenian Genocide. This book examines the confiscation of Armenian properties during the Genocide and subsequent attempts to retain seized Armenian wealth.

Through the close analysis of laws and treaties, it reveals that decrees issued during the Genocide constitute central pillars of the Turkish system of property rights, retaining their legal validity, and although Turkey has acceded through international agreements to return Armenian properties, it continues to refuse to do so. The book demonstrates that genocides do not depend on the abolition of the legal system and elimination of rights, but that, on the contrary, the perpetrators of genocide manipulate the legal system to facilitate their plans.

Taner Akçam holds the Kaloosdian and Mugar Chair of Armenian Genocide Studies at Clark University. His best-known books are A Shameful Act: The Armenian Genocide and the Question of Turkish Responsibility (Metropolitan Books,



2006); Judgment at Istanbul: The Armenian Genocide Trials, with Vahakn Dadrian (Berghahn Books, 2011); and The Young Turks' Crime Against Humanity: The Armenian Genocide and Ethnic Cleansing in the Ottoman Empire, (Princeton University Press, 2012), which in 2013 received the Middle East Studies Association's Hourani Book Prize and was listed by Foreign Affairs as "Best International Relations Books of 2012."

Umit Kurt is a Ph.D. Candidate in the History Department of Clark University. He is the author of The Great, Hopeless Turkish Race: Fundamentals of Turkish Nationalism in the Turkish Homeland 1911-1916 (Iletisim Publishing House, 2012). He teaches history at Sabanci University in Istanbul.

Tumo Center Opens in Stepanakert

STEPANAKERT (armradio) -- Tumo Center for Creative Technologies was launched in Nagorno Karabakh's capital Stepanakert today thanks to partnership between the Simonian Educational Foundation has partnered with the Armenian General Benevolent Union.

The official opening ceremony was attended by the Presidents of Armenia and Nagorno Karabakh Serzh Sargsyan and Bako Sahakyan.

AGBU will cover all operational costs of the center as well as startup costs in the framework of the TUMOxAGBU partnership, while the government of Nagorno-Karabakh Republic has provided the space in a historic building in the city center.

The Stepanakert program is expected to cater to 500 to 1,000 students who will participate twice a week for two hours per session, gaining 21st century skills, and studying animation, filmmaking, web development and game development, as well as supporting skills such as 3D modeling, computer programming, music, photography and graphic design.

Registration will start on the 14th of September, and students will begin their Tumo life during the first week of October. The Tumo Center for Creative Technologies is a free of charge after school program that started in Yerevan and subsequently opened a location in Dilijan. The TUMOxAGBU partnership has already opened a branch in Gyumri and is expected to spread Tumo to other locations in Armenia and beyond.

Armenian Community to Open New School Building in Istanbul

ISTANBUL (Agos) -- Istanbul's Armenian community is set to open a new school building in the city's Bakirköy district for the 2015-2016 academic year, replacing an older building that had served for 171 years.

"I am very happy to see that the school is almost completed. Moving to a new building after 171 years makes us all happy," Surp Asdvadzadzin Church Foundation head Mesut Özdemir said.

The Bakirköy Municipality exempted the Armenian school from certain fees to smooth the construction process. Despite such assistance, Özdemir said financing was challenging for the community, and the foundation depended on a number of fundraising efforts to finish the job.

The first day of the new school year, Sept. 28, will be the new Armenian school's official inauguration day.

The Bakirköy district on Istanbul's European side had housed one small school built over 170 years ago by Ottoman Armenian notable Hovhannes Dadyan.

Over the decades, the Armenians of Bakirköy have depended on that single school, but as their numbers increased capacity became a problem. The school currently has to accommodate 400 children - far more than the old building was able to cater for.

Özdemir said the school will now be able to offer a kindergarten service to the Armenian community, which will increase the number of students to 500.

"We now have a bigger sports and conference hall," said Özdemir, adding that parents and students had toured the site while it was still under construction and were excited for the upcoming school year.

There are currently 22 minority schools across Istanbul: Five of them are Greek, one is Jewish, and the remaining 16 are Armenian.

With a legal amendment in 2008, minority communities were allowed to acquire and renovate properties in their name while also several of their previously confiscated properties were returned.

Minority schools are regulated by the 1923 Treaty of Lausanne, which allowed Greek, Armenian and Jewish minorities to open their own schools. According to the treaty, the state must allocate money and the curriculum is determined by the state; the schools are able to offer education in both Turkish and their own languages.

Over 3,000 students currently attend one of Istanbul's 16 Armenian schools.

Two Armenian Families from Syrian City of Kobani Arrive in Armenia

YEREVAN (Panorama.am) -- Two Armenian families who fled the Syrian city of Kobani following attacks of the Islamic State militant group have arrived in Armenia. The families of two Tovmasian brothers (their third brother was killed) were met at Yerevan's Zvartnots Airport by their distant relatives, reporters, and representatives of Armenian Diaspora Ministry.

After fleeing to Turkey from Kobani to escape ISIS attacks, the Armenian families expressed an intention to move to Armenia. Ermenihaber.am reported citing the press office of the Armenian Patriarchate of Constantinople that only three Armenian families fled to Turkey from Kobani, and now two of them decided to settle in their historic homeland. They lived in a refugee camp until now.

The head of Diaspora Ministry Staff Firdus Zakaryan earlier told Panorama.am that during the first two weeks Mission Armenia NGO will provide accommodation for 8 members of the two families. Two apartments in close vicinity to each other will be chosen for the two families over that period. The issue of apartments' rent will be solved later. The problems related to the children's education and schools attendance have already been solved.

"Memory, Memorialization & Bearing Witness: Contested Memories of the Armenian Genocide in Turkey Today" By Dr. Armen T. Marsoobian

FRESNO -- Dr. Armen T. Marsoobian (Southern Connecticut State University) will speak on "Memory, Memorialization & Bearing Witness: Contested Memories of the Armenian Genocide in Turkey Today" at 7:30PM on Tuesday, September 15, in the University Business Center, Alice Peters Auditorium, Room 191, on the Fresno State campus.

The lecture is part of the Armenian Studies Program Fall 2015 Lecture Series, with the support of the Leon S. Peters Foundation.

Professor Marsoobian will describe his on-going project memorializing the Armenian Genocide in Turkey. The project consists of photography exhibitions in Turkey, two books and the creation of memorial sites related to the story of his mother's family, the Dildilians, in Ottoman Turkey before, during and after the genocide. Extensive memoirs, oral testimonies and photographs from the Dildilian photographic archive are used to tell this history. Besides describing the project he will analyze the role memorialization plays in collective memory, especially in situations subverted by genocide denial.

Armen T. Marsoobian is Professor and Chair of Philosophy at Southern Connecticut State University. He has lectured and published extensively on topics in philosophy and genocide studies. His most recent book, Fragments of a Lost Homeland: Remembering Armenia, is based upon extensive research about his family, the Dildilians, who were accomplished photographers in the late Ottoman period.

Photography exhibitions of the collection have been mounted in Istanbul, Merzifon, and Diyarbakir, and soon in New Haven, London, Ankara, Yerevan, and Watertown. Dildilian Brothers: Photography and the Story of an Armenian Family in Anatolia, 1872-1923, a bilingual English-Turkish photography book, will appear later this year. He has received the Hrant Dink Foundation Prize for Historical Research for his work on the Armenian Genocide.

The lecture is free and open to the public. Free parking is available, using a coupon code #273605, in parking kiosks in Fresno State Lots P5 and P6, near the University Business Center.

For more information about the lecture please contact the Armenian Studies Program at 278-2669, or visit our website at www.fresnostate.edu/armenianstudies.

Rev. Berdj Djambazian Appointed Minister to the Armenian Evangelical Union of North America

GLENDALE -- Rev. Dr. Ron Tovmassian, Moderator of the Board of Directors of the Armenian Evangelical Union of North America (AEUNA), announced the unanimous appointment of Rev. Berdj Djambazian as the new Minister to the Union of AEUNA. This interim appointment made by the AEUNA Board is scheduled to be confirmed at the AEUNA Biennial General Assembly in Chicago, IL in June of 2016.

Rev. Berdj was born in St. James Armenian Convent in the old city of Jerusalem to Hampartzoum and Mary Djambazian, survivors of the Armenian Genocide and active members of the Second Armenian Evangelical Church of Marash pastored by Rev. Agbabian. He received his primary education in Jerusalem, Amman and Beirut. In 1962, he attended Beatenberg Theological Seminary in Switzerland, graduating in 1967.

From 1967-1973, Rev. Berdj pastored two Armenian Evangelical Churches in Biver and St. Antoine in Marseille, France. While pastoring, he attended the National Conservatory of Music in Marseille for vocal training from 1968-1972. He continued his theological studies at NEST (1975-1977) taking classes from Professor Kenneth Bailey and former hostage in Lebanon, Dr. Benjamin Weir.

From 1973-1981, Rev. Berdj served as an educator, pastor and relief worker in the Armenian Evangelical Church of Nor Marash in Bourj Hammoud, Lebanon, and the Armenian Evangelical Shamlian Tatigian Secondary school with 900 students. While in Bourj Hammoud, with his late brother Rev. Hagop, he established a medical clinic with 6 doctors, providing surgical, dental and pharmaceutical services as well as the only ambulance service in the area during the Lebanese civil war.

From 1981-1993, he served as the Senior Pastor of UACC, after which he was instrumental in establishing three new congregations one of which was co-founded with Rev. Dr. Ara Chakerian.

From 1997-2007, he served as the Associate Pastor of World Missions and Adult Education at the Glendale Presbyterian Church, and led more than 40 relief, evangelism and outreach teams to Lebanon, Syria, Jordan, Egypt, Sudan, Turkey and Armenia. The ability to communicate in six languages, including Armenian, German, French, Arabic, Turkish and English, and being equipped with the gift of cultural sensitivity and understanding, made his trips impactful.

From 2005-2008, Rev. Berdj made several trips to Sudan delivering relief to Darfurian Genocide survivors. He was instrumental in building the largest church on the eastern side of the Nile River. After the 1988 earthquake in Armenia, he made more than 25 trips to the stricken region delivering medical and other relief support. Believing that all mentally challenged children are true gifts from God, he has committed himself to that task of providing relief, in the form of food, clothing and medical supplies, to ensure that all such children receive the right to live a dignified quality of life.

Rev. Berdj Djambazian was invited by the late Vehapar Vazken I of Echmiadzin to teach at the Kevorkian Seminary to more than 75 priests. He taught classes on homiletics and on "How to encounter the Sectarian movements in Armenia." He is celebrating the 30th anniversary of his "Nor Huys" weekly Television program, reaching out to the Armenian community at large with the gospel of Jesus Christ. He has authored a book called "Hayazartnoum."

Rev. Berdj Djambazian is married to Shoghig (Balekian) and they are blessed with three children: Daniel, Helen and Pauline, who is married to Dr. Gerrard Andonian; as well as 2 grandchildren, Julian 7 and Lauren 5.

Rev. Berdj Djambazian has committed himself to become the Minister to the Union not for the purpose of being served but to serve and to give all of the time, attention and love this critical position demands and deserves. His hope and prayer is that his past experiences and background will enhance his ability to discharge his duties with professional competence and a compassionate heart, embodying a Christ-like character in action and decision.

Armenia School Foundation Refurnishes Seven More Schools in Armenia

GLENDALE - Armenia School Foundation (ASF USA), a non-profit organization dedicated to refurnishing remote and small schools in Armenia and Artsakh, is proud to announce the completion of seven additional school projects in 2014.

A total of 257 new student desk/chairs sets, 32 teacher desk/chair sets, 27 blackboards, 57 book shelves, 37 coat hangers and 2 preschool large tables including 16 chairs were delivered to the following eight schools:

· Marmarashen school in Ararat region (Funded by general donations to ASF)

· Koti border village school in Tavoosh region (Funded by general donations to ASF)

· Chinari border village high school in Tavoosh region (Funds donated in lieu of flowers in memory of Mr. Vardan Sookasian).

· Chinari border village kindergarten in Tavoosh region (Funded by general donations to ASF)

· Aygetzor border village kindergartens in Tavoosh region (Funds donated by Valod Avanesian and family in memory of Mrs. Arshalous Nazarian)

· Karashamb village high school in Kotayk region (Funds donated by Mr. Harout Bronozian – Custom Probiotics, Inc.)

· Karmirgyugh village school #1 in Gegharkunik region (partially furnished by general donations to ASF).

ASF Karmirgyugh School _1 6th Form ClassroomIn May of 2014, ASF held a very successful Salsa Night event attended by 220 guests. Proceeds from this event, our annual raffle sales, combined with a number of generous "In lieu of", "In memory of" and other donations enabled ASF USA to raise the funds needed to furnish these seven schools.

In October of 2014 ASF USA, Ararat 70th Celebrations Arts Committee and Melik Voskanian Foundation joined hands to organize an art and sculpture exhibit and book dedication event in recognition of architect, artist and sculptor Rostom Voskanian. Proceeds from the sale of this exhibit provided funds to furnish Karmirgyugh School #1 in entirety and set up a permanent exhibit hall of Rostom Voskanian's lifelong heritage in Yerevan.

In January of 2015 ASF USA received a generous donation from Tamberchi Foundation. Through these funds ASF USA is in the process of completing several large projects during 2015.

"We would like to express our gratitude to our supporters and donors for their continued support, encouragement and their belief in improving the educational environment of our future generations. We have been planning to expand our services. With funds generated through these significant donations we will have the opportunity to offer more diversified offerings in 2015 and beyond" stated Moneh Der Grigorian, Chairman of the ASF USA Board.

Armenia School Foundation (ASF USA) is a nonprofit and non-sectarian, 501c3 organization, founded in May 2003. To date, ASF has provided over 9750 new student and teacher desk/chair sets to 220 schools: serving 19,500 students, in remote regions of Armenia and Karabagh.

For more information visit www.armeniaschoolfoundation.org

ՀԱՐՑԱԶՐՈՅՑ ՍԱՐԳԻՍ ՀԱՑՊԱՆԵԱՆԻ ՀԵՏ

Ծ.Խ. Ի մտի ունենալով տարածաշրջանային հարցերու փորձագէտ եւ վերլուծաբան՝ Սարգիս Հացպանեանի անցած նանապարհը, ամբարած տեղեկութեանց պաշարը, յանդուգն եւ նոյնիսկ ծայրայեղ մտածելակերպը, անմիջական ու ջերմ խառնուածքը, միշտ ալ ցանկալի է հարցազրոյց սկսիլ իր հետ: Դժուարը՝ զայն սահմանափակելն է, որովհետեւ նոր ու նոր ծալքեր կը բացուին ամէն մէկ կարծիքի արտայայտմամբ: Կրնամ համաձայն չըլլալ իր կարծիքներուն հետ, բայց չէ՛ կրնար չտեսնել, որ անոնք իր համոզումներուն արտայայտութիւնն են: Ինչ որ պիտի կարդամ, յապաւուած սղագրութիւնն է մօտ երեք ժամ տեւած մեր հարցազրոյցին, որ տեղի ունեցաւ Երեւանի մէջ, Յուլիս 2, 2015-ի առաւօտուն:

Հ. Մեր հարցազրոյցը սկսինք Բաղրամեան պողոտան փակող երիտասարդներու շարժումով: Տասը օրերէ ի վեր համացանցի միջոցաւ Լոս Անճելըսէն կը հետեւէի իրենց եւ խանդավառուած էի իրենցմով: Հիմա որ երկու օրէ ի վեր Երեւան կը գտնուիմ եւ ներկայ եղած եմ ցոյցերուն, կը տեսնեմ որ նոյն խանդավառութիւնը չէ մնացած: Կ'ուզեմ իմանալ ձեր կարծիքը այս շարժման մասին:

Պ. Ես ալ Լոս Անճելըս գտնուած միջոցիս լսեցի իրենց մասին ու Հայաստան վերադառնալէս անմիջապէս եւ հոն էի: Իմ տեսածներէս եկայ այն եզրակացութեան, որ այդ շարժումը այդքան ալ ինքնաբուխ չէր: Ես 2008-ի համաժողովրդական շարժման ամենէն աշխոյժ մասնակիցներէն մին ըլլալով, զարմացայ երբ տեսայ, որ այս երիտասարդներուն՝ ճիբերով ձրի կերակուր եւ ըմպելիք կը բաժնուէր: Ճիբէ հասկացողութիւնը այստեղ, ատելի է ժողովուրդի մօտ, որովհետեւ կը կապուի՝ օլիգարխիայի (սակաւապետութեան) հետ: Այս վիճակը շարունակուեցաւ մինչեւ երեք օր առաջ, երբ ցուցարարներու մէկ հատուածը որոշեց տեղափոխուիլ Օփերայի հրապարակ: Հայաստան ասացուածք մը կայ՝ ձրի պանիրը թակարդին մէջ կ'ըլլայ: Դժուար չէ հետեւցնել, որ կերակուր մատակարարողը իշխանահաճոյ պէտք է ըլլար: Իշխանութիւնները ժամկէտեր կը սահմանեն ազատելու հրապարակը, բայց իրենց համար այդ իրագործելը շատ հեշտ բան է որեւէ ժամանակ: Իմ բնակավայրս Բաղրամեանի անմիջականութեան ըլլալով, ես կը տեսնեմ որ առաւօտները հոն գրեթէ մարդ չըլլար: Ես հոնկէ կու գամ այս հարցազրոյցին համար եւ իշխանութիւնները եթէ ուզեն, այս պահուն իսկ կրնան ազատել պողոտան, որովհետեւ մարդ չկայ հոն: (Այս հարցազրոյցէն չորս օր ետք, ոստիկանները ցրուեցին ցուցարարներուն-ՅՏԴ): Այս կը նշանակէ, որ իշխանութիւնները այս վիճակը իրենց նպատակին կը ծառայեցնեն: Բանական մարդը այս բոլորէն կրնայ հետեւցնել, որ այս շարժումը այն չէ, ինչ որ ժողովուրդի մեծամասնութիւնը կ'ուզէ տեսնել: Ես այդ երիտասարդներուն մէկ մասը մօտէն կը ճանչնամ եւ գիտեմ, որ անկեղծ են իրենց ձգտումներուն եւ պահանջներուն մէջ, որոնք արդարացի ու տեղին կը գտնեմ: ,Ո՛չ, Թալանին կարգախօսը շատ ճիշտ ընտրուած է: Ես հոն կը տեսնեմ հասարակութեան տարբեր շերտեր ներկայացնող անձեր, նոյնիսկ անոնք, որոնք կայուն եկամուտի տէր են: Անոնց համար խնդիրը արդարութեան պահանջի հարցն է, ինչպէս որ էր 1988-ի կամ 2008-ի համաժողովրդական շարժումներու պարագային, երբ Ազատութեան հրապարակը դարձած էր ազատ քննարկումներու եւ ժողովրդավարութեան հրապարակ: Կը տեսնեմ, որ իրօք շատ մաքուր տարրեր կան հոն, բայց այս օրուան դրութեամբ, իշխանութիւններու ցանկութեամբ շարունակուող պայքարի մը ականատեսը կը դառնանք: Երեւի ժողովուրդը կը հասկնայ այս բոլորը: Այս ժողովուրդը շատ բաներէ անցաւ ու քաղաքականապէս հասուն է հասկնալու այն ինչ որ կը դառնայ: Սերժին պէտք է այս շարժումը, որ Ռուսերուն հետ պազար ընէ: Կայ երկրորդ հանգամանք մը ալ, որ հիմա շատ չերեւիր, բայց ապագային յայտնի կը դառնայ: Սերժը իր երկրորդ իշխանութեան երկրորդ բաժնին մէջ է եւ իրեն պէտք է երիտասարդական ինչ որ խաւ, որ իրեն փեսային՝ Միշիկ Մինասեանին, որ Վատիկանի մօտ արտակարգ լիազօր դեսպան է եւ Հայաստանի մամուլի մենաշնորհը իր ձեռքին ունի, ներկայացնէ հասարակութեան իբրեւ անկուսակցական, երիտասարդ, Եւրոպական կրթութիւն ստացած փորձագէտ, դիւանագիտական շարքերէ անցած, եւ այլն, եւ այլն այլընտրանք: Այս շարժման ուղղորդուող, ոչ թէ մաքուր ակունքներէ եկող, հատուածի ետին կանգնողը ես կը խորհիմ Միշիկ Մինասեանն է:

Հ. Ձեր խօսքին մէջ նշում ըրիք 1988-ի եւ 2008-ի շարժումներուն: Ձեր Լոս Անճելըս կեցութեան ընթացքին ակնարկութիւն ըրած էիք, որ եթէ Լեւոն Տէր Պետրոսեան կարծր մնար 2008-ին, այս իշխանութիւնները հեռացած կ'ըլլային: Հետաքրքրական է, որ նոյն կարծիքը լսած էի նաեւ Զարուհի Փոստանճեանէն, երբ տարիներ առաջ Լոս Անճելըս այցելած էր: Իմ մտքին մէջ հարց ծագած էր այդ ժամանակ ալ, որ եթէ ճիշտ է ձեր վարկածը, ուրեմն ինչո՞ւ Տէր Պետրոսեանի շուրջը միայն հազար կամ քիչ մը աւելի մարդիկ կային, փոխան տասնեակ հազարաւորներու, որոնք կրնային արգելք հանդիսանալ հրապարակէն իր բռնի հեռացման:

Պ. Քանի որ ես 2008-ի շարժման աշխոյժ մասնակիցներէն մին էի, կրնամ այդ ամէնը նկարագրել ձեզի համար: Երեւի առաջին անգամն է, որ մամուլին պիտի յայտնեմ այն ինչ որ մինչեւ հիմա չեմ յայտնած: Այդ օրուան իշխանութիւնները, որոնց վերարտադրումն է ներկայինը, պարտուեցան Փետրուար 26-ին, որուն մէջ իմ դերակատարութիւնը էական էր: Ես հոն միակ սփիւռքահայն էի եւ օրը երեք անգամ ելոյթ կ'ունենայի ժողովուրդին համար եւ կը խօսէի Ֆրանսայի սահմանադրութիւնէն ինչպէս նաեւ Հայաստանի, որ առաջինին գրեթէ կրկնօրինակն էր ու կը ներկայացնէի եղած շարժման օրինականութեան հիմքերը: Ժողովուրդին կը տեղեկացնէի, որ վախնալիք բան չունին եւ թէ այդ վախը կու գայ Սովետական շրջանի մտայնութիւնէն: Անկախ Հայաստանի միակ համաժողովրդական շարժումն էր, նման 1988-ի շարժման: Համաժողովրդական ըսելով կը հասկնանք ժողովուրդի բոլոր խաւերու մասնակցութիւնը ապահովող շարժում: Ես իմ տեսածիս չէի հաւատար: Ամբողջ ինը օր ու գիշեր ես Ազատութեան հրապարակի իմ վրանին մէջ կ'ապրէի, որովհետեւ ձերբակալման առաջին հրամանը իմ դէմ եղած էր, Փետրուար 23-ին եւ ես ատոր վրէժը լուծեցի Փետրուար 26-ին: Իմ դէմ ձերբակալման հրամանագիրը եղած էր, որպէս օտարահպատակ, Հայաստանի ներքին քաղաքականութեան միջամուխ ըլլալուս համար: Ես ալ պատասխանած էի, որ երբ կը մասնակցէի Արցախեան ազատամարտին, ինչո՞ւ այդ ժամանակ առարկութիւն չբերին: Հիմա պատմեմ թէ ի՞նչ պատահեցաւ:

Նախագահական ընտրութիւններուն Հայաստան ժամանած Եւրոպական դիտորդները մշտական կապի մէջ էին հետս եւ յաճախակի օրէն կ'այցելէին ինծի: Անոնք ըսին թէ հրապարակի վրայ աւելի շատ մարդ կը տեսնեն քան ընտրութեան օրը ընտրական տեղամասերուն մէջ իրենց նշմարածները: Մենք այդ մէկը գիտէինք, բայց օտարէն եկող յաւելեալ վկայութիւն մըն էր ատիկա: Անոնցմէ երկուքը նոյնիսկ առաջարկեցին ինծի, որ հրապարակաւ հրաւիրեմ իշխանութիւնները եւ դիտորդները, որքան եւ հաշուեն հրապարակի վրայ եղող ժողովուրդի քանակը, համոզուելու համար թէ ո՞վ ստացած է ժողովուրդի քուէներու մեծամասնութիւնը: Ուրեմն իմ ամենօրեայ ելոյթներէս մեկուն մէջ ես յայտարարեցի, որ Հայատանի տարածքին 1923 ընտրատեղամաս կայ: Թող այս հրապարակը դառնայ 1924-րորդը, որ բաց է եւ արկղ զողնալու կամ կեղծելու առիթ չկայ: Ես դիտորդներէն պիտի խնդրեմ ըսի, որ հաշուեն ներկաներու թիւը, հակառակ անոր, որ ջերմաստիճանը զէրօյէն վար է: Հաշիւները ցոյց պիտի տան ըսի, որ այստեղ գտնուողներս ընտրութեան մասնակցողներուն 60 տոկոսէն աւելին կը կազմենք: Եթէ այդպէս է, ուրեմն ինչպէ՞ս եղաւ որ Սերժ Սարգսեանը ընտրուեցաւ: Իմ այս առաջարկը որդեգրուեցաւ եւ իւրացուեցաւ շարժման կողմէ:

Յայտարարեցի նաեւ, որ թող Սերժ Սարգսեանը ցոյց մը կազմակերպէ: Եթէ այստեղ հաւաքուածներուն կէսը կարենայ հաւաքել, ես դուրս պիտի գամ այս հրապարակէն ու ներողութիւն խնդրեմ իրմէ, որ սխալած եմ եւ պիտի ընդունիմ որ ինք իսկապէս ՀՀ նախագահն է: Իշխանութիւնները ինկան այս ծուղակին մէջ, որովհետեւ Հայաստանի մէջ այսպէս ըսած տղամարդու կեցուածք կայ, որուն թասիպի ընկնել կ'ըսեն: Յաջորդ օրը թերթերը գրեցին այս մասին եւ իշխանութիւնները չէին սպասէր այսպիսի զարգացում: Մարտահրաւէրը երկու մաս ունէր: Մին՝ եթէ կարող էք, դուք ալ մարդ հաւաքեցէք եւ ցոյց տուէք ձեր ուժը, եւ երկրորդ՝ դիտորդները իրենց տեղեկագիրը պէտք է պատրաստէին մինչեւ Մարտ 4: Ուրեմն նախքան այդ, իրենք ալ թող գան եւ հաշուեն երկու կողմի ցուցարարները: Յաջորդ օրը իշխանութիւնները յայտարարեցին, որ ամսուն 26-ին կը հրաւիրեն իրենց կողմնակիցները Հանրապետութեան հրապարակ, շնորհակալութիւն յայտնելու անոնց: Երեկոյեան դիտորդները եկան վրանս ու ըսին թէ առաջարկս սքանչելի արձագանք գտած է եւ այդ գլխաւոր մեխն է որուն կրնանք խփել: Ըսին թէ, դուք բռնեցիք իշխանութիւններու պորտէն եւ իրենք պիտի խեղդուին, որովհետեւ չունին ասոր տակէն դուրս գալու իրաւիճակ: Ձեզ հաշուել կը նշանակէ կեղծիքի բացայայտում: Լեւոն Տէր Պետրոսեանը այնքան ուրախ էր այս առաջարկովս, որ ինձմէ խնդրեց անընդհատ կրկնել զանիկա: Ես իրեն ըսի, որ ուրիշ բան ալ պիտի ընեմ՝ պիտի յայտարարեմ, որ Կիրակի Մարտ 2-ին այստեղ հաւաքուին մէկ միլիոն մարդ, որ աւելին է քան ընտրութեան մասնակիցներու թիւը: Փետրուար 26ը ամենակարեւոր թուականն է անկախ Հայաստանի պատմութեան մէջ, այն օրը, որուն համար կը դատապարտեմ Լեւոն Տէր Պետրոսեանին անձամբ:

Հ. Ինչո՞ւ:

Պ. Բացատրեմ: Ես անժամկէտ հացադուլի մէջ էի, իմ նման 20 ուրիշներու հետ, որոնց մէջ էր Ղարաբաղ Կոմիտէի անդամ, հիմա արդէն ողորմած Սամուէլ Գէորգեան: Փետրուար 26-ին Սերժ Սարգիսեանի հաւաքը ընթացքի մէջ էր: Ըսի իրենց թէ պիտի երթամ այդ հաւաքին ու գացի: Հակառակ անոր, որ Ազատութեան հրապարակէն դուրս գալով ես ենթակայ կը դառնայի ձերբակալման, դիմեցի այդ քայլին լաւ իմանալով թէ ի՞նչ հետեւանք կրնայ ունենալ: Սերժ Սարգիսեանը հաւաքը կազմակերպած էր իբրեւ շնորհակալութիւն յայտնելու իր կողմնակիցներուն, բայց իսկութեան մէջ, այն ձրի համերգ էր, որուն կը մասնակցէին Հայաստանի բոլոր աստղերը, որոնց բնականաբար ժողովուրդը կը ցանկայ տեսնել եւ լսել: Երկրորդ, բոլոր հոն հաւաքուածները բերովի մարդիկ էին, օթօպիւսներով բերուած, որոնք պետական հիմնարկութիւններու աշխատակիցներ էին եւ բերուած էին վախի մթնոլորտի տակ: Նոյնիսկ այդ զօռով բերուածներով 30-40 հազար մարդ չէին կրցած հաւաքել եւ երեք անգամ երկաթներով ցանկապատած էին, որ անգամ մը ներս մտնողին ելլելը դժուար ըլլայ, նոյնիսկ եթէ զուգարան երթալ ուզէ: Հոն ներկայ գտնուող իմ ծանօթներէս ինծի հեռաձայնեցին եւ պարզեցին, որ այս է մեր վիճակը:

Ես մտածեցի, որ երեւի կարելի է այդ մարդիկը Հանրապետութեան հրապարակէն բերել Ազատութեան հրապարակ: Մեր շարժման համակարգողներէն երեք հոգի յայտնեցի այս միտքը, ըսելով որ եթէ այս պահը կորսնցնենք, մեր շարժումը տեղ չի հասնիր: Անոնք չհաւատացին ինծի, ներառեալ Դաւիթ Շահնազարեանը, Գրիգոր Յարութիւնեանը եւ Արամ Մանուկեանը: Ես ըսի պիտի երթամ ու սկսայ Հիւսիսային պողոտայով քալել դէպի Հանրապետութեան հրապարակ, ընկերակցութեամբ հազարաւոր ժողովուրդի: Ոստիկանութիւնը

Շար.ը էջ 14

ՀԱՐՑԱԶՐՈՅՑ ՍԱՐԳԻՍ ՀԱՑՊԱՆԵԱՆԻ ՀԵՏ

Շարունակուած էջ 13-էն

նոյնիսկ եթէ փորձէր զիս ձերբակալել, պիտի չի կրնար ճեղքել զիս շրջապատող հազարաւոր ժողովուրդը:

Հասանք հրապարակ, ուր Շուշան Պետրոսեանը ելոյթ կ'ունենար, բայց ժողովուրդը իրեն չէր նայէր, այլ մեր յառաջացող բազմութեան: Անոնք մեզ տեսնելով, իրենց ձեռքի՝ «Յառաջ Հայաստան» Սերժի պաստառները վար նետեցին ու սկսան գոռալ՝ Սերժիկ հեռացիր: Ես ըսի որ եթէ այդ երկաթէ ցանկապատները ձեւով մը կտրենք, ժողովուրդին ճամբայ բացած կ'ըլլանք դուրս գալու հոնկէ: Սկսանք ոստիկանութեան հետ բախում հրահրել ու այդ միջոցին ժողովուրդն ալ ներսէն կոտրեց կարգ մը երկաթներ: Երբ երկու պատնէշներ փլցուցին, ես ժողովուրդին յայտարարեցի, որ եթէ հակառակ են իշխանութեան, կրնան գալ եւ միանալ մեզի, Ազատութեան հրապարակի վրայ: Ժողովուրդը մէկ մարդու նման հոսք սկսաւ դէպի Ազատութեան հրապարակ, այնքան որ Հիւսիսային պողոտային վրայով քայլելիք տեղ չկար: Իշխանութիւնները շշմած էին: Կառավարական շէնքերու վրայէն կը դիտէին ու կը նկարէին թէ ի՞նչպէս այդ հաւաքուած ժողովուրդը, որ իբր թէ Սերժի համար եկած են, կը ձգեն ու կու գան դէպի մեզ:

Ասիկա կը պատահէր Փետրուար 26-ի երեկոյեան մօտ: Եկողները իրենց տրամադրուած Սերժի պաստառները կը նետէին գետին ու բեմէն կը յայտարարէին, որ իրենք այսինչ կամ այնինչ հիմնարկի աշխատողներ են եւ բերուած են հակառակ իրենց կամքին: Իրենք Սերժին չեն քուէարկած, այլ՝ Լեւոն Տէր Պետրոսեանին եւ ասկէ ետք կեղծիքը պէտք է վերջ գտնէ: Ասիկա իշխանութիւններու վերջն էր: Ես ժամը 8-ի մօտերը ելոյթ ունեցայ, շնորհակալութիւն յայտնելով ժողովուրդին եւ Լեւոն Տէր Պետրոսեանի խնդրանքով հացադուլը դադարեցուցինք: Ելոյթիս մէջ յայտարարեցի, որ իշխանութիւնը անցած է ժողովուրդի ձեռքը: Հանրապետութեան հրապարակի եւ Ազատութեան հրապարակի ժողովուրդը միասնական է եւ վիհը միայն ժողովուրդի եւ այս իշխանութեան միջեւ է: Փետրուար 26-ի այդ գիշերը վերածուեցաւ փառատօնի: Ամէն կողմէ մարդիկ հոն հաւաքուեցան, մօտ 700,000 հոգի: Ես իմ կեանքիս մէջ այդպիսի բան չեմ տեսած եւ այդքան երջանիկ օր չեմ ապրած: Ցաճախ լալս կու գայ, երբ այդ օրը կը վերյիշեմ: Մինչեւ լուսաբաց մարդիկ հոն էին եւ ասեղ ձգելու տեղ չկար: Այդ գիշեր իշխանաւորները՝ Սերժ Սարգիսեան, Ռոպերթ Քոչարեան, եւ այլն պատրաստուած էին օդանաւերով փախչիլ Հայաստանէն:

Ուրեմն, Կարապի լիճի մօտ, Արարատ Զուրապեանի սրճարանին մէջ հաւաքուեցաւ Լեւոն Տէր Պետրոսեանի շտապը: Ես այս շարժման մասնակից որեւէ կուսակցութեան կամ հասարակական կազմակերպութեան անդամ չէի, այլ պարզապէս Սարգիս Հացպանեան անհատ մը եւ մինչեւ այդ պահը իրենց որեւէ ժողովին ներկայ չէի եղած: Այս անգամ զիս ալ հրաւիրեցին: Երբ Լեւոն Տէր Պետրոսեան կարծիքս ուզեց, ըսի թէ միակ բանը որ պէտք է ընել այդ պահին, ժողովուրդը տեղափոխել է դէպի Բաղրամեան պողոտայ: Ատիկա բաւարար պէտք է ըլլայ, որ իշխանութիւնները հեռանան: Պատասխանեց թէ ուրեմն դուն ա՛լ այդպէս կը մտածես: Ըսի թէ չեմ գիտէր ուրիշներ ի՞նչ կարծիք արտայայտած են, բայց կը տեսնեմ որ այս պահը պատմական այն պահն է, որ պէտք չէ կորսնցնել եւ «Քուլմինասիոն» պէտք է դիտարկուի, այսինքն այս պահը պէտք է վերջնական հանգրուանին՝ գագաթնակէտին հասցնել: Ըսի իրեն, որ եթէ ինք այդ քայլին չդիմէ, իշխանութիւնները պիտի հասկնան, որ ինք նպատակ չունի նման բանի եւ պիտի փորձեն իրենց դիրքերը ամրացնել ուժային նախարարութիւններու՝ բանակի, ազգային անվտանգութեան, ոստիկանութեան եւ ներքին գործերու նախարարութեան ուժերու օգտագործումով: Կամ հիմա, կամ երբեք: Ինք ինծի շնորհակալութիւն յայտնեց բոլոր ըրածներուս համար: Խօսքս աւարտած ըլլալով, ես մեկնեցայ սրճարանէն, որով սովոր էի այդ ժամուն ելոյթ ունենալ ժողովուրդի առջեւ:

Ելոյթիս մէջ նշեցի թէ չեմ գիտեր Լեւոն Տէր Պետրոսեանը ի՞նչ պիտի որոշէ, բայց ես իմ կարծիքը յայտնած եմ եւ պիտի սպասեմ իր որոշման: Ժողովուրդին չյայտնեցի թէ ի՞նչ կարծիք տուած էի Տէր Պետրոսեանին, որովհետեւ վստահ եմ, որ եթէ ըսէի, առանց խնդիրի անոնք կը քալէին Բաղրամեան: Մինչեւ հիմա զղջացած եմ, որ չեմ ըսած: Շատ զղջացած եմ: Երեւի քիչ բաներ կան, որ ես զղջացած եմ կեանքիս մէջ, սակայն ամենակարեւոր զղջումը սա է: Այդ օրը մենք պէտք է վերցնէինք հրապարակի այսպէս ըսած առաջնորդութիւնը կամ պատասխանատուութիւնը:

Եթէ ես կամ Նիկոլ Փաշինեանը եւ կամ Միքայէլ Հայրապետեանը Փետրուար 26-ին յայտարարէր, որ Լեւոն Տէր Պետրոսեանը կը յապաղի քայլ առնելէն, մենք ժողովուրդ, ձեզի կը դիմենք, (ինքը միշտ անընդհատ ժողովուրդին դիմելու սովորութիւն ունէր), եթէ այդպէս անակնկալ խօսք ուղղէինք...: Իմ մտքով չանցաւ այդ, պարզապէս մենք շատ հաւատարիմ եղանք: Ես որ շարժման հետ կապ չունեցող անհատ էի, ոչ ռեւանշիստ (վրէժխնդիր) էի եւ ոչ ալ իշխանութեան խնդիր ունէի: Ինձի համար ինչ տարբերութիւն թէ ո՞վ եկած է իշխանութեան: Ես կ'ուզէի, որ երկրին մէջ փոփոխութիւն կատարուի, ժողովրդավարութիւն ըլլայ: Բոլորը կը տեսնէին, որ ես ազնիւ մասնակից էի, որեւէ ասպարէզային ձգտում չունէի: Եթէ ես այդ կոչը ըրած ըլլայի, հիմա թերեւս իշխանութեան գլուխ կ'ըլլային ժողովրդավարական ուժեր: Կոչը չընելուս համար շատ զղջացած եմ: Ըստ իս՝ Լեւոն Տէր Պետրոսեանը ամենամեծ մեղքը գործեց այդ օր:

Ժողովրդական իշխանափոխութիւնը եղած էր եւ իշխանութիւնները կարող չէին այդ պահի վիճակը բացատրել: Խայտառակ վիճակի մէջ էին: Դիտորդները, լրագրողները հարց կու տային Սերժ Սարգիսեանին թէ այս ի՞նչ վիճակ է ու ան չէր կրնար բացատրութիւն տալ: Նոյն էր պարագան Ռոպերթ Քոչարեանի: Ամսուն 27-ին իրենցմէ ձայն չելաւ: Հա՛, ամսուն 26-ին Լեւոն Տէր Պետրոսեանը յայտարարեց, որ ոգեւորութիւնը իր տեղին, պարը իր տեղին, բայց ինք համաձայնեցնելիք բաներ ունի: Կ'ակնարկէր Եւրոպական պետութիւններու դեսպաններուն հետ հանդիպումներու, որոնցմէ ետք իր որոշումը պիտի հաղորդէր: Այդ ընթացքին, ետքէն իմացայ, որ երեք հատ օդանաւ, քանի հատ ուղղաթիռ պատրաստ էին Զուարթնոց եւ Էրէբունի օդանաւակայաններու մէջ, փոխադրելու իշխանութեան մարդիկ իրենց ընտանիքներով Ռուսաստան, Տուպայ եւ կարող է նոյնիսկ Պուլկարիա: Այս գիտէր Լեւոն Տէր Պետրոսեանը եւ ամպիոնի վրայ իր հետ կանգնած որոշ մարդիկ:

Այդ ամպիոնը, հիմակուան երիտասարդներու շարժման նման, իր մէջ ունէր շատ մաքուր ու իտէալիստ, ռոմանթիկ «Ռոպին Հուտեեր» որոնցմէ մէկը ձեր խոնարհ ծառան, եւ կային այդտեղ «շան-լակոտներ» միայն իշխանութեան գալու ձգտումով «ռեվանշիստեներ» օրինակ Գագիկ Զահանգիրեան, որուն հետ բանտ նստած եմ ու գիտեմ, նախկին զինուորական դատախազ եւ երկրի բոլոր մեղքերուն մէջ մատ ունեցող, Ռոպերթ Քոչարեանի շտապի պետ, տարբեր ընտրութիւններու կեղծիքներու մէջ մինչեւ վերջ թաթախուած, եւ անհաւատալի էր, որ այս մարդը հիմա Լեւոն Տէր Պետրոսեանի կողքին կանգնած էր:

Հոն կանգնողներուն թէեւ կէսէն աւելին մաքուր մարդիկ էին, դժբախտաբար Տէր Պետրոսեանը հենուեցաւ կեղտոտներուն վրայ, որոնք իրեն «այո շէֆ», կ'ըսէին: Լեւոն Տէր Պետրոսեանը իմ «շէֆ»ը չէ, չէ եղած ու չի կրնար ըլլալ: Ոչ ոք իմ «շէֆիս չի կրնար ըլլալ» բացի ժողովուրդէն: Մենք տարբեր համակարգերու, տարբեր խմորներու մարդիկ ենք եւ այդ ժամանակ հաստատ հիմակուան հասունութիւնը չունէի, որ այդ մաքուր հատուածի հետ հաւաքուէինք ու որոշում կայացնէինք, տեսնելով որ մեղք է այսքան քրտինք, ամակ ու չարչարանք, որ ի վերջոյ մէկ մարդ նստի ու որոշէ, որ այսպէս պիտի ընեմ: Ժողովուրդը գիտենք ինչ կ'ուզէ, բայց այս մարդը չ'ընէր ինչ որ ժողովուրդը կ'ուզէ:

Լեւոնը գնաց դեսպաններուն հետ տեսնուեցաւ ու եկաւ շատ հետաքրքիր յայտարարութիւն մը ընելու, թէ իշխանութիւնները, գալով հրապարակ, սկուտեղի մը վրայ իրեն պիտի մատուցեն իշխանութիւնը: Կը պատկերացնէ՞ք, որ Քոչարեանը պիտի գայ Ազատութեան հրապարակ, սկուտեղը ձեռքը պիտի ըսէ «Պարոն Տէր Պետրոսեան, շատ ներողութիւն, այս աթոռը քոնն է, ես սխալմամբ նստած եմ, եկուր Բաղրամեան 26 երթանք, քեզի նախագահ կարգելու»: Այդ յայտարարութեան վրայ, ժողովուրդին մէջ շատ հիասթափութիւն եղաւ, առաջին անգամ ըլլալով: Այդքան ուրախութեան վրայ այդպիսի հիասթափութիւն ի՞նչպէս բացատրեմ: Մենք այս իշխանութիւններուն գիտենք ու գիտենք իրենք իրենցմէ ի՞նչ կը ներկայացնեն, ի՞նչպէս կարելի է այսքան միամիտ բան: Այդ ժամանակ այսպիսի բան մը կար, գաղտնի, հա՛, ինքը ինչ որ բան գիտէ բայց չի կրնար մեզի բացէ ի բաց ըսել: Աստուած գիտէ Ֆրանսացիներու, Գերմանացիներու, Անգլիայի, Ամերիկայի հետ ի՞նչ խօսած է: Ամէն մարդու ուղեղին մէջ այսպիսի շփոթ կար: Ու երբ լրագրողները կը հարցնէին, կ'ըսէի, այ մարդ, ոչ մի Ֆրանսացի, ոչ մի Եւրոպացի չի կրնար իրեն աջակցիլ: Ինքը միայն մէկ աջակից ունի՝ ժողովուրդը: Այս ժողովուրդին թողած, եթէ ինքը կ'երթայ ուրիշներէն, այսպէս ըսած, «դապրոս» (հաւանութիւն) ստանալու, ուրեմն ինքը չի կրնար առաջնորդել համաժողովրդական այս շարժումը:

Ասիկա ամսուն 27-ին ու 28-ին իր ըսածներն են: Օրէ օր իրավիճակը կը փոխուէր եւ ամսուն 28-ին արդէն ցանկալի չէր որ ես ելոյթ ունենայի: Երբ ես ամպիոն ներկայացայ, ինծի խօսափող չի տրամադրուեցաւ, որ շատ զարմանալի էր, որովհետեւ ես ժողովուրդին սիրելին էի: Ես խնդիր չունեցայ, հակառակ անոր, որ իրենց մէջէն միակն էի, որ մշտական հոն կը մնայի վրանիս մէջ ու հոնկէ կ'ելլէի ամպիոն ու ապա դարձեալ վրանս կը վերադառնայի: Իրենք միայն ամպիոնի մարդիկ էին, իրենք ժողովուրդի մէջ չէին, վերէն կը նայէին: Ժողովուրդը շատ լաւ կը տեսնէր ու կը զանազանէր այս բոլորը: Ես վերադարձայ վրանս ու մարդիկ սկսան գալ ու հարց տալ թէ ինչո՞ւ ելոյթ չեմ ունենար: Ես ալ պատասխանեցի, որ իրենք ամպիոնէն պէտք է կանչեն զիս: Քիչ ետք լսեցի, որ ամպիոնէն կը կանչեն զիս, ըսելով թէ ելոյթիս ժամն է, ինչո՞ւ չեմ ներկայանար: Բա՛, քիչ առաջ խօսափողը չէիք տրամադրէր, հիմա զի՛ս կը կանչէք. ըստ երեւոյթին, ժողովուրդի ուժով կ'ըլլար այդ: Հաւանաբար կը մտածէին, որ այս տղան մեզմէ չէ, կրնայ ելլել ու «բրովոքաթիվ» (սադրիչ-գրգռիչ) բան մը ընել, որ Աստուած գիտէ շարժումը ուր կրնայ տանիլ: Իրենք կը վախնային ատկէ: Բայց ինչպէս ըսի, մենք շատ հաւատարիմ գտնուեցանք, ըսելով թէ, քանի որ ինքն է առաջնորդը, թող ինք ալ որոշէ: Վաղը պատմութիւնը հենց իրեն է դատելու կամ փառք տալու: Ու կորաւ այդ պահը: Ամսուն 28-ին, իշխանութիւնները կրկին ատամները սրած էին:

(Շարունակելի-1)

OFFICE SPACE FOR RENT
IN PASADENA
ՎԱՐՁՈՒ ԳՐԱՍԵՆԵԱԿՆԵՐ
1060 North Allen Ave
Pasadena, CA 91104
Գրասենեակները վերանորոգուած
եւ յարմար վարձքերով
Հետաքրքրուողներէն հեռաձայնել՝
(626) 398-0506

ԳԱԼ ՏԱՐԻ ՎԱՆ՝ (14)

ՊԱՏԱՌԻԿՆԵՐ՝ ԵՐԱՁԱՅԻՆ ԱՐԵՒՄՏԱՀԱՅԱՍՏԱՆԷՆ ՄԵՐ ԱՐԱՐԱՏԸ

ՎԱՐԴԳԷՍ ԳՈՒՐՈՒԵԱՆ

Պայազիտը շատ մօտ էր Պարսկական սահմանին: Ինչպէս ըսի, Թրքական եւ պարսկական սահմանագծի պահակներու աշտարակները իրարմէ շատ հեռու չէին:

Ճաշի համար պասը կանգ առաւ արդիական ճաշարանի մը առջեւ: Կ՚անձրեւէր: («Կ՚անձրեւէ, տըղա՛ս...: Կ՚անձրեւէ՞ երբեմն հոգիիդ մէջ ալ,») Այո՛, մեր հոգիները թաց էին ի տես մեր վեհապանծ Արարատանման կորուստին: Այո՛, կ՚անձրեւէր նաեւ մեր մղկտացող հոգիներուն մէջ:

Մեր ձախ կողմը Թրքական զօրանոց մը կար ուր բազմաթիւ թանքեր, զինուորական կառքեր եւ զանազան մասշտապի թնդանօթներ տեսանք: Հակառակ որ նկարելը «եասսաք» (արգիլուած) էր, պասին մէջէն նկարեցինք: Կարծես այնքան ալ գաղտնի բան մը չէր, ճամբուն վրայ, միայն պարզ ցանկապատով մը շրջապատուած այս զօրանոցը զինուորական «գաղտնիքներ» չէր պարունակեր: Մեզմէ քանի մը հարիւր մետր վերը, բլուրին վրայ պարսկական սահմանային աշտարակները կը տեսնէինք: Պարսիկ պահակները շատ դիւրաւ կրնային տեսնել եւ նկարել զօրանոցը:

Համով-հոտով ճաշելէ ետք, մեկնեցանք մեր պանդոկը, գիշերելու:

Թուրքիոյ այս ծայրամասին մէջ, քիւրտերով բնակուած վայրի մը վրայ, բաղդատաբար «լաւ» պանդոկ մըն էր: Խումբին մէջէն ոմանք գանգատեցան որ պանդոկը շատ «արդիական» չէ, թէ երկրորդ յարկ ելլելու համար վերելակ չունի, թէ ընթրիքի համար ճաշարանը մեծ չէ... Մեր ուղեկցորդը ըսաւ.՝ թէ այս պանդոկը կու գան միայն անոնք, որոնք Արարատ լեռը պիտի մագլցին: Արդէն կարծեմ Հոլանտացի եւ Ռուս զբօսաշրջիկներ տեղաւորուած էին, որոնք յաջորդ առտու կանուխ պիտի սկսէին Լեռը մագլցիլ:

Շրջակայքի պարտէզները եւ մօտակայ շուկան պտտելէն ետք, վերադարձանք պանդոկ, հանգստանալու: Խումբ - խումբ հաւաքուած կը զրուցէինք եւ կ՚ափսոսայինք մեր կորուստներուն վրայ: Յաջորդ առաւօտ Արարատը արեւմուտքէն պիտի տեսնէինք: Շրջանի բնակիչներուն համար պարզ, ամէնօրեայ տեսարան մըն էր Արարատը, պարզ լեռ մը, ուր մարդիկ կու գային մագլցելու, իսկ ուրիշներ՝ մօտենալու, հողը համբուրելու, յուզուելու, բողոքելու:

Բնականաբար Թուրքերը Արարատի անունը փոխած էին «Ագրը Տաղ»ի, այսինքն «Ծանր Լեռ»ի:

Արարատ լեռը 16,854 ոտք (5165 մետր) բարձր է ծովու մակերեսէն: Ան Թուրքիոյ (կամ Հայկական Բարձրաւանդակին) բարձրագոյն կէտն է: Ունի 40 քմ. տրամագիծ: Ան հրաբխային լեռ մըն է: Մեծ հրաբուխները տեղի ունեցած են Ք.Ա. 2500 - 2400, 550 եւ Ք.Ե. 1450, 1783 եւ 1840 թուականներուն: Ան 1100 քա. քմ. տարածութեամբ, շրջանի ամենամեծ հրաբխային զանգուածն է: Արարատ լեռան ձիւնածածկ գագաթը 1970 - 2011 նուազած , կծկուած է 29 առ հարիւրով:

«Արարատ» բառը Ուրարտական ծագում ունի: Հայոց Արա Գեղեցիկ թագաւորի անուան հետեւողութեամբ նաեւ շրջակայքը կոչուած է «Այրարատեան Դաշտ»: «Մասիս»ը կոչուած է Հայկ Նահապետի թոռան թոռնիկին անունով: Հայկական դիցաբանութեան մէջ Արարատը մեր Աստուածներուն բնակավայրը եղած է: Պարսիկները մեր լեռը կը կոչէն «Քուհէ-Նուհ», այսինքն՝ Նոյի Լեռ:

Արարատ լեռան գագաթը առաջին նուաճողները եղած են Ֆրէտէրիկ Պարոտը եւ Խաչատուր Աբովեանը, 1829-ին: Այս առիթով, Խաչատուր Աբովեանը փոս մը կը փորէ լեռան գագաթին եւ դէպի հիւսիս նայող փայտեայ խաչ մը կը տնկէ հոն: Նոյնպէս, ան շիշի մը մէջ ձիւն կը լեցնէ եւ վար կը բերէ իր հետ, որպէս սուրբ ջուր:

1840-ի 7.4 Ռայխդը ուժգնութեամբ երկրաշարժին եւ հրաբուխին պատճառաւ 10,000 մարդ կը մահանայ, ներառեալ 1900 հոգի Ակոռի գիւղէն, որոնք ողջ-ողջ կը թաղուին հողասահանքի պատճառաւ:

Հայաստանէն միայն 20 քմ հեռաւորութեան վրայ մեր այս Լեռը, Համաշխարհային Առաջին Պատերազմէն ետք, 1923-ին , Լոզանի Դաշնագրով անցաւ Թուրքիոյ տիրապետութեան տակ:

Արարատը մեր Ազգային Ինքնութեան խորհրդանիշն է: Երեւանի երկնակամարին վրայ իշխող ան մեր Ազգային Սիմպոլն է: Հայ ժողովուրդի յաւերժութեան երաշխիքն է Ան:

Խորհրդային կարգերու ժամանակ, Թուրքիան կը բողոքէ Սովետական Միութեան Արտաքին Գործոց Նախարարութեան ըսելով որ Արարատ Լեռը Թուրքիոյ կը պատկանի եւ հետեւաբար Հայաստանը իրաւունք չունի զայն պատկերացնելու իր զինանշանին վրայ: Սովետական Միութեան Արտաքին Գործոց Նախարարը հարց կու տայ Թուրքերուն թէ լուսինը երբուընէ՞ Թուրքիոյ սեփականութիւնն է, որ ան իր դրօշակին վրայ զետեղած է զայն...:

Առժամաբար, բայց բաւական երկար ժամանակով, Արարատը կորսնցուցինք:

Երկուշաբթի Յուլիս 14-ի առաւօտեան, աղուոր նախաճաշ մը ընելէ ետք, տեղաւորուեցանք մասնաւոր փոքր պասերու մէջ Արարատի ստորոտը երթալու եւ անոր սրբազան հողը համբուրելու:

Օդը անձրեւոտ եւ փոթորկոտ էր: Կայծակները իրարու կը յաջորդէին: Լաւ պատսպարուած էինք: Մեր Ղրիմցի ուղեկցորդը ըսաւ.՝ որ ամէն առտու այս է վիճակը: Անձրեւ, փոթորիկ, հով, կարկուտ, կայծակ, որոտում, բայց ժամը 10:00-11:00 ի ատենները կը հանդարտի օդը եւ արեւը իր ջերմութեամբ կ՚ողոքէ Լեռը: Ինչ գիտնար մարդը որ Արարատը սաստիկ բարկացած՝ կը բողոքէր իր անտէրութեան վրայ: Ան իր իսկական տէրերը կը փնտռէր: Ով էր Թուրքը որ իր սեփականութիւնը կը նկատէր Արարատը: Ո՛չ: Լեռն անգամ գիտէր իր իսկական տիրոջ ո՛վ ըլլալը: Հայոց աստուածները կը փորձէին շանթահարել Թուրքիան, բայց աւա՜ղ, մենք անգամ մոռցեր էինք զանոնք: Իրենց բարկութեան եւ յուզումին մէջ կու լային անոնք: Եւ մենք, փոքր պասերով պիտի երթայինք մեր չԱստուածներուն ոտքը, ըսելու որ «ոչ, մենք չենք մոռցած ձեզ, մենք եկած ենք ուխտելու, որ ամէն բան պիտի ընենք օր մը ձեզ բերելու մեր սահմաններէն ներս, խոստանալու որ օր մը, անպայման, բիւրաւոր հայերս ձեռք-ձեռքի շուրջ պար պիտի բռնենք եւ մեր ոտքերու դոփիւններով պիտի արթնցնենք Վահագնը ու Անահիտը, Փոքր Միհրն եւ Հայոց Հին Աստուածները»:

Յովհաննէս Շիրազը արդէն ըսած էր մեզի՝

«Քեզ մեր սարն եմ կտակում,
որ դուրս բերես սեւ ամպից,
Որ տուն բերես շալակած արդարութեամբ մեր անիծ,
Ու կը բերես, իմ բալիկ, թէ-կուզ քո խեղճ թաթիկով
Մեր սարն այս կողմ շուռ կտաս՝ արդարութեանդ ուժն է ծով»:

Կարծես Արարատը պիտի գրկէր մեզ: Պասիկը կը սուրար: Մենք երկրորդ պասին մէջն էինք: Առաջին պասը քանի մը հարիւր մետր առաջ անցած էր: Մեր քիւրտ վարորդը, որպէսզի հասնի անոր եւ քիչ մըն ալ քարիւղ խնայէ, ճամբէն շեղեցաւ, կտրուկ գիծը առաւ եւ աւազուտ, քարքարուտ տեղերէ սկսաւ երթալ: Յանկարծ պասին անիւը խրեցաւ աւազներուն մէջ: Ինչ որ ըրինք, կարելի չեղաւ պասը ազատել: Բաւական մը մօտեցած էինք Արարատի անմիջական ստորոտին, բայց տակաւին մօտ երեքէն չորս մղոն կար բուն ստորոտին կամ առաջին վերելքին հասնելու: Ստիպուած սկսանք քալել: Շատեր բողոքեցին, մանաւանդ Տիկ. Աստղիկ Ղազարեանը, որ քալելու դժուարութիւն ունէր եւ գաւազանի օգնութեամբ կը քալէր: Աւելի քան երկու մղոն քալելէ ետք սկսանք յոգնութեան նշաններ ցոյց տալ: Կեցանք, խմբանկարներ եւ «սէլֆի»ներ սկսանք առնել եւ գիրար «մխիթարել» ըսելով որ այստեղէն աւելի լաւ կ՚երեւայ Արարատը...: Դոկտ. Կարպիս Տէր Եղիայեանը «Ասպարէզ» օրաթերթի օրինակ մը հանեց գրպանէն եւ զայն լայն բանալով նկարուեցաւ: Այդ ընելով արդեօք Կարպիսը ասպարէ՞զ կը կարդար Թուրքերուն, թէ ըսել կ՚ուզէր՝ «Նոր Օր» մը «Ասպարէզ»ը, «Մասիս»ին եւ հայկական միւս թերթերուն հետ, հոս պիտի տպենք...

Երբ մեր ուղեկցորդը տեսաւ որ շատ բարկացած ենք, որ պասը կէս ճամբան մնաց եւ մեզ մինչեւ ստորոտը չտարաւ, մեզ հանդարտեցնելու համար ըսաւ.՝ որ հոն, ճիշտ հոն որ մենք կ՚ուզէինք երթալ, քրտական գիւղեր կան զինեալներով լեցուն, որոնք ապստամբած են Թուրք կառավարութեան դէմ եւ թէ շատ վտանգաւոր է հոն երթալը: Քիւրտ զինեալները պատանդներ կը վերցնեն եւ շատ մեծ գումարներ կը պահանջեն: Մենք ալ հաւատացինք... Բայց եթէ ճիշդ էր ըսածը, աւելի լաւ, կ՚երթայինք եւ մարդոց քիչ մը դրամ կու տայինք իրենց «սրբազան առաքելութիւնը», երազը քաջալերելու:

Տիգրան եւ Պերճ Ղորղորեանները որոշած էին անպայման Արարատի առաջին բարձունքները մագլցիլ: Գացին: Մենք, տարիքով քիչ մը աւելի յառաջացածներս... մնացինք եւ այդտեղէն վայելեցինք Արարատը: Հրաբխային քանի մը փոքր քարեր հաւաքեցինք միասին տուն տանելու:

Կը նայիմ չորս կողմս: Ժայռեր, ժայռեր: Մեծ ու փոքր, սեւ ու կարմիր, իրարու վրայ դիզուած ժայռեր: Հա՜ա, հիմա հոս կը հասկնաս որ այս հայ ժողովուրդը ինչպէ՞ս դիմացեր է աւելի քան չորս հազարամեակներ, երբ պատմութեան ընթացքին բարբարոս ցեղերը շարան-շարան եկեր, ջարդեր ու անցեր են այս երկրէն: Ո՞ր ազգը կրնար դիմանալ անվերջ հալածանքներուն, անվերջանալի ջարդերուն, իրարայաջորդ հազարաւոր կողոպուտներուն, առեւանգումներուն, մանկահաւաքներուն: Ո՞ր ազգին մշակոյթը կրնար տոկալ իր վանքերուն կողոպուտին, ձեռագրերու հրկիզումներուն, տաճարներու կործանումին, մշակութային կոթողներու քանդումներուն: Ո՞ր ազգը կրնար դիմանալ իր քաղաքներուն եւ ոստաններուն հրդեհներուն, հրոյ ճարակ դարձած պալատներուն եւ ամրոցներուն փճացումին: Ո՞ր ազգը կը դիմանար բազմաթիւ մահափիւռ հրաբուխներու եւ սարսափազդու երկրաշարժներու աւերներուն: Մենք: Մենք, քանի որ մենք միայն Արարատ ունինք: Այս ժայռերուն մէջ հազարամեակներ ապրելէն, ժայռացեր ենք նաեւ մենք: Ժայռի պէս տոկուն: Արարատի պէս յաւերժ:

Կը նայիմ Արարատին դարձեալ: Կը խոնարհիմ անոր առջեւ: Արարատը բոլորովին տարբեր իմաստ ունի արեւմուտքէն դիտուած: Որքան վեհանիստ է ան Երեւանէն դիտուած, այնքան խրոխտ է ան արեւմուտքէն դիտուած: Արարատը ժպիտով կը նայի Երեւանին: Հոս՝ խոժոռ է ան եւ տխուր: Ըմբոստ է ան եւ բողոքարկու:

Ան կ՚ուզէ տուն երթալ: Ան կ՚ուզէ գրկուիլ ի՛ր հարազատներուն կողմէ:

Չես կրնար չընդվզիլ եւ չուխտել որ ամէն ինչ պիտի ընես Արարատին վերատիրանալու: Եւ մենք այդ ուխտը կատարեցինք:

Աւետիք Իսահակեանի բանաստեղծութիւնը յիշելով, անգամ մը եւս ոտքս գետին զարնելով, յուզումէս պայթող սրտէս աղաղակեցի.

Արարատի ծեր կատարին
Դար է եկել, վայրկեանի պէս,
Ու անցել:
Անհուն թըւով կայծակների
Սուրն է բեկուել ադամանդին
Ու անցել:
Մահախուճապ սերունդների
Աչքն է դիպել լոյս գագաթին
Ու անցել:
Հերթը հիմա քոնն է մի պահ.
Դու էլ նայիր սէգ ճակատին
Ու անցիր:

«Ու անցիր» բառը պէտք է ըլլար՝ «Կորսուի՛ր» կամ աւելի ճիշդ՝ «Սիկսի՛ր եղիր»:

Մեր պասը կարելի չեղաւ աւազախրումէն ազատել: Ուրիշ պաս մը բերին եւ խերով բարով վերադարձանք պանդոկ:

Յաջորդ առտու ճամբայ ելանք դէպի Անի:

Ձեր Ծանուցումները Վստահեցէք
«Մասիս» Շաբաթաթերթին
T: (626) 797-7680 F: (626) 797-6863
massis2@earthlink.net

ՀՐԱՅՐ ԲԱԶԷ ԽԱՉԵՐԵԱՆ «100-1915-2015»

ԱՍԱՏՈՒՐ ԿԻՒԶԵԼԵԱՆ

Այս է խորագիրը Հայոց Ցեղասպանութեան 100 ամեակին նուիրուած՝ աւելի քան 500 մեծադիր էջերէ բաղկացած գիրքին, որուն հեղինակն է անուանի լուսանկարիչ, մեծ հայրենասէր Հրայր Բազէ Խաչերեան: Գիրքը, որ ձօնուած է հեղինակի մեծ ծնողներուն, Պետրոս Պապեան Պապիքեանին, Կիւլիզար Զոլաքեանին, Ներսէս Խաչերեանին եւ Սուլթան Մամիկոնեանին, առաջին անգամ հրատարակուած է Հրայր Բազէ Խաչերեանի ծախսով: Երկրորդ հրատարակութիւնը հովանաւորած են Տէր եւ Տիկին Հայկ եւ Էլզա Տիտիզեանները , որոնք հեղինակին հասցէագրած իրենց շնորհաւորական խօսքին մէջ ըսած են. «Մեր սրտագին երախտագիտութիւնը կը յայտնենք Հրայր Բազէ Խաչերեանին իր երկար տարիներու անգուգական նուիրումին եւ յարատեւութեան համար, որուն շնորհիւ լոյս կը տեսնէ պատմական բացառիկ արժէք ներկայացնող այս գործը, որ մեծապէս պիտի գնահատուի հաւասարապէս հայ եւ օտար ընթերցողներուն կողմէ:

Թող մարդկութիւնը յիշէ բոլոր այն մարդիկ, կիներն ու երեխաները, որոնք իրենց կեանքը կորսնցուցին հայ ժողովուրդին դէմ գործուած ցեղասպանութեան ընթացքին. յուսանք որ պատմութեան մէջ նման արարքներ չեն կրկնուիր եւ մարդկութիւնը կը սորվի ապրիլ համատեղ, փոխադարձ յարգանքով խաղաղ ու ներդաշնակ մթնոլորտի մը մէջ, յաղթահարելով կրօնական, ցեղային եւ մշակութային ամէն տարբերութիւն»:

Հրայր Բազէ Խաչերեան ծնած է 1961ին: Մեծ հայրը ծնունդով զէյթունցի՝ փրկուած է ցեղասպանութենէն եւ հաստատուած Պէյրութ, Հրայրի ծննդավայրը: Բազէն 1984ին հեռացած է Լիբանանէն եւ հաստատուած՝ Գանատա: Ան առաջին անգամ Հայաստան այցելած է 1992ին եւ ականատես եղած՝ յանուն անկախութեան արցախահայութեան մղած հերոսական պայքարին: 1993ին, նախքան Արցախէն մեկնիլը, Հրայր վստահեցուցած է իր ընկերները, որ շուտով վերադառնալու է Ղարաբաղ իր աշխատանքը շարունակելու համար: Բայց Գանատա հասնելուն՝ բժիշկները քաղցկեղ յայտնաբերած են անոր թոքերուն մէջ...: Հակառակ մասնագէտներու հաւաստիացումին որ Հրայր միայն տասը օրուան կեանք ունէր այս աշխարհի վրայ՝ խաչին վրայ ըրած իր ուխտով գօտեպնդուած՝ ըստ որում ան խոստացած էր Աստուծոյ առողջանալու պարագային իր ամբողջ կեանքը նուիրել աշխարհացրիւ հայ եկեղեցիները լուսանկարելու աշխատանքին, Խաչերեան պայքարած է անողոք հիւանդութեան դէմ եւ յաղթահարած զայն, զարմանք պատճառելով բժշկական աշխարհին: Հաւատարիմ իր ըրած ուխտին՝ հայրենասէր արուեստագէտը բացի պատ-

մական Հայաստանէն եւ Կիլիկիայէն՝ շրջած է աւելի քան 40 երկիրներ, Միացեալ Նահանգներէն մինչեւ Աւստրալիա եւ լուսանկարած հայ եկեղեցիները: Ան իր աշխատանքը հրատարակած է 12 լուսանկարչական գիրքերու մէջ, որոնցմէ յիշենք՝ "Artsakh: A Photographic Journey" (1997), "Karabagh: 100 Photos for the Independence" (2002), "Yergir" (2005), "Armenian Ornamental Art with Armen Kyurkchyan" (2010), "Armenian Ornamental Script" (2012), "One Church, One Nation" (2013):

Բացի յիշեալ հրատարակութիւններէն, Հրայր Բազէ երկար տարիներ ի սփիւռս աշխարհի տուած է դասախօսութիւններ, կազմակերպած՝ ցուցահանդէսներ եւ համագումարներ :

« 100-1915-2015» կոթողային գրքին ներածականը գրած է Հայաստանի Ազգային Ակադեմիայի արտասահմանեան անդամ, մաթեմատիկոս եւ պատմաբան Քլոտ Մութաֆեան, որ 1980էն ի վեր ինքզինք նուիրած է հայ ժողովուրդի, Հայաստանի եւ դրացի երկիրներու պատմութեանց ուսումնասիրութեան: Մութաֆեան իր ներածականին մէջ, ի միջի այլոց գրած է.

"Արդէն 100 տարի անցած է այն իրողութենէն ի վեր որ, երկու տարուան վրայ երկարած ցեղասպանութիւն մը անհետացուց բազմահազար տարիներու հայկական ներկայութիւնը այն հողերուն վրայ, որոնք այսօր կը կոչուին Արեւելեան Անատոլիա, բայց որ էութեան մէջ՝ Արեւմտեան Հայաստան կը հանդիսանար: Այս ցեղասպանութիւնը շարունակուեցաւ տասնամեակներու վրայ, այդ ներկայութեան յիշողութիւնն անգամ ջնջելու ջանքերով":

Խաչերեանի գիրքին մէջ ներառնուած են նաեւ իտալացի յայտնի հայագէտ, հայագիտական գիրքերու հեղինակ, 2008էն ի վեր Հայաստանի Ազգային Ակադեմիայի անդամ, Փրոֆ. Կապրիէլլա Ուլուհոկանի Հայոց Լեզուն եւ Հայերը յօդուածը, ծանօթ գրող, հրապարակագիր, գրականութեան դասախօս Տիգրան Գուլումճեանի գրութիւնը հայ եկեղեցւոյ սրբազան մասունքներու մասին՝ ինչպէս նաեւ Երեւանի Պետական Համալսարանի Մշակութային Ուսմանց Բաժնի Վարիչ, Փրոֆ. Համլէտ Պետրոսեանի հայկական խաչքարերուն նուիրուած ուսումնասիրութիւնը:

"100-1915-2015" գիրքին մէջ համախմբուած են վերջին 17 տարիներուն ի սփիւռս աշխարհի Հրայր Բազէ Խաչերեանի առած լուսանկարները, որոնք նուիրուած են մեր հոգեւոր ու մշակութային արժէքներուն, վանքերուն, եկեղեցիներուն, բերդերուն, ամրոցներուն, դրամներուն, ասեղնագործ եւ ձեռագործ կտորներուն, եկեղեցական զգեստներուն, գորգերուն, արծաթագործ եւ ոսկերիչ հայ վարպետներու ձեռքով ստեղծուած արուեստի գործերուն, որմնանկարներուն, քանդակներուն, ձեռագրերուն, խաչքարերուն, քաղաքներուն, գիւղերուն եւայլն, եւայլն: Գրքին մէջ տեղ գտած լուսանկարներու մասին տրուած են հարկ եղած տեղեկութիւններն ու բացատրութիւնները անգլերէն, հայերէն եւ ֆրանսերէն լեզուներով:

Հեղինակը գրքի կողքին վրայ լատինատառ տպագրութեամբ դրած է ստորեւ նշուած տեղանունները, ընթերցողին ուշադրութիւնը հրաւիրելու համար պատմական Հայաստանի եւ Կիլիկիոյ մէջ իր այցելած վայրերուն վրայ.

ADANA. VAN. SIS. TOKAT. MALATYA. ANI. KUTAHYA. AGN. MOUSH. PALU. KARS. ARDAHAN. SASOUN. KHIZAN. ERZURUM. TRABIZON. SIVAS. ARARAT. KAYSERLI. TOMARZA. BITLIS. AINTAB. MARASH. KHARPERT. OLTU. URFA. ZAYTOUN.

Կրնայի դեռ երկար գրել գրքին մէջ ձեռք-ձեռքի բռնած առինքնող լուսանկարներու մասին, բայց այս եզակի հրատարակութիւնը ճշգրիտ բնութագրելու համար նոյնիսկ հարուստ հայերէն լեզուն պէտք եղած բառապաշարը չունի...: Անհրաժեշտ է տեսնել, զգալ եւ ապրիլ այդ հիասքանչ նկարները եւ անոնցմէ ճառագայթող մեր պապերու ոգին...: Ինչպէս ի տես Հռոմի աւերակներուն՝ մարդու երեւակայութեան մէջ կը վերակառուցուին տաճառներն ու պալատները իրենց անցեալի փառաւոր տեսքով, այնպէս ալ դիտելով Հրայր Բազէի նկարները, մեր մտքին մէջ կը վերակենդանանան հայոց եկեղեցիներն ու վանքերը, բերդերն ու ամրոցները, գիւղերն ու քաղաքները իրենց երբեմնի շքեղութեամբ: Բազէի նկարներուն մէջ խտացած են հայոց պատմութիւնն ու հայու հոգին...:

Մեր գրութեան հուսկ բանքը տանք հեղինակին.

«Այսօր այս աշխատութեան մէջ ահաւասիկ, հաւաքած եմ այդ ամէնը, ինչին ականատես եղայ աւելի քան 30 ճամբորդութիւններուս ընթացքին. քաղաքներ, գիւղեր, վանական համալիրներ, բնակավայրեր, կենցաղային իրեր, հմուտ վարպետներու ձեռքով պատրաստուած տարբեր իրեր, բազմազան ոճի եւ գոյնի ձեռագործ ծածկոցներ եւ այն ամէն ինչը որ զիս հետաքրքրեց եւ ուզեցի կիսել հանրութեան հետ: 20-րդ դարու առաջին եւ մարդկութիւնը միշտ ամօթով պահող Հայոց Ցեղասպանութենէն 100 տարիներ անց՝ մենք դեռ ցիր ու ցան ենք ամբողջ աշխարհով եւ սփիւռքի մէջ կ'ապրինք մեր երկրի կարօտով:

Այս գիրքը կը նուիրեմ Ցեղասպանութեան անմեղ զոհերու յիշատակին եւ կը յուսամ համեստ ներդրում մը կատարած ըլլալ հայկական անծայրածիր մշակոյթի եւ պատմութեան պահպանման եւ տարածման գործին մէջ: Հրայր Բազէ»:

«Ծառ ի պտղոյ իւրմէ ճանաչի» (ծառը իր տուած պտուղով կը ճանչցուի), ըսուած է Աւետարանին մէջ:

Վարձքդ կատար Հրայր Բազէ Խաչերեան: Երախտագիտութեամբ կը խոնարհիմ առջեւդ պատմական եզակի արժէք ներկայացնող այս գրքի իրագործման համար, որ երկար տարիներու նուիրեալ, յարատեւ եւ տքնաջան աշխատանքիդ արդիւնքն է:



ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ԿԵԱՆՔԻ ԴՐՈՒԱԳՆԵՐԻՑ

«Ժողովուրդ մը իւր թմրութենէն սթափեցնելու համար կնու յանդիմանութիւններն ու խորհրդածութիւններն ուշիմ եւ խոհեմ գրութիւններէն շատ աւելի օգուտ կ՚ընեն»:

ՅԱԿՈԲ ՊԱՐՈՆԵԱՆ

ՍՈՆԻԱ ՄԿՐԵԱՆ

2000 թիւն էր, ամիս՝ Յունուար: Քսան տարի էր, որ Լոս Անճելոսում էինք ապրում: Տօնում էր բոլոր Աւետիսների անուանակոչութեան օրը: Եւ քանի որ ընկերուհուս ամուսնու անունն Աւետիս էր, մեզ հրաւիրեցին իրենց տուն, որ ընտանեկան յարկի տակ միասին ուրախանանք:

Նրանց ընտանիքը արտագաղթել էր Հայաստանից մօտ մէկ տասնամեակ առաջ: Շատ ուրախ էինք, որ կարող ենք շարունակել մեր հին բարեկամութիւնը: Ի վերջոյ Վանաձորում եղել էինք համաքաղաքացիներ, ինչպէս որ մեր ծնողներն էին համաքաղաքացիներ եղել հինաւուրց Հալէպում: Հայի նոյն ճակատագիրն էր բաժին ընկել երկու ընտանիքներիս: Դա կարծես աւելի էր ամրապնդում մեր ունեցած կապը:

Ամուսնացանք գրեթէ նոյն տարին: Երեք զաւակ իրենք ունեցան, երեք էլ՝ մենք: Հիմա երեխաները երկուստէք մեծացել են: Մեր ամուսինները իրար վերաբերւում էին եղբայրների պէս, քանի որ ամուսինս եղբայր չունէր, իսկ Աւետիսի եղբօր ընտանիքը մնացել էր Հայաստանում (հարսը հայաստանցի հայ էր):

Տանտիրուհին՝ տիկին Ազատուհին, որը շատ շնորհքով կին էր, համադամ ուտելիքներով լի սեղան էր պատրաստել, իսկ աղջիկը՝ Լուսինը (որը մօրը չէր զիջում ունեցած շնորհքով) իր վրայ էր վերցրել հրուշակեղէնի պատրաստութիւնը:

Մեր զաւակներն արդէն համալսարանական էին: Ամէն մարդ պատմում էր իր առօրեայից:

Տղաները հետաքրքրութեամբ գննում էին աղջիկներին... Մթնոլորտն ուրախ էր:

Կերանք, խմեցինք, ուրախացանք, կենացներ առաջարկեցինք եւ, ինչպէս միշտ, յիշեցինք անցեալը, որը սիրելի էր: Այն կապուած էր հայրենիքի, եւ այնտեղ ապրած մեր երիտասարդ տարիների հետ, որը հիմա անցեալի գիրկն էր անցել անդարձօրէն:

Դրուագը, որ պիտի պատմեմ, զաւեշտական է, սակայն այն ծիծաղ առաջացնելուց աւելի տխրութիւն է պատճառում եւ մտածելու առիթ տալիս:

-Խմենք ազատ ապրելու կենացը,- առաջարկեց Աւետիսը, որը Հայաստանում ճարտարագէտ էր:

ԱՄՆ-ում, թէեւ մասնագիտութեամբ չէր աշխատում, բայց ուրախ էր, որ ազատ է ապրում: Բաժակները գնգացին: Յանկարծ Ազատուհին, կարծես մի բան յիշելով, ծիծաղը դէմքին ինձ դարձաւ եւ հարցրեց.

-Դու յիշո՞ւմ ես Վանաձորում մեր ռեստորան գնալը:

-Անշուշտ յիշում եմ: Ինչպէ՞ս կարելի է մոռանալ այդ ցաւոտ զաւեշտը:

Երիտասարդները մեր երկխօսութիւնը լսելով հետաքրքրուեցին.- Պատմեցէք՝ լսենք:

Ազատուհին ինձ դառնալով առաջարկեց. «Դո՛ւ պատմիր»:

-Պատմեմ,- ասացի: Թող երեխաներն էլ իմանան, թէ այնտեղ մեր ազատութիւնն ու արժանապատուութիւնը ինչպէ՞ս էր ոտնակոխւում:

Բոլորը յարմար տեղաւորուեցին իրենց տեղերում, իսկ ես սկսեցի.

-Մեր ամուսնութեան հինգերորդ տարում ես էլ ձեր մայրն էլ, արդէն երեք երեխաների մայր էինք: Մեր օրն անցնում էր ձեզ լողացնելով, լուացք անելով, սրբելով, մաքրելով, եփել-թափելով, արդուկելով, կեսուր մայրիկներին եւ նրանց զաւակներին գոհացնելով եւ դրսում տղամարդու պէս հաց վաստակելով: Ապա, եթէ ժամանակ մնար, մի քանի ժամ քնում էինք, որ ուժ հաւաքենք յաջորդ օրը դիմաւորելու: Այսպէս ապրում էինք անտրտունջ. նոյնիսկ ուրախ էինք որ աշխատանք ունենք, քանի որ այնքան կրթութիւնը չէինք ստացել, որ ծալենք մի կողմ դնենք. մանաւանդ որ մէկ հոգու աշխատանքով անկարելի էր ընտանիք պահել: Աշխատում էինք լարուած ժամացոյցի նման: Այս բոլոր պարտականութիւնները այնպէս պէտք է դասաւորէինք, որ մէկը միւսին չխանգարէր: Բարեբախտաբար Սով. Միութիւնում ծննդաբերող մայրը չորս ամսուայ վճարովի արձակուրդ էր ունենում, որը մեզ շատ էր օգնում:

Այդ ժամանակ լուացքի մեքենայ չկար: Երեխաների շորիկները ձեռքով էինք լուանում: Զորացնելիք մեքենայ չկար. դուրսն էինք փռում: Ձմռանը փռուած լուացքը սառչում էր: Կիսաչոր լուացքը պէտք է արդուկելով չորացնէինք, որ շորիկ հասցնենք:

Ամուսնութեան 6-րդ տարում մի գեղեցիկ օր, մեր 3-րդ յարկի բնակարանի պատուհանից, երբ ժամանակ ունեցայ դիտելու շրջապատը, աչքս ընկաւ դիմացի անտառապատ բլուրներին եւ առիթ ունեցայ հիանալու այդ գեղեցկութեամբ: Նոր անդրադարձայ, թէ ինչի՞ց եմ զրկուել: Սա՛ առանց դոյզն չափազանցութեան:

Երիտասարդները, որ պատրաստուել էին լսելու աւելի ուրախ պատմութիւն, անհամբեր ասացին. «Բայց ո՞ւր մնաց ծիծաղաշարժը»:

-Գալիս եմ դրան: Մի անգամ, երբ առիթ եղաւ ձեր մօր հետ հանդիպելու, խօսեցինք մեր մտահոգութիւններից, եւ ես պատմեցի իրեն իմ վերոյիշեալ փորձառութեան մասին: Նա էլ իր առօրեայից պատմեց եւ որոշեցինք, որ այսպէս չի կարելի շարունակել ապրել. առանց ընդմիջման, առանց հանգստի, առանց փոքրիկ զուարճալի ժամանցների եւ որոշեցինք մեր «բողոքը» յայտնել մեր ամուսիններին: Ասացինք որ մենք իրենցից ակնկալում ենք մի քիչ աւելի ուշադրութիւն: Անշուշտ նրանք էլ ընդունեցին այդ անառարկելի ճշմարտութիւնը եւ խոստացան որ յաջորդ կիրակի զոյգերով, այսինքն չորսով, առանց փոքրերի, դուրս կը գանք ռեստորանում ճաշելու եւ լաւ ժամանակ ունենալու: Երեխաների հոգատարութիւնը պիտի յանձնէինք մեր քոյրերին:

Ոչ մէկս մեքենայ չունէինք: Պէտք էր ընտրել մի տեղ, որ մեզանից շատ հեռու չլինէր: Մեր տանից ոչ շատ հեռու քայլելով տասը րոպէ հեռաւորութեան վրայ, անտառն էր սկսւում: Նրա մուտքին մի փոքրիկ ճաշարան կար: Որոշեցինք այնտեղ ճաշել:

Եկաւ կիրակին. կէսօրուայ մօտ մամայենք մեզի եկան եւ չորսով հանդիսաւոր-ուրախ տրամադրութեամբ զբօսնելով՝ բռնեցինք անտառ տանող ճամբան: Հասանք, մտանք ռեստորան. այն հասարակ էր կահաւորուած: Աւելի ճաշարան էր յիշեցնում: Մենք ուրախ էինք: Զբաղեցրինք մի չորս տեղանոց սեղան պատուհանի մօտ, պատուիրեցինք ուտելիքը եւ զուարթ կատակներով ու ծիծաղով անկաշկանդ վայելում էինք նախուտեստները: Օրուայ առաջին այցելուները մենք էինք: Ճաշարանում, բացի մեզանից մէկը չկար: Այնքան լաւ էինք զգում, որ շնորհակալութիւն յայտնեցինք տղամարդկանց մեզ այստեղ բերելու համար: Եւ որ սա չպէտք է առաջինը եւ վերջինը լինի, որին, անշուշտ, իրենք էլ համաձայն էին:

Կէս ժամ չէր անցել, երբ ճաշարան մտաւ տղամարդկանց մի մեծ, աղմկոտ խումբ (7-8 հոգի) եւ մեծ մասը սեւ կոստիւմներով: Յայտնի էր, որ բարձրաստիճան մարդիկ էին, ինչպէս իրենք էին ասում «ախպեր տղերք» եւ, մշտական յաճախորդների ազատութեամբ, զբաղեցրին մէջտեղի մեծ սեղանը: Խումբն իրեն պահում էր տանտիրոջ նման եւ, մէկ-մէկ, խեթ հայեացքով նայում էին մեր փոքր խմբի կողմը եւ կարծես ասել ուզէին. «Սրանք ովքե՞ր են»:

Եկուորներին խաչ մատուցեցին. օղու շշերը փոխանցւում էին մէկից-միւսին:«Սաղ ըլնես ախպեր ջան» ասում ու օղին քաշում էին գլուխները: Տասը րոպէ էլ չէր անցել խումբն աւելի աղմկոտ դարձաւ, փողկապները թուլացուեցին, աչքերը պղտորուեցին, օդը դարձաւ հեղձուցիչ՝ ծխախոտի ծուխից: Եւ ահա նրանցից մէկը աթոռը շրջեց դէպի մեզ, իր կարմրած աչքերով գննեց եւ համոզուելով, որ ախպար ենք (դա դժուար չէր գուշակել մեր պահուածքից եւ հագուածքից), չգիտես ինչո՞ւ իրեն իրաւունք վերապահեց իր վաւաշոտ հայեացքով նայել դէմքիս: Նա ինչ որ բան էր մրթմրթում քթի տակ: Մեր տղամարդիկ մէջքով իրենց էին նստած եւ չնկատեցին այս ոտնձգութիւնը: Մարդու կողքին նստած ընկերը քաշեց թեւից, որ շրջուի դէպի իրենց սեղանը (երեւի գիտէր ընկերոջ թուլութիւնը), բայց մարդը թեւը ետ քաշեց եւ յամառօրէն շարունակում էր նայել, շօշափել մեզ իր անպատկառ աչքերով եւ անվայել խօսքեր մրթմրթալ:

Ամէն անգամ որ նա մի բան էր ասում խումբն անզուսպ հրհռում էր:

Ուրախութիւնս յօդս ցնդեց: Դողը սիրտս ընկաւ: Եթէ մեր տղամարդիկ տեսնէին եւ լսէին, դանակ-դանակի պիտի անցնէր եղածը չէր վրիպել Ազատուհու ուշադրութիւնից: Մի կերպ հասկացրեցի, որ պէտք է հեռանալ կռիւը չփրթած:

-Աւետիս, այստեղ շատ աղմկոտ է: Մենք համ չենք առնում, ծխախոտի ծուխը խեղդում է, ելէք գնանք, -շարեցի իրար ետեւից:

-Մենք դեռ չենք կշտացել, ուտում ենք. դեռ սուրճ պիտի խմենք , - ասաց նա. ապա ուշադիր նայելով դէմքիս հարցրեց.

-Ինչո՞ւ ես սիրթնել, մի տեղդ ցաւո՞ւմ է:

-Ո՛չ, -ստեցի,- Մի քիչ ստամոքսս է ցաւում: Հերիք է, վեր կացէք գնանք. մեր տանը կը շարունակենք: Ես ձեզ սուրճ էլ կեփեմ: Ազատուհին էլ ձայնակցեց ինձ եւ, առանց իրենց համաձայնութեանն սպասելու, երկուսով վեր կացանք եւ փախչելու պէս դէպի ելքը գնացինք:

Ընտրութիւն չէինք թողել: Տղամարդիկ ակամայից, դրամը թողեցին սեղանին եւ հետեւեցին մեզ:

Դրսում, տեսնելով որ մեզ հետեւող չկայ եւ գիտակցելով որ մեծ փորձանքից ազատուեցինք, իրար նայեցինք եւ արագացրինք քայլելը. «Այս ի՞նչ փորձանք էր...»: Սարսափից դեռ դողում էինք:

Քայլում էինք թեւանցուկ, առջեւից. աւելի շուտ վազում էինք (զառիվար էր):

Տանը տղամարդիկ հարցրեցին, - Հը, մէկ էլ ե՞րբ ենք դուրս գալու:

Մեզանից ձայն չելաւ, բայց երկուսս էլ լաւ գիտէինք, որ նման վախ ապրելու մտադրութիւնը երբեք չունէինք:

-Ձեր ռեստորանը ձեզի մնայ: Մենք ուրախ կը լինենք մեր ունեցածով, -մրթմրթաց Ազատուհին, միայն ինձ լսելի ձայնով:

Եւ այնուհետեւ այլեւս չբողոքեցինք կեանքի ձանձրալի միօրինակութիւնից, - Վերջացրեցի ես:

Երիտասարդները, ծիծաղելու տեղ, գննում էին ամուսնուս եւ Աւետիսի դէմքերի արտայայտութիւնը, կարծես ասել ուզելով. «Բայց ինչպէ՞ս թոյլ տուեցիք...»:

Ամուսինս, կարծես արդարանալ ուզելով , հարցրեց.

-Բայց ինչո՞ւ չասացիք, որ ձեզ նեղացնում են:

-Ձեզ եւ մեզ խղճալով չասեցինք: Դուք երկուքդ էիք, իսկ իրենք եօթը զազազած-«հայրենակիցներ», որոնք սովոր չէին, որ իրենց մերժեն, որոնց համար միեւնոյնն էր մենք մեր ամուսիններով էինք, թէ ոչ՝ անտաշ վայրենիներ...

Ստեղծուած ծանր մթնոլորտը ցրելու համար այս անգամ ես վերցրի բաժակս եւ առաջարկեցի խմել ազատութեան համար:

Երեխաները, առանց պատկերացնելու մեր սրտի ցաւը, շրխկացրին իրենց զովացուցիչներով լցուած բաժակները:

Այս անգամ տղամարդիկ սկսեցին ծեծել իրենց ցաւոտ հարցերը:

-Մէկ խօսքով, -ասաց Աւետիսը,- Մեզ դուրս ղրկեցին հայրենիքից. մենք իրենցից ազատուեցինք, իրենք էլ՝ մեզնից:

-Ինչ օգուտ: Միամիտ հալէպցիները հիմա նորից են սկսել հայրենիք գնալ, տներ առնել:

-Ի՞նչ անեն, դրսի անապահովութիւնից լաւ է:

- Բայց նրանց էլ սկսել են նեղացնել,-շարունակեց ամուսինս. հալէպցի գործարարը գնացել է հայրենիք, փող է ներդրել եւ շինարարութիւն սկսել, որ խորտկարան բացի: Երեւանցի բարձրաստիճան մարդկանց լոթի-բոթի տղաները, որոնք պարապ-սարապ թրեւ են գալիս Երեւանի փողոցներում, մի քանի հոգով գնացել են - ներգաղթեալից հարկ են պահանջել:

- Եղբայր, ի՞նչ հարկ. դեռ խանութը պատրաստ չէ: Ես եկամուտ չունեմ, որտեղի՞ց հարկ վճարեմ:

-Հա՞, դու դրամ չունե՞ս, որ

Շար.ը էջ 19

«ԲՈՐՈՒՍԻԱՆ» ՅԵՏ ՉԻ ՄՆՈՒՄ «ԲԱՒԱՐԻԱՅԻՑ», ՀԵՆՐԻԽ ՄԽԻԹԱՐԵԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ԳՈԼԱՅԻՆ ՓՈԽԱՆՑՈՒՄԸ

Ֆուտպոլի Գերմանիայի առաջնութեան երրորդ տուրում «Բորուսիան» Դորտմունդում 3:1 հաշուով առաւելութեան հասաւ Պեռլինի «Հերտայի» նկատմամբ:

Հայաստանի հաւաքականի եւ «Բորուսիայի» կիսապաշտպան Հենրիխ Մխիթարեանը խաղը սկսել էր մեկնարկային րոպէներից: Սկզբնամսում տանտէրերն ունէին տարածքային ու խաղային նկատելի առաւելութիւն, սակայն «Հերտայի» հակագրոհներն աւելի վտանգաւոր էին ստացւում: «Բորուսիան» չէր կարողանում ստեղծել իրական գոլային պահեր, թէեւ 27-րդ րոպէին բացեց հաշիւը: Գերմանացի պաշտպան Մատս Հումելսի խփած գոլը միակն էր առաջին խաղակէսում, իսկ ընդմիջումից յետոյ դաշտի տէրերը կրկնապատկեցին առաւելութիւնը: 51-րդ րոպէին աչքի ընկաւ գաբոնցի յարձակուող Պյեր-Էմերիկ Օբամեյանգը: Խաղի մնացած ժամանակահատուածում գոլ խփելուն աւելի մօտ էր «Բորուսիան», բայց հաշիւը կրճատեցին հիւրերը: 78-րդ րոպէին կոտդիւուարցի յարձակուող Սալոմոն Կալուն գրաւեց Ռոման Բիւրկիի պաշտպանած դարպասը, բայց խաղի վերջնական հաշիւը ձեւակերպեցին տանտէրերը: Հենրիխ Մխիթարեանի փոխանցումից յետոյ փոխարինման դուրս եկած Ադրիան Ռամոսն աւելացուած ժամանակում գրաւեց իր նախկին թիմի դարպասը՝ վերջակէտ դնելով խաղին:

Մխիթարեանը խաղաց առանց փոխարինման, իսկ Թոմաս Տուխելի թիմը տարաւ երրորդ յաղթանակը եւ Միւնխենի «Բաւարիայի» հետ գլխաւորում է մրցաշարային աղիւսակը:

ԼՈՍ ԱՆՃԵԼՈՍԸ ԿԸ ՊԱՅՔԱՐԻ 2024Թ. ՕԼԻՄՊԻԱԿԱՆ ԽԱՂԵՐԻ ԻՐԱՒՈՒՆՔԻ ՀԱՄԱՐ

ԱՄՆ-ի Ազգային օլիմպիական կոմիտէի յատուկ յանձնախումբը հաւանութիւն է տուել Լոս Անճելէսի թեկնածութեանը 2024թ. ամառային Օլիմպիական խաղերի իրաւունքի համար պայքարում, հաղորդում է latimes-ը: Վերջնական յայտը պէտք է հաստատեն Լոս Անճելոսի քաղաքային իշխանութիւնները: Դրանից յետոյ ԱՄՆ-ի ԱՕԿ-ը յայտ կը ներկայացնի Միջազգային օլիմպիական կոմիտէն:

2024թ. Օլիմպիական խաղերի անցկացմանը յաւակնում են Հռոմը, Փարիզը, Համբուրգը եւ Բուդապեշտը:

Լոս Անճելոսը Օլիմպիական խաղեր ընդունել է նաեւ 1932-ին եւ 1984-ին:

ՈՒՍԷՅՆ ԲՈԼԹԻ ՊԱՏՄԱԿԱՆ ՆՈՒԱՃՈՒՄԸ



Ճամայկացի արագաւազորդ Ուսէյն Բոլթը դարձաւ աշխարհի 11-ակի ախոյեան: Պեկինում ընթացող աթլետիկայի աշխարհի առաջնութիւնում 100 եւ 200 մեթր վազքի աշխարհի ռեկորդակիրը Ջամայիկայի հաւաքականի կազմում ոսկէ մետալ նուաճեց նաեւ 4 եւ 100 մեթր փոխանցումավազքում:

Վեցակի օլիմպիական ախոյեանը Փեկինում ախոյեանի տիղտոսը նուաճել էր նաեւ 100 եւ 200 մետրում՝ 2 վազքատարածութիւններում էլ Լոս Անճելէսը կը պայքարի 2024թ. Օլիմպիական խաղերի իրաւունքի համար յաղթելով իր գլխաւոր մրցակից Ջաստին Գեթլինին (ԱՄՆ):

Երկրորդ արդիւնքը գրանցեցին ամերիկացիները, որոնք որակազրկուեցին եւ մնացին առանց մետալի:

29-ամեայ Ուսէյն Բոլթը պատմութեան առաջին աթլետն է, որին յաջողւում է 3-ական ոսկէ մետալ նուաճել աշխարհի 3 առաջնութիւններում (2009, 2013 եւ 2015թթ.): Միայն 2011-ին էր նա բաւարարուել 2 ոսկէ մետալով, քանի որ 100 մեթրում որակազրկուել էր կեղծ մեկնարկի համար, փոխանցում է Infostrada-ն:

ՀԱՅԱՍՏԱՆԸ ՎԵՑ ՄԵՏԱԼ ՆՈՒԱՃԵՑ ԿԼԻՉԿՕ ԵՂԲԱՅՐՆԵՐԻ ՄՐՑԱՇԱՐՈՒՄ

Ուկրաինայում կայացած Կլիչկո եղբայրների անուան միջազգային մրցաշարում բռնցքամարտի Հայաստանի երիտասարդական հաւաքականը նուաճել է մէկական ոսկէ, արծաթէ եւ չորս պրոնզէ մետալ: Յաղթողի կոչումը նուաճեց 56 կգ քաշային Հրայր Շահվերդեանը, ով եզրափակիչում առաւելութեան հասաւ ղազախ Երթուգան Զէյնուլինովի նկատմամբ:

Ոսկէ մետալին մօտ էր նաեւ 49 կգ քաշային Ալէն Դանիէլեանը, ով եզրափակչում հաւասար պայքարում պարտուեց ուկրանացի Մուրադ Սիրյոգեւին:

Կլիչկո եղբայրների անուան միջազգային մրցաշարում Հայաստանի հաւաքականը նուաճեց նաեւ չորս պրոնզէ մետալ: Պատուոյ հարթակի երրորդ աստիճանին կանգնեցին 52 կգ քաշային Վահէ Բաղալեանը, 60 կգ քաշային Սպարտակ Թամարեանը, 64կգ քաշային Արարատ Գիւլբանգեանը եւ 91կգ քաշային Դաւիթ Ջալոյեան, հաղորդում է ՀԲՖ մամուլի ծառայութիւնը: Հայաստանի երիտասարդական հաւաքականը մրցավայր էր մեկնել 8 բռնցքամարտիկով:

ԱՍՏՂԵՐԸ ԻՆՉ Կ'ԸՍԵՆ

ԽՈՅ Մարտ 20-Ապրիլ 19
Այս շաբաթ քու առաջնորդութեամբդ մեծ ծրագիր մը պիտի յաջողի, որու հետեւանքով մօտ ապագային նոր գործի առաջարկ մը պիտի ստանաս:
Ուրախութեամբ ընդունէ քեզի տրուած պատիւը եւ յարգանքը:
Բախտաւոր թիւերդ են: 7,18,21,24,30,41

ՑՈՒԼ Ապրիլ 20-Մայիս 20
Այս շաբաթ անակնկալներով բեղուն շաբաթ մը պիտի ըլլայ: Բախտի բերումով պիտի ծանօթանաս անձի մը հետ, սակայն մի խաբուիր անոր անկեղծ թուող արտայայտութիւններէն եւ հետեւէ սրտիդ ձայնին:
Զգուշացիր դատելէ շուրջիններդ, աւելի լաւ է որ կեդրոնանաս քու արարքներուդ եւ քայլերուդ վրայ:
Բախտաւոր թիւերդ են: 3,20,39,43,47

ԵՐԿՈՒՈՐԵԱԿ Մայիս 21-Յունիս 20
Այս շաբաթ պիտի ըլլայ ինքնաճանաչման շաբաթ մը: Ներքին իրավիճակդ մեծ փոփոխութիւններու պիտի ենթարկուի: Կարգ մը արարքներդ կրնան դատուիլ ծանօթի մը կողմէ, սակայն պէտք է համբերութեամբ դիմագրաւես զանոնք:
Մեծ որոշումներ առնելէ զգուշացիր:
Բախտաւոր թիւերդ են: 17,23,37,34,39

ԽԵՑԳԵՏԻՆ Յունիս 21-Յուլիս 22
Այս շաբաթ տանդ մթնոլորտը մեծապէս պիտի բարեփոխուի: փոխանակ ինքնագլուխ աշխատելու, գործակցէ եւ համաձայնէ գործընկերոջդ հետ:
Թոյլ մի տար ժխտական մտածմունքներուդ որ իշխեն ապրելակերպիդ վրայ:
Բախտաւոր թիւերդ են: 20,21,31,33,36

ԱՌԻԾ Յուլիս 23-Օգոստոս 22
Այս շաբաթ տանդ մթնոլորտը բարելաւելու համար, պայման է որ փոփոխութիւններ կատարես: Պէտք է հանդարտ եւ մեղմ ըլլաս:
Նիւթական պարագադ դասաւորէ եւ զգուշացիր աւելորդ ծախսերէ:
Բարիք մը պիտի ընես օտարականի մը:
Բախտաւոր թիւերդ են: 4,8,14,30,31

ԿՈՅՍ Օգոստոս 23-Սեպտեմբեր 22
Այս շաբաթ գործատեղիդ մէջ նիւթական անհամաձայնութիւն մը սպառնալիք կրնայ հանդիսանալ գործիդ յաջողութեանը: Ինքզինքդ զսպէ եւ համաձայնութեամբ լուծէ հարցը:
Ձուարճալի բնութիւնդ օգտագործէ սիրաշահելու շուրջիններուդ վստահութիւնը եւ կեանքի անակնկալները դիմագրաւէ ժպիտով:
Բախտաւոր թիւերդ են: 2,5,14,22,33

ԿՇԻՌՔ Սեպտեմբեր 23-Հոկտեմբեր 22
Այս շաբաթ այլազան մարդոց հետ գործի յարաբերութիւն պիտի ունենաս, ատենն է որ փաստես կարողութիւններդ, յաջող գաղափարներովդ եւ առաջնորդութեանբդ:
Կեդրոնացիր եւ սակայն մի մոռնար գնահատել աշխատակիցներդ:
Բախտաւոր թիւերդ են: 17,23,30,32,34

ԿԱՐԻՃ Հոկտեմբեր 23-Նոյեմբեր 21
Այս շաբաթ բարեգործութիւններդ պիտի աւելցնես եւ կարկինդ ընդլայնես մինչեւ որ հասնիս կարողութեանդ սահմանին:
Ապրելակերպդ ճիշդ ընթացքի մէջ շարունակելու համար, պէտք է ֆիզիքական ոյժդ հաւաքես եւ զօրացնես:
Բախտաւոր թիւերդ են: 10,20,30,33,43

ԱՂԵՂՆԱՒՈՐ Նոյեմբեր 22-Դեկտեմբեր 20
Այս շաբաթ մեծ ծրագրի մը առիթը պիտի ներկայանայ քեզի, զգուշացիր նիւթը արծարծելէ սուրճի բարեկամներուդ առջեւ, չ ըլլայ որ գաղափարներդ յափշտակեն իրենց օգուտին օգտագործելու:
Կողակիցիդ նկատմամբ անկեղծ գտնուիր, ունենալու համար առողջ ընտանեկան յարաբերութիւն:
Բախտաւոր թիւերդ են: 1,23,39,42,45

ԱՅԾԵՂՋԻՐ Դեկտեմբեր 21-Յունուար 19
Այս շաբաթ մեծ արշալոյս մը պիտի բացուի դիմացդ, թոյլ մի տար բազմազբաղ ժամանակացոյցիդ որ արգելք հանդիսանայ զայն իրագործելէ:
Թէեւ թերութիւններդ ակնթարթի մը մէջ չես կրնար բարեփոխել, սակայն անոնց ճանաչումը քայլ մըն է դէպի լաւը:
Բախտաւոր թիւերդ են: 8,9,11,17,27

ԾՈՎԱՆՈՅՇ Յունուար 20-Փետրուար 18
Այս շաբաթ անակնկալ առաջարկ մը որ քու կարելիութեանդ սահմաններէն վեր է, պիտի մտահոգէ քեզ: Մի վախնա՛ր, վասնզի քու թաքուն կարողութիւններուդ պատճառաւ յաջողութիւն պիտի գտնես:
Զբաղ շաբաթավերջ մը պիտի ունենաս:
Բախտաւոր թիւերդ են: 3,15,17,31,35

ՁՈՒԿ Փետրուար 19-Մարտ 20
Այս շաբաթ ամենափոքր պատահարները շատ դժուար պիտի թուին ըլլալ քեզի: Զղայնութեանդ մէկ րոպէին, զսպէ բերնէդ ելած խօսքերը՝ խուսափելու համար անոնց հետեւանքներէն:
Բախտաւոր թիւերդ են: 19,20,35,36,40

ԱՆԴՐԱՆԻԿԸ ՊԻՏԻ ՅԻՇԵՆՔ ԴԱՐԷ ԴԱՐ

Շարունակուածէջ 6-էն

Ուրեմն՝ Անդրանիկ զգաստութեան եւ սթափութեան հրաւէր էր նաեւ:

Տարօրինակօրէն Անդրանիկի անունը յոյս ու վստահութիւն կը ներշնչէր ժողովուրդին: Ան նմանեցաւ ապաւէնի եւ փրկութեան լաստի: Ինչպիսի՜ հրամանատարներ, գնդապետներ, համեստ զինուորներ ինքնակամ միացան անոր գունդերուն: Կամաւոր կերպով համալրեցին ջոկատները անոր: Աւելին՝ գաղթականներ, տարագիրներ եւ արմատախիլ եղած բազմութիւններ Անդրանիկի ընդմէջէն կը տեսնէին փրկարար բազուկը, ղեկավարը եւ ռահվիրան: Անոր անունն իսկ հմայք եւ հրապոյր էր յուսաբեկ եւ ուղեկորոյս խլեակներու: Հետաքրքիր է ընդգծել նաեւ Անդրանիկի այն խստապահանջութիւնն ու կարծրութիւնը, որ կը դրսեւորէր դասալիքներու, ներքին դաւաճաններու, պարտագանց եւ աւազակաբարոյ տարրերու նկատմամբ: Արդարամիտ առաջնորդը անհանդուրժելի կը գտնէր այլասերած եւ շահախնդիր տգրուկներու ներկայութիւնը իր շարքերուն մէջ: Հետեւաբար, Անդրանիկի թուրը շողշողաց հոն՝ ուր որ պէտք էր:

Անդրանիկ իր մահուան անկողինին մէջ ինչպէս ափսոսաց իր անցեալին համար. Շապին-Գարահիսարէն Սասուն, Պալքանեան ճակատներէն Մուշ ու Տարօն, Տիլման ու կամաւորական գունդեր, Էրզրում, Վան, Բաղէշ, Վասպուրական, Կարս, Զանգեզուր, Դիլիջան, Արցախ եւ Նախիջեւան հուրի եւ սուրի միջով անցած հերոսը շղթայուած առիւծի նման յաւերժօրէն ննջեց կարօտը սիրտին, արտաբերելով.- Աւա՜ղ, գործս կէս մնաց...: Ո՛չ. գործը կէս չմնաց, որովհետեւ՝ իր ոգիով եւ ուղիով կը շարունակուի մեր գոյերթը. սերունդներ գրասեղաններու ետին կը սորվին անոր մասին, ձեւ ու կերպարանք կը ստանան Անդրանիկի շունչով ու շուքով:

Մեր դպրոցական օրերէն չսորվեցա՞նք՝ իբրեւ արծիւ սաւառնող Անդրանիկ՝ սուրբ անունդ պիտի յիշուի դարէ դար:

Անտարակոյս, դուն անմահ ես դարեր ապրող Անդրանիկ Փաշա:

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ԿԵԱՆՔԻ ԴՐՈՒԱԳՆԵՐԻՑ

Շարունակուածէջ 17-էն

մեզ հարկ վճարես,- Ասել ու անխղճօրէն ծեծել են մարդուն, քիթ ու բերանը ջարդել ու հեռացել են: Մարդն ստիպուած է եղել ետ վաճառելու հողատարածքը եւ մեկնել է Արցախ:

-Այստեղ մարդիկ աւելի ազնիւ են, հայրենասէր, մարդասէր, կարգ ու կանոն կայ, -Պատմել է նա ընկերներին: Գիւղում գնել է մի այգի տնկելու չափ հողատարածք, տուն է շինել, ընտանիքին բերել է տուել Հալէպից եւ հիմա զբաղւում է այգեգործութեամբ:

Արցա՞խ... Հերոսների հող: Այսօր արցախցին պատրաստւում է նշել իր անկախութեան 24-րդ տարեդարձը: Անկախութիւն, որ նա գնեց իր սեփական արիւնով. եւ մինչեւ այսօր, գրեթէ ամէն օր, Արցախի եւ Ատրպէյճանի սահմանի վրայ զոհւում են մեր քաջազունները, քանի որ թշնամին դրժում է զինադադարի պայմանագիրը եւ լինում նախայարձակ: Մեր խիզախ երիտասարդները զոհւում են, որոնք կարող էին ընտանիք կազմել եւ հայրութիւն անել նորածին արծուիկների:

Է՜, հռովմայեցիք իզուր չեն ասել. «Ժամանակները փոխւում են, մարդիկ էլ նրանց հետ են փոխւում», - Փիլիսոփայեց ամուսինս եւ աւելացրեց դիմելով երիտասարդներին,

-Իշխանութիւնները գալիս են ու գնում, բայց հայրենիքը՝ մեր պապերի արեամբ սրբագործուած հողը մնում է: Մեր հայրենիքը շատ գեղեցիկ է, հինաւուրց (բաց երկնքի տակ թանգարան է) եւ լի է հանճարեղ մարդկանցով: Մեր հայրենիքը մեր հպարտութիւնն է: Փայփայեցէ՛ք եւ սիրեցէ՛ք այն:

****

Ցաւով պէտք է նշել, որ մինչեւ այսօր Հայաստանի մեծատունները, փոխանակ լայն բացելու իրենց ուռճացած գրպանները եւ ժողովրդի պէտքերին հասնելու, դեռ նախընտրում են հայերին մղելու արտագաղթի: Գործով ասում են «գնացէք» ճառելիս ասում են՝ «ետ դարձէք»: Մտածում են ի՞նչ անեն, որ ամերիկեան տոլարը տարբեր խողովակներով հոսի Հայաստան: Երբ ժողովրդի բարօրութեան համար ընդամէնը պէտք էր նոր աշխատատեղեր բանալ, կապել նրան հայրենի հողին, դարձնել ինքնաբաւ: Փոխանակ խնդիրը լուծելու արմատապէս, որ ժողովուրդը ամուր կանգնի իր սեփական ոտքերի վրայ՝ անթացուպեր են նրան առաջարկում: Փոխարէնը սնկի պէս բազմանում են բարեխնամ կազմակերպութիւնները, որոնք թէեւ օգնում են ծերերին եւ երեխաներին, բայց գործնականում խլում են ժողովրդի արժանապատուութիւնը: Երեխաները մնացել են մեծ մայրերի խնամքին, թէեւ իրենք խնամքի պէտք ունեն: Հայրերն ու մայրերը գնացել են երկրից դուրս՝ աշխատելու:

Դա նրանց մտահոգութիւնը չէ: Դեռ վերջերս, պետական այրերից մէկը առանց խպնելու ասաց. «Թողէք գնան. բողոքողները կը պակասեն»: Եւ նա ոչ միայն չհանդիմանուեց վերդասների կողմից իր այդ մտքի համար, այլ նշանակուեց աւելի բարձր պաշտօնի: Նշանակում է վերոյիշեալ մօտեցումը պետական մտածելակերպ է: Նրանց միակ մտահոգութիւնն է, որ իրենք հանգիստ ապրեն՝ չլսելու տալով ժողովրդի բողոքի ձայնը: Իշխանութիւնը սնանկ է: Երկիրը աղէտի եզրին է:

Բարեբախտաբար ժողովուրդը, մանաւանդ երիտասարդութիւնը, աւելի հասուն է ու խիզախ, իրատես է ու խելացի: Ուրախալի է, որ նա նաեւ պահանջատէր է:

Իշխանութիւնը ուզի կամ ոչ, ուշ կամ կանուխ պէտք է հաշուի նստի ժողովրդի արդարացի պահանջի հետ: Թմբիրից արթնացած ժողովուրդը, երբ գիտէ թէ ի՞նչ է ուզում եւ միակամ է, իրենից տարերային ուժ է ներկայացնում եւ նման հեղեղի, որ իր ճանապարհին սրբում -տանում է ամէն բան: Բայց երկրում, դժբախտաբար, ժողովուրդ չի մնացել: Եթէ ուզում ենք երկիրը փրկել սփիւռքը պէտք է նեցուկ կանգնի Հայաստանում մնացած 7-10 հազար հիւծուած երիտասարդութեանը:

Տխո՛ւր է. բայց սա է անպաճոյճ իրականութիւնը:

«Հայը պիտի մնայ անհանդարտ, անհանգիստ, չբաւարարուած, ըմբոստ, բարդոյթաւոր... այնքան ատեն, որ հիմնական եւ հոգեբանական պահանջները կը մնան անիրագործուած, կը հալածեն իր ներաշխարհը, եւ զինք կ'առաջնորդեն պոռոգկումներու»՝ (ՏՕՔԹ. ՅԱՐՈՒԹԻՒՆ ՍԱՂՐԵԱՆ):

ԱՌԱՋ ԴԷՊԻ ՍՄԿԿ՝ ՀՀԿ-ի ՊԱՏՄՈՒՃԱՆՈՎ

Շարունակուածէջ 6-էն

(տուեալ դէպքում Սերժ Սարգսեանի) իշխանութեան վերարտադրման հարցերի վրայ: Զէ որ արդէն իրավիճակ է փոխւում: Աւելի մեծ ու երկարատեւ իշխանութիւն է հաստատւում, ՀՀԿ գրասենեակից՝ որպէս կենտկոմի գլխաւոր քարտուղար:

Այսպիսով հաստատ քայլերով գնում ենք դէպի ՍՄԿԿ՝ Սովետական Միութեան Կոմունիստական Կուսակցութեան ուղղիով, ՀՀԿ՝ Հայաստանի Հանրապետական Կուսակցութեան պատմուճանով:

ՑԱՒԱԿՑԱԿԱՆ

ՊԵՏՐՈՍ ՄՈՒՇԵԱՆԻ մահուան տխուր առիթով (մահացած Թորոնթօ, Գանատա) Տէր եւ Տիկ. Վիգէն եւ Սալբի Մանկրեան իրենց խորագոյց ցաւակցութիւնները կը յայտնեն հանգուցեալի այրիին՝ Տիկ. Նուարդ Մուշեանին, դուստրին եւ ընտանեկան պարագաներուն:

Առ այդ $100 տոլար կը նուիրեն «Մասիս»ի բարգաւաճման ֆոնտին:

ՑԱՒԱԿՑԱԿԱՆ

ԹՈՐՈՍ ՃԷՐԷՃԵԱՆԻ մահուան տխուր առիթով Տէր եւ Տիկ. Վիգէն եւ Սալբի Մանկրեան իրենց խորագոյց վշտակցութիւնները կը յայտնեն հանգուցեալի ընտանեկան պարագաներուն եւ համայն հարազատներուն:

Առ այդ $100 տոլար կը նուիրեն «Մասիս»ի բարգաւաճման ֆոնտին:

ՑԱՒԱԿՑԱԿԱՆ

ԹՈՐՈՍ ՃԷՐԷՃԵԱՆԻ մահուան տխուր առիթով քոյրը՝ Մայրանուշ ՃԷՐԷՃեան իր խորագոյց ցաւակցութիւնը կը յայտնէ հանգուցեալի կնոջ եւ զաւակներուն եւ ընտանեկան բոլոր պարագաներուն:

Առ այդ $200 կը նուիրէ «Մասիս»ի բարգաւաճման ֆոնտին:

ՑԱՒԱԿՑԱԿԱՆ

ԹՈՐՈՍ ՃԷՐԷՃԵԱՆԻ մահուան տխուր առիթով քոյրը՝ Ագնէս Փշտիկեան եւ իր զաւակները իրենց խորագոյց ցաւակցութիւնը կը յայտնեն հանգուցեալի զաւակներուն եւ ընտանեկան բոլոր պարագաներուն:

Առ այդ $200 կը նուիրէ «Մասիս»ի բարգաւաճման ֆոնտին:

ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ

Այսու կու գանք մեր խորին շնորհակալութիւնները յայտնելու բոլոր անոնց որոնք անձամբ, հեռաձայնով, գրութեամբ եւ կամ փոխան ծաղկեպսակի նուիրատուութեամբ մասնակից եղան մեր սուգին, մեր հարազատներուն՝ Խորէն Ղազարեանի, Պօղոս Ղազարեանի մահերուն առթիւ:

Մասնաւոր շնորհակալութիւն Լոս Անճելոսի Հայաստանի փոխ հիւպատոս Տիար Վալերի Մկրտումեանին, Տօքթ. Մանուկ Ասատուրեանին, Ս.Դ.Հ.Կ. Արեւմտեան Ամերիկայի Վարիչ Մարմնի ատենապետ՝ Գաբրիէլ Մոլոյեանին, ինչպէս նաեւ Տիգրան Սարաֆեանին, Ս.Դ.Հ.Կ. Կեդրոնական Վարչութեան եւ շրջանի Վարիչ Մարմնի անդամներուն:

ՑԱՒԱԿՑԱԿԱՆ

ԹՈՐՈՍ ՃԷՐԷՃԵԱՆԻ մահուան տխուր առիթով SAHARA ճաշարանի տէրեր՝ Տէր եւ Տիկ. Գօգօ Գրիգորեան եւ Տէր եւ Տիկ. Կարօ Գրիգորեան իրենց խորագոյց ցաւակցութիւնը կը յայտնեն հանգուցեալի կնոջ, զաւակներուն եւ ընտանեկան բոլոր պարագաներուն, մասնաւորաբար Տէր եւ Տիկ. Յովակիմ ՃԷՐԷՃԵԱՆԻՆ, Տիար Ճոնի ՃԷՐԷՃԵԱՆԻՆ եւ Տէր եւ Տիկ. Նելսոն ՃԷՐԷՃԵԱՆԻՆ:

Առ այդ $100 կը նուիրեն «Մասիս»ի բարգաւաճման ֆոնտին:

ՑԱՒԱԿՑԱԿԱՆ

ԹՈՐՈՍ ՃԷՐԷՃԵԱՆԻ մահուան տխուր առիթով Տէր եւ Տիկ. Յովակիմ ՃԷՐԷՃեան իրենց ցաւակցութիւնը կը յայտնեն հանգուցեալի զաւակներուն եւ ընտանեկան պարագաներուն:

Առ այդ $200 կը նուիրէ «Մասիս»ի բարգաւաճման ֆոնտին:

ՑԱՒԱԿՑԱԿԱՆ

ԹՈՐՈՍ ՃԷՐԷՃԵԱՆԻ մահուան տխուր առիթով Տէր եւ Տիկ. Տիգրան եւ Վարդուհի Սարաֆեան իրենց խորագոյց վշտակցութիւնները կը յայտնեն հանգուցեալի ընտանեկան պարագաներուն եւ համայն հարազատներուն, մասնաւորաբար տէր եւ Տիկ. Յովակիմ ՃԷՐԷՃեանին: Այս առթիւ փոխան ծաղկեպսակի $100 տոլար կը նուիրեն «Մասիս»ի բարգաւաճման ֆոնտին:

ARMENIAN INDEPENDENCE DAY FESTIVAL

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽՈՒԹԵԱՆ ՕՐՈՒԱՆ

Փառատօն

Կազմակերպութեամբ Organized By

ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹԵԱՆ
NOR SEROUNT CULTURAL ASSOCIATION

SUNDAY SEPTEMBER 20, 2015

VERDUGO PARK GLENDALE

1621 Canada Blvd., Glendale, CA, 91206

Starting at 11:00 am

GENERAL SPONSOR

INNOVATIVE Designs & Manufacturing, Inc.

By TED & NORA KOROGHLIAN

Food Service Provided By:

Raffi's Market

and

Catering By Hovach & Ara

Live Music
Dancing
Art Work Exibition
Kids Games
Armenian Food

ԵՐԳ ՈՒ ՊԱՐ
ԱՐՈՒԵՍՏԻ ԳՈՐԾԵՐՈՒ
ԵՒ ԳԻՐՔԵՐՈՒ ՎԱՃԱՌՔ
ՓՈՔՐԵՐՈՒ ԽԱՂԵՐ
ՀԱՄԱԴԱՄ ՃԱՇԵՐ

FREE ADMISSION
ՄՈՒՏՔԸ ԱԶԱՏ

To reserve your vendor booth
please call Nor Serount Cultural Association
Ձեր կրպակները ապահովելու համար
Հեռաձայնեցէք Նոր Սերունդ Մշակութային Միութեան
(818) 391-7938

OFFICIAL SPONSOR

Car Pros Kia Glendale

SPONSORS

muse DENTAL GROUP

MISSION WINE & SPIRITS
Your Destination for Sophisticated Taste

Vrej Pastry

WELLS FARGO

KRADJIAN Importing Co., Inc.

Glendale West Pharmacy and Medical Supply

Sun Integration

ZONE CEDARLANE

UMPQUA B·A·N·K

Glendale Wholesale Electrical Supply

CAFE BRAVO

SARKIS

ՏԱՄԱՐԱ TAMARA

The Village Restaurant

TOWER IV

MEDIA SPONSORS

ՄԱՍԻՍ

www.massispost.com